

Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը

Մի քանի տարի առաջ ողջ հայությունը նշեց մեր պատմության մեջ բացառիկ դերակատարում ունեցած իրադարձության՝ ՄԵՍԲՈՂ ՄԱՇՏՈՑԻ հանճարեղ գյուտի 1600-ամյակը:

Դպրության Տիր աստծո պաշտամունքի հետ հայկական մեհենագրությունն էլ արգելվեց 301 թվականին: 405 թվականին՝ հայոց դպրության վերածնունդով՝ հայությունը վերադարձվեց սեփական գիր ու գրականություն ունեցող ժողովրդի պատիվը:

Մեր պատմության այս անգերագնահատելի իրադարձության 1600-ամյակի կապակցությամբ ներկայացնում ենք պատմական գիտությունների թեկնածու Արտակ Մովսիսյանի՝ Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը՝ ակնարկաշարով, որը հեղինակի վերջերս լույս տեսած՝ Հայկական մեհենագրություն՝ եւ Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը՝ ուսումնասիրությունների հանրամատչելի վերաշարադրանքն է:

Ակնարկաշարը նվիրվում է **Հայոց Դպրության Վերածննդի 1600-ամյակին**

Նախաբան

Հազիվ թե այսօր գտնվի որեւէ հայ, որին չհետաքրքրի Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտից առաջ հայոց մեջ գրի ու գրականության առկայության խնդիրը: Նախամաշտոցյան Հայաստանի գրի եւ դպրության հարցը հատուկ ուշադրության առարկա է եղել դեռեւս Մեսրոպ Մաշտոցի որոնումների ժամանակ:

Հայտնի է, որ երբ Մեսրոպ Մաշտոցը եւ կաթողիկոս Սահակ Պարթեւը ներկայացան ու իրենց մտադրությունը հայտնեցին Վռամշապուհ արքային, վերջինս նրանց հաղորդեց, որ տեղյակ է հայոց հին գրերի մասին, որոնք պահպանվել էին Դանիել անունով ասորի եպիսկոպոսի մոտ: Այդ գրանշանները, սակայն, ընդունակ չէին հաղորդելու հայոց լեզվի հնչյունային ողջ հարստությունը, եւ Մաշտոցը ձեռնամուխ եղավ նոր գրային համակարգի ստեղծմանը:

Հարցի նկատմամբ հետաքրքրությունը չմարեց ինչպես մաշտոցյան դպրության սկզբնավորման տարիներին, այնպես էլ հետագա դարերում: Ասվածի վկայություններն են Դանիել եպիսկոպոսի մոտ պահպանված գրերի վերաբերյալ մեզ հասած բազմաթիվ մատենագրական տեղեկություններն ու քննարկումները, որոնց կանդրադառնանք մեր ակնարկաշարում:

Հարցը շատ ավելի լայն քննարկումների ու բանավեճերի առարկա դարձավ նոր ժամանակների գիտության մեջ՝ հայագետներին բաժանելով երկու մասի, առանց ընդհանուր ընդունելության արժանացած մի տեսակետի ձեւակերպման: Մեր օրերում թեպետ բանավեճը չի շարունակվում (գոնե անցյալի կրքոտությամբ), չի կարելի ասել, թե այն վերջնական լուծում է գտել: Վերջին տարիներին հարցի քննարկումների ընթացքում, փոխարենը առկա ողջ նյութը հավաքելու եւ ուսումնասիրելու, ավելի հաճախ բավարարվում են տեսական դիտարկումներով եւ անցյալում արդեն բազմիցս չարչրկված մատենագրական

տեղեկությունների անպտուղ վերաքննարկումներով: Երբ կան բազմաթիվ, այն էլ հազարավոր փաստեր (արձանագրություններ), տրամաբանական չէ դրանք մի կողմ թողնելը եւ, փոխարենը, դրանց մասին պահպանված մատենագրական տեղեկությունները քննարկման նյութ դարձնելը. մանավանդ որ վերջիններից շատերը գրի են առնվել դարեր անց: Ուստի այս ակնարկաշարում, շեղվելով ավանդաբար ընդունված կարգից, մատենագրական տեղեկությունները կներկայացնենք միայն վերջում³ նախ փաստը, ապա միայն դրա մասին լրացուցիչ տեղեկությունը սկզբունքով:

Ակնարկաշարով նախ համառոտակի կանդրադառնանք Հայկական լեոնաշխարհում գրի ծագման եւ զարգացման վաղ փուլերին (նախագրային դրսեւորումներին), ապա կներկայացնենք նախամաշտոցյան Հայաստանում կիրառված կայացած գրային համակարգերն⁴ իրենց առանձնահատկություններով ու հուշարձաններով: Առանձին ակնարկներով կանդրադառնանք նաեւ Հայաստանից հայտնաբերված, սակայն օտարների կողմից թողնված արձանագրություններին:

Նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված գրավոր մշակույթի հուշարձաններն ըստ ծագման եւ պատկանելության կարելի է բաժանել երեք մեծ խմբի. ա) արձանագրություններ, որոնք կանգնեցվել են Հայաստանում ստեղծված եւ մեր նախնիների կողմից կիրառված պատկերագրային համակարգերով (դրանց մեջ կան նաեւ անհայտ իմաստով եւ առեղծվածային ծագումով նշանագիր հուշարձաններ), բ) օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրային համակարգեր, գ) Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ:

Հենց այսպիսի խմբավորմամբ էլ կմատուցվի առաջիկա շարադրանքը (հատկապես ուշադրություն կդարձվի տեղական առանձնահատկություններին):

Նշենք, որ նախամաշտոցյան Հայաստան՝ ընդհանրական անվան տակ ընդգրկված են ինչպես Հայկական լեոնաշխարհը, այնպես էլ հարակից այն տարածքները, որոնք մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գտնվել են հայկական թագավորությունների կազմում:

Գրի Ծագման Եվ Զարգացման Նախափուլը Հայկական Լեոնաշխարհում

Հայաստանի ժայռապատկերները⁵ վաղ պատկերագրության փուլի հուշարձաններ:

Մինչ օրս վերջնականորեն լուծված չէ ժայռապատկերների թվագրման հարցը:

Խորհրդային պատմագիտության մեջ առավել ընդունված էր ժայռապատկերների թվագրումը նոր քարի դարից (Ք.ա. VIII/VII հզ. - V հզ. կեսեր) մինչեւ Ք.ա. 1-ին հազարամյակի սկիզբն ընկած ժամանակաշրջանով:

Հարկ է նշել սակայն, որ նշվածից տարբերվում էին Ս. Սարդարյանի եւ Բ.Պիտրովսկու կարծիքները: Ս. Սարդարյանը մի քանի առավել հին ժայռապատկերներում նշմարում էր մամոնտի գծանկարներ, որոնք Հայաստանում վերացել էին հին քարի դարում: Դրանից

ելնելով^ա Ս. Սարգսյանը ամենավաղ ժայռապատկերները թվագրում էր հին քարի դարի վերջին փուլով (վերին պալեոլիթ, Ք. ա. 40-12-րդ հազարամյակներ): Դրանք առավել պարզ գծապատկերներ են^ա բավական խոշոր չափի (ի տարբերություն նոր քարեդարյան փոքր գծանկարների), ներկայացնում են որսի տեսարաններ, որոնցում մարդը շների օգնությամբ հետապնդում է վայրի ոչխարների, քարայծերի: Կենդանիների ընտելացումը տեղի է ունեցել նոր քարի դարում, ուստի, ըստ Ս. Սարգսյանի, այս տեսարանները կարող են վկայել ժայռապատկերների տվյալ խմբի^ա նոր քարի դարից ավելի վաղ կերտված լինելը:

Բ.Պիոտրովսկին, ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, որ որոշ ժայռապատկերանման նշաններ հանդիպում են միջնադարյան հուշարձանների պատերին, ենթադրում էր ժայռապատկերների միջնադարյան ծագումը:

Եթե կարծիքներից առաջինն այսօր էլ կարելի է քննարկել, ապա վերջին կարծիքը պարզապես ընդունելի չէ, քանի որ միջնադարյան հուշարձանների պատերին հանդիպող նշանները չի կարելի համարել ժայռապատկերներ: Ինչպես իրավացիորեն նկատում է Կ. Թոխաթյանը, դրանք հին, դասական ժայռապատկերներ չեն, այլ վկայությունն են միջնադարում ժայռապատկերման ավանդույթների հարատեման:

Արեւմտյան (նաեւ թուրք) ուսումնասիրողներն Արեւմտյան Հայաստանի ժայռապատկերները թվագրում են հիմնականում մեզոլիթյան եւ նեոլիթյան դարաշրջաններով^ա նշելով, որ դրանցից հնագույնները կարող են թվագրվել Ք.ա. XIII հազարամյակով, իսկ առավել նորերը^ա վաղ բրոնզի դարով (Ք.ա. IV-III հազարամյակներ):

Ժայռապատկերների թեմատիկ ընդգրկումը: Հայաստանի ժայռապատկերների թեմատիկ ընդգրկումը բավական մեծ է: Ժայռապատկերներում ներկայացված են տվյալ դարաշրջանի կյանքի հիմնական բնորոշ գծերը, ուստի պատահական չէ, որ մեզանում ժայռապատկերները հաճախ որակվում են իբրեւ քարե հանրագիտարաններ՝ կամ՝ քարեղեն մատենադարաններ:

Ժայռապատկերներում մեծ թիվ են կազմում վայրի եւ ընտանի կենդանիների գծանկարները: Ընդ որում, հստակորեն զանազանվում են ինչպես այսօր Հայաստանում գոյություն ունեցող, այնպես էլ դեռեւս նախնադարում ոչնչացած կենդանատեսակներ: Շատ են հանդիպում թռչունների գծապատկերները, անհատական եւ խմբակային որսի տեսարանները: Առկա են վարժեցման եւ բուծման, ինչպես նաեւ մենամարտի տեսարաններ^ա մարդ-գազան կամ երկու գազաններ:

Ժայռապատկերներում կան ծառերի պատկերներ, երկրագործական աշխատանքի տեսարաններ, որոնք թույլ են տալիս ուսումնասիրելու տվյալ ժամանակաշրջանի բուսականությունը եւ գյուղատնտեսությունը:

Ժայռապատկերներում նկատվում են կացարանաշինության ու ճարտարապետության որոշ տարրեր, կան քարտեզ հիշեցնող պատկերներ, որոնցով երբեմն կարելի է գտնել ջրերի ակունքները (ի դեպ, ժողովրդի մեջ մինչեւ վերջերս պահպանվել էին հավատալիքներ, իբր քարտեզանման այդ քարերի վրա խազված են թաքնված գանձերի ճանապարհները):

Ժայռապատկերների մի այլ խմբում առկա են կատարման բարձր մակարդակով, ճշգրտությամբ, ոճավորմամբ ու շարժունությամբ զարմացնող նկարներ, որոնց մեջ կարելի է տեսնել միջնադարի հայ մանրանկարչության եւ ժամանակակից արվեստի որոշ ճյուղերի արմատները:

Մեկ այլ, շատ կարեւոր խումբ են կազմում աստղագիտական բնույթի ժայռապատկերները, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակիչները դեռեւս նախնադարում ունեցել են բարձր մակարդակի աստղագիտական գիտելիքներ, կիրառել են լուսնային, լուսնա-արեգակնային եւ արեգակնային օրացույցներ: Խտական հաշվարկներից բացի (օրացույց եւ այլն), երկնային լուսատուների պատկերները հանդիպում են դիցաբանական սյուժե ունեցող ժայռապատկերներում:

Ժայռապատկերներում շատ մեծ տարածում ունեն գաղափարագրերը, որոնց մեջ որոշ ուսումնասիրողներ տեսնում են մաշտոցյան տառերի նախաձեւերը:

Ժայռապատկերներն իբրեւ գրի ուսումնասիրության առարկա:

Ժայռապատկերների ուսումնասիրության պատմությունից հայտնի է, որ առարկաներից գրանյութի անցնելուց հետո ստեղծված առաջին գրատեսակը պարզ նկարային գիրն էր՝ վաղ պատկերագիրը:

Համաշխարհային գրականության մեջ պատկերագրերի համար գործածվում է երկու տերմին՝ պետրոգլիֆ, եթե պատկերագիրը քանդակված է քարի վրա, եւ պիկտոգրամա, եթե պատկերագիրը նկարված է ներկով: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված վաղ պատկերագրության հուշարձանների ճնշող մեծամասնությունը պատկանում է առաջին խմբին՝ պետրոգլիֆներին: Երկրորդ խմբի հուշարձաններ են հայտնաբերվել Վանի շրջանում, վերջերս՝ նաեւ Քասախի կիրճի ձախ ափին, եղամավան նորաստեղծ ավանի տարածքում:

Վաղ շրջանի պատկերագրերում (նախագրային փուլում), երբ ամեն մի տեսարան կամ պատկեր հաղորդում էր որոշակի գաղափար՝ առանց հնչյունային տարրերի առանձնացման, կարելի է տարբերակել մտքի հաղորդման երկու հնարք, որոնցով մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են պատկերագրի զարգացման փուլերը:

Առաջինը նկարագրական-պատկերային հնարքի արտահայտություններն են, երբ առկա են մարդու, կենդանու կամ առարկայի զծապատկերները, իսկ նրանց հետ կապված ինֆորմացիան ներկայացվում էր լրացուցիչ զծերի պատկերների դիրքային փոփոխության եւ այլ միջոցներով: Այս հնարքը կիրառված է Հայաստանի գրեթե բոլոր ժամանակաշրջանների ժայռապատկերներում:

Երկրորդը նույնացնող-հիշողական հնարքով ստեղծված հուշարձաններն են, որոնցում տվյալ օբյեկտը ներկայացվում էր ոչ թե պատկերով, այլ իր ինքնությունը խորհրդանշող որեւէ պայմանական նշանի միջոցով: Այս հնարքի միջոցով առաջացան արհեստագործ վարպետների նշանները (որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Հայաստանում), զինանշանները եւ այլ տարբերանշաններ: Այդ հնարքը թույլ է տալիս նշել պատկերվողի

ինքնությունը նրա տոտեմի կամ այլ խորհրդանիշի միջոցով կամ ցույց տալ տվյալ առարկայի պատկանելությունը տվյալ անձին (սեփականության եւ այլ նշաններ): Պատկերի փոխարեն խորհրդանշանի կիրառումը տարածում է ստանում զարգացած պատկերագրության մեջ: Խորհրդանշանների կիրառումով դեռեւս չստեղծվեց հնչյունային գիրը, սակայն այն կարելուր նշանակություն ունեցավ գրի զարգացման ճանապարհին:

Հայաստանի ժայռապատկերները գրի զարգացման տեսանկյունից կարելի է բաժանել երկու հիմնական խմբի:

Առաջին խմբի ժայռապատկերներն ունեն գուտ նկարագրական-պատկերային բնույթ:

Դրանք պարզ նկարներ են, որոնցում ամեն բան պատկերվում է իր արտաքին տեսքով (նկ. 1): Երկրորդ խմբում, որն ավելի զարգացած աստիճան է, ի հայտ են գալիս խորհրդանշաններ (սիմվոլներ): Ընդ որում, երկրորդ խումբն իր հերթին բաժանելի է երկու ենթախմբերի, որոնցից առաջինում գերակշռում են պարզ նկարները (նկ. 2), իսկ երկրորդում³ խորհրդանշանները (նկ. 3-4):

Խորհրդանշանները Հայաստանի ժայռապատկերներում հանդես են գալիս սկսած Ք. ա. V հազարամյակից եւ բազմաթիվ գուգահեռներ ունեն համաժամանակյա հնագիտական իրերի վրա (ժայռապատկերների, համաժամանակյա հնագիտական իրերի նշանների համեմատությունը, նաեւ համադրումը Վանի թագավորության ու միջնադարի հայկական մատյաններում վկայված նշանագրերի հետ ժամանակին հանգամանորեն կատարել է Հարություն Մարտիրոսյանը):

Ժամանակագրական առումով այս երկու խմբերի միջեւ սահման դնելը ճիշտ չէ, քանի որ սկսած Ք. ա. V հազարամյակից³ երկու խմբերը հանդես են գալիս գուգահեռաբար:

Նշանագրեր մինչվաղբրոնզեդարյան պեղածո իրերի վրա: Այսօր արդեն ունենք զգալի քանակությամբ նյութեր Ք.ա. V-IV հազարամյակների Հայկական լեռնաշխարհի հնագիտական հուշարձաններից, որոնք թույլ են տալիս եզրակացնելու վաղ պատկերագրության բարձր մակարդակի գոյությունը եւ գաղափարագրության սկզբնավորումը նշված ժամանակաշրջանում:

Նշանագրեր մինչվաղբրոնզեդարյան պեղածո իրերի վրա: Առավել կարելուրում ենք այն հանգամանքը, որ սկզբնական այս շրջանում ի հայտ եկող նշանագրության բնորոշ գծերը շարունակվում են հետագա հազարամյակներում. այսինքն³ մենք գործ ունենք Հայկական լեռնաշխարհում գրային մտածողության ժառանգորդության հետ: Դա երևում է եւ՞ Թեղուտի գաղափարագիր-թվանշաններից (նկ. 1), քանի որ թվերի կետային նշումը Հայկական լեռնաշխարհի առանձնահատկությունն է Հին Առաջավոր Ասիայում (դրան անդրադառնալու ենք առաջիկա ակնարկներում), եւ՞ այլ հնավայրերի խեցեղենի գաղափարանշաններից (նկ. 2), եւ՞ կնիքագործության մեջ ավանդույթների (այդ թվում³ գաղափարագրության) շարունակականությունից:

Այսպիսով տեսնում ենք, որ Ք.ա. V հազարամյակից Հայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV-III հազարամյակներում:

Գրային Մտածողությունը Հայկական Լեռնաշխարհում Վաղ Բրոնզի Դարաշրջանում

Ք.ա. V հազարամյակից, ինչպես նշվեց, Հայաստանում վաղ պատկերագրության ներսում ձևավորվում է զարգացած պատկերագրությունը՝ գաղափարագրությունը, որը լայն տարածում է ստանում Ք.ա. IV-III հազարամյակներում: Այդ դարաշրջանի պատկերագրության արտահայտությունները հատկապես շատ են հանդիպում Հայկական Լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան (շենգավիթյան, կուր-արաքսյան) խեցեղենի վրա, իսկ Ք.ա. III հազարամյակի կեսերին Հայկական Լեռնաշխարհի սահմաններից դուրս այդ մշակույթի ներթափանցմանը զուգահեռ (հարավում մինչև Կիլիկիա, Սիրիա եւ Պաղեստին (Քիրքեթ-Կերակյան մշակույթ), հյուսիսում՝ Հյուսիսային Կովկաս) տարածում է գտնում նաև նշանագրված խեցեղենը:

Թեպետ Հայկական Լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան մշակույթի (այդ թվում՝ նշանագրված խեցեղենի) վերաբերյալ հսկայական նյութ է հայտնաբերվել եւ բազմաթիվ հրապարակումներ են եղել, այդուհանդերձ, այդ ժամանակաշրջանի նշանագրերը դեռևս չեն հավաքվել ու համակարգվել: Եղել են սուկ նշանագրերի եւ պատկերամոտիվների մասնակի ի մի բերման առանձին փորձեր: Օրինակ՝ Տ. Չուբինիշվիլին, հիմնականում օգտագործելով Ջավախքի տարածքից հայտնաբերված նյութը, առանձնացնում է դրանցից 42-ը, Ա. . Սագոնսան, առանց նշանների առանձնացման, կազմել է 324 միավորներից բաղկացած Մոտիվների կորպուս, Կ. Մարրոն Եփրատի վերին ավազանի վաղբրոնզեդարյան 256 իրերի վրա առանձնացնում է 108 նշաններ եւ նշանների տարբերակներ (տե՞ս աղ. 1), Պ. դը Միրոշեդիսն առանձնացնում է վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանի Քիրքեթ-Կերակյան խմբի խեցեղենի 21 մոտիվներ (նկ. 3) եւ այլն: Վաղբրոնզեդարյան խեցեղենի նշանագրերի ամբողջական հավաքումն ու համակարգված ուսումնասիրությունը մնում է Հայաստանի հնագիտության չլուծված խնդիրներից մեկը:

Նշենք, որ վաղբրոնզեդարյան խեցեղենի նշանագրերի կրկնակները մեծ քանակությամբ հանդիպում են նույն ժամանակաշրջանով թվագրվող ժայռապատկերներում եւ այլ հուշարձաններում: Դրանց ուսումնասիրության ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել Հ.Ա.Մարտիրոսյանը: Նա համադրելով, Հայաստանի ժայռապատկերներում եւ վաղբրոնզեդարյան խեցեղենի վրա հանդիպող նմանատեսք պատկերագրերը բիայնա-ուրարտական հիերոգլիֆների ու հայկական միջնադարյան մատյաններում վկայված նշանագրերի հետ, ցույց տվեց, որ դրանք հայաստանյան պատկերագրության ժառանգական զարգացման տարբեր փուլերն են:

Նրանից հետո այդ ուղղությամբ աշխատանքները չեն շարունակվել:

Անբավարար ուսումնասիրվածության պատճառով այստեղ չենք ներկայացնում վաղբրոնզեդարյան (հատկապես^ա խեցեղենի) նշանագրության բնորոշ առանձնահատկությունները (նշանների թիվը, գրության ուղղություն(ներ)ը, արձանագրությունների քանակն ու տեսակները, ծավալը, կառուցվածքը եւ այլ հատկանիշներ), որոնք եւս մնում են հետագա ուսումնասիրության նյութ:

Վաղբրոնզեդարյան նշանագրության հուշարձանների մեկնաբանությունների ու վերծանության ասպարեզում կատարված մեզ հայտնի աշխատանքները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները փորձել են մեկնաբանել միայն առանձին նշաններ կամ ամբողջական համապատկերներ (կոմպոզիցիաներ): Երկրորդ խումբը առայժմ ներկայացված է մեկ օրինակով. կատարվել է Օզնիի արձանագրության (նկ. 4) վերծանության մի փորձ, որը, սակայն, հեռու է համոզիչ լինելուց:

Ավելացնենք, որ գրի (զարգացած պատկերագրության) առկայությունը Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III հազարամյակի սկզբին հավաստվում է ոչ միայն հնագիտական գտածոներով, այլև օտար աղբյուրների վկայությամբ: Շումերական բնագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում այսօր հայտնի առաջին^ա Արատտա պետությունն ունեցել է սեփական գիր:

Հայաստանի Գծային Իրը

Հայաստանյան նշանագրերը Ք.ա. III հազարամյակի առաջին կեսին ձեռք են բերում ավելի գծային, քան նկարային տեսք: րերի զարգացման պատմությունից հայտնի օրինակաչափությունները ցույց են տալիս, որ պատկերագրերը նկարային բնույթը կորցնում եւ գծային նշանների են վերածվում դարերի (երբեմն^ա հազարամյակների) ընթացքում: Եգիպտական հիերոգլիֆները, օրինակ, պատկերային տեսքով կիրառվում էին Ք.ա. XXXII դարից սկսած (արագագիր տարբերակը^ա Ք.ա. XXX դարից), իսկ դրանց պարզեցված ձևերը^ա՝ դեմոտական գիրը, գործածության մեջ մտան միայն VIII դարում: Սա անուղղակիորեն վկայում է, որ իրավացի են այն հեղինակները, որոնք Հայկական լեռնաշխարհում գրի (զաղափարագրության) ծնունդը թվագրում են Ք.ա. V հազարամյակով:

Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսին, II հազարամյակում եւ I-ի սկզբին գծային գրերի այս համակարգն ավելի լայն կիրառություն է ստանում Հայաստանում: րային համակարգի կիրառությունը դադարում է լեռնաշխարհում Վանի թագավորության իշխանության տարածմամբ: Միայն Արեւելյան Հայաստանում անցյալ դարավերջից մինչ օրս հայտնաբերվել են 300-ից ավելի ծավալուն արձանագրություններ, որոնք դեռեւս համապարփակ ուսումնասիրության չեն ենթարկվել:

Գծային Գրային Համակարգի Ուսումնասիրության Պատմությունը

Ժամանակագրական հերթականությամբ ստորեւ ներկայացվող հնագիտական հայտնագործությունների համառոտ թվարկման ընթացքում մենք չենք հիշատակի այն առարկաները (զինատեսակներ, խեցեղեն զանազան ամանեղեն եւ այլն), որոնք կրում են միայն առանձին նշաններ կամ մենանշաններ:

Հայտնաբերման սկզբնական շրջանում Հայաստանի գծային գրերը ստացան 'առեղծվածային' որակումը: 'Առեղծվածային' համարված հուշարձաններից առաջին երկուսը (որքան մեզ հայտնի է) հրատարակվեցին 1910 թվին^ա Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից: Դրանք հայտնաբերվել էին Արաքս գետի աջ ափին գտնվող Ցոլակերտի բերդի մոտակայքում: Հաջորդն Արմավիրի արձանագրությունն էր: Ի տարբերություն նախորդների, որոնց թվագրումն անորոշ էր, վերջինս ուներ ժամանակագրման մի կարելուր փաստարկ. արձանագրություն կրող քարը շրջվել էր, որի վրա փորագրվել էին, ըստ մասնագետների, Ք.ա. III-1 դարերով թվագրվող հունարեն արձանագրություններ:

Հետեւաբար, նշանագրերի քանդակման ժամանակը պետք է նախորդեր նշված դարերին. ավելին ճշգրտելու համար տվյալներ չկային:

Այս արձանագրությունների ուսումնասիրության գործում կարելուր ներդրում ունեցավ Ի.Մեշչանինովը, որի աշխատանքներում ի մի բերվեցին մինչ այդ հայտնի հուշարձանները, առաջին անգամ հրատարակվեցին Ելենենդորֆի (անձակի մոտ) պեղումներից Ե. Ռյոսլերի (1899-1901թթ.) ու Յ.ուսմեյի (1930-1931թթ.) հայտնաբերած չորս առարկաների եւ Տանձատափի (Խոջալուի) դամբարաններից մեկի երկու քարերի նշանները: Երկու հնավայրի նյութերն էլ, ըստ Ի.Մեշչանինովի հնագիտական վերլուծության, թվագրվում են Ք.ա. I հազարամյակի սկզբով:

1960-ական թթ. հրատարակվեցին Ք.ա. II հազ. սկզբով թվագրվող մի շարք գրություններ Ջավախքից, որոնք վկայված էին ոչ թե առանձին իրերի վրա, այլ դամբարանների պատերին:

Մեծամորի ժայռագիր արձանագրությունների 27 պահպանված բեկորները, որոնց մասին մամուլում տեղեկություններ էին հայտնվել դեռեւս 1913թ., ամբողջությամբ հրատարակվեցին միայն 60 տարի անց: Ժայռագիր նշանների վերաբերյալ Կ.Մկրտչյանը նշում է.

'...հատկանշական է նրանց զգալի մասի նմանությունը եւ շուրջ 17 նշանի նույնությունը հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվող նշանագրերի եւ Վանի թագավորության շրջանում սեպագրի հետ զուգահեռ օգտագործված նշանագրերի հետ: Այս առումով Մեծամորի ժայռագրերը կարող են հատուկ ուսումնասիրության նյութ դառնալ': Ցավոք, հիբրավի մեծ կարեւորություն ունեցող այս հուշարձանները մինչ օրս չեն դարձել հանգամանալի ուսումնասիրության առարկա:

Ժամանակին մեծամորյան նշանների վերծանության մասին մի շարք հրապարակումներ կատարեց Ս.Այվազյանը^ա դրանք համարելով 'հայասական արձանագրություններ', ինչը սուր քննադատության ենթարկվեց Բ.Պիոտրովսկու կողմից: Պիոտրովսկին մատնանշում էր, որ

դրանցից շատերը արաբական քուֆի գրեր են: Այս հարցում որոշ պարզություն մտցնելու նպատակով փորձեցինք կազմել մեծամորյան ժայռագրերի նշանացանկը^ա ընդգրկելով միայն ամբողջական պահպանված նշանները, եւ ստացանք ավելի քան 60 նշան (աղ. 1), մինչդեռ ո՞չ քուֆին, ո՞չ էլ արաբական որեւէ այլ գրատեսակ այդ քանակի նշաններ երբեւէ չի ունեցել:

Ժայռագիր արձանագրություններից բացի, Մեծամորի Ք.ա. II-ի հազարամյակների սահմանագծով թվագրվող մշակութային շերտից հայտնաբերվեց կավե նշանագրված մի տախտակ (նկ. 1), որը, հավանաբար, ծառայել է իբրեւ հմայիլ:

Մեծամորի նյութերի հետ Կ.Սկրոչյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Թալինի ենթաշրջանի Կաքավաձոր գյուղի տարածքում գտնվող ջրի պաշտամունքին նվիրված չափազանց ուշագրավ ժայռափոր մի հուշարձան^ա համեմատելով այն մեծամորյան համանման փորագրությունների հետ: Դժբախտաբար այս կարելուր հուշարձանը եւս շարունակում է մնալ գրեթե անտեսված:

Խնդրո առարկա արձանագրությունների հավաքման վերջին փորձը (որքան մեզ հայտնի է) կատարել է Հ.Մարտիրոսյանը՝ Հայաստանի նախնադարյան նշանագրերը եւ նրանց ուրարտա-հայկական կրկնակները՝ (Ե., 1973) գրքում: Հեղինակն ի մի է բերել Ջավախքի, Ուրմիո լճի ավազանի, Ցոլակերտի եւ Արմավիրի վերոհիշյալ արձանագրությունները, որոնցից վերջին երկուսը թվագրել է Ք.ա. II հազ. վերջով եւ I-ի սկզբով: Նշված բնագրերը, ժայռապատկերների հետ միասին, Հ.Մարտիրոսյանը միավորում է որպես մեկ ընդհանուր^ա՝ նախնադարյան նշանագրեր՝ անունը կրող խումբ, ինչը քննադատելի է, քանի որ ժայռապատկերները նախագրային փուլի հուշարձաններ են, իսկ վերոհիշյալ արձանագրությունները վերաբերում են զարգացած գրային ժամանակաշրջանի:

Չնայած այն բանին, որ վերջին տասնամյակներում հայտնաբերված նյութերը կարող էին նոր լույս սփռել քննարկվող արձանագրությունների հետազոտման հիմնախնդրի վրա, Հ.Մարտիրոսյանից հետո դրանց հավաքման ու համակարգված ուսումնասիրության փորձ չի կատարվել: Խոսքը, մասնավորապես, Ապարանի ջրամբարի ափին^ա Քուչակ գյուղի մոտ գտնվող Ք.ա. XVIII-XIV դդ. թվագրվող հուշարձանների մասին է, որոնց 1986-87թթ. պեղումներից գտնվեցին շուրջ հինգ տասնյակ արձանագրված քարեր. դրանցից մի մասի վրա նշաններ էին արված երկու կամ երեք կողմից (ընդհանուր առմամբ^ա շուրջ 80 երես գրություն, մի քանիսը տե՞ս նկ. 1)։ Առաջին իսկ հայացքից ակնառու է Քուչակի արձանագրությունների կապը Տանձատափի (Խոջալուի) եւ Ջավախքի դամբանաքարերի հետ, ընդ որում, վերջիններն ունեն ավելի արխայիկ բնույթ: Քուչակի նշանները նկատելի ընդհանրություն ունեն նաեւ Ելենենդորֆի, Ցոլակերտի, Արմավիրի, Ուրմիո լճի ավազանի եւ Մեծամորի վերոհիշյալ հուշարձանների նշանների հետ (աղ. 1): Դրանցից մի քանիսի հետ տիպաբանորեն կապվում է նաեւ Ք.ա. II-ի հազարամյակների սահմանով թվագրվող Այգեշատի հնավայրից գտնված կավամաններից մեկի հատակին արված արձանագրությունը:

Հետաքրքիր արձանագրություն կա Վերին Նավեր հնավայրի միջին բրոնզի դարով թվագրվող դամբարաններից մեկի ծածկասալի վրա:

Ժամանակին Ախալցխայի շրջանի Ծուղորուք գյուղից Երեւան է տեղափոխվել գծային գրանշաններով, կամարաձեւ վերնամասով մի կոթողի վերին բեկորը, որը ներկայումս գտնվում է ՀՀ ԱԱ իտություն՝ թերթի խմբագրությունում:

Նախատեսվում է առաջիկայում այն փոխադրել Հայաստանի պատմության պետական թանգարան: Նման կոթողները շատ տարածված էին Հին Արեւելքում, նաեւ Հնագույն Հայաստանում. գծային գրերով նույնատիպ մի կոթող էլ գտնվել է Երնջատափից:

Թվարկվածներով չի սահմանափակվում Ք.ա. III եւ I հազարամյակներով թվագրվող գծային գրանշաններ կրող հուշարձանների ցանկը: Զգալի թիվ են կազմում արդեն հայտնաբերված, բայց առայժմ չհրատարակված հուշարձանները:

Դրանց թվում պետք է նշել Քուչակի դամբարանադաշտի բազմաթիվ չպեղված դամբարանները, որոնց քարերին առկա են գծային գրանշաններ. դրանք մնացել են Ապարանի ջրամբարի հատակին եւ բացվում են միայն ամռանը՝ ջրի մակարդակի իջնելու ժամանակ: Դեռեւս չեն հրատարակվել Երնջատափ գյուղից հայտնաբերված չափազանց ուշագրավ քարակոթողները: Մասնագիտական գրականությունից հայտնի է, որ նշանագրված քարակոթողներ կան Սպիտակի ենթաշրջանի ոգարան գյուղի նախաբիայնական հնավայրում, որոնք ուսումնասիրելու հնարավորություն առայժմ չենք ունեցել: Մեծ անակնկալներ կարող է բերել Լոռու մարզի Կոդես գյուղի մոտակայքում գտնված հուշարձանը, որի պարսպաշարին առկա են ներկայացվող գծային գրերը հիշեցնող նշաններ:

1996-1997թթ. հայ-իտալական համատեղ արշավախումբը հայտնաբերեց երկու քարեր, որոնք ենթադրաբար համարվում են երկար ժամանակ կորած համարվող մեհենագիր եւ հունարեն արձանագրություններով քարերի բեկորներ, որոնցից մեկի քանդակների կողքին կան նաեւ նշանագրեր:

Ժայռապատկերաբան Կ. Թոխայանի ընկերակցությամբ եղանք Կաքավաձորում եւ, վերոհիշյալ փորագրություններից բացի, ամրոցի արեւելյան կողմում, ուր առկա էին պաշտամունքային կառույցների հետքեր, նկատեցինք համանման այլ փորագրություններ եւս: Վերջիններս մի կողմից ակներեւաբար կապվում են Մեծամորի, մյուս կողմից՝ Կարմիր բերդի նախաբիայնական ժամանակաշրջանի նմանատիպ փորագրությունների հետ:

Հազվագյուտ հուշարձան է Շամիրամի՝ իր տեսակի մեջ առայժմ եզակի նշանակիր մենհիրը: Ընդ որում, մենհիրի նշաններն ակնառու նմանություն ունեն Վանից գտնված մի կարասի չվերձանված գրության հետ, որը Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը հրատարակել է 1931 թվին:

Մեր հնագետների հետ բանավոր զրույցների ընթացքում տեղեկացել ենք, որ նշվածներից բացի կան համանման մի շարք հուշարձաններ, որոնց ուսումնասիրությունը եւ լիակատար հրատարակությունը առաջիկա տարիների գործ է:

Նշենք, որ համանման կոթողներ կան նաեւ Արեւմտյան Հայաստանում: Վերջերս մեզ տրամադրվեցին Կարսի եւ Համշենի շրջաններում գտնվող մի քանի քարերի լուսանկարներ,

որոնց վրայի նշաններն ակնհայտորեն հիշեցնում էին քննարկվող գծային գրերը:
Դժբախտաբար, դրանց բոլորին սպառնում է ոչնչացման վտանգը:

Թուրքական կառավարության կողմից հայկական հուշարձանների ծրագրված ոչնչացումից զատ, թուրքերի ու քրդերի շրջանում չափազանց տարածված է Մեծ եղեռնի տարիներին հայերի թաքցրած գանձերի մասին առասպելը. ցանկացած նշանագրված քար նրանք ընկալում են իբրև գանձացույց, որին հաջորդած՝ գանձորոնումների՝ արդյունքում ոչնչանում են ինչպես այդ քարերը, այնպես էլ դրանց տակ երբեմն հանդիպող հուշարձանները: Այս տխուր իրականությունը Հայոց ցեղասպանության շարունակական դրսևորումն է, նաև՝ Մեծ եղեռնի արձագանքը թուրքերի ու քրդերի ժողովրդական հիշողության մեջ, ինչն այնքան փութաջանորեն շարունակում են ուրանալ պատմության թուրք կեղծարարները Գրային համակարգի բնութագիրը: Որեւէ անհայտ լեզվի ու նրա գրային համակարգի ուսումնասիրությունն սկսելու համար նախ անհրաժեշտ է պարզել այդ համակարգը բնութագրող մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ գրի ու լեզվի վերծանության համար: Դրանք վերաբերում են խնդրո առարկա լեզվի ու գրի հայտնիությանը եւ այլ լեզուների ու գրերի հետ ունեցած կապերին (եթե կան այդպիսիք), արձանագրությունների ժամանակագրությանը, տարածմանն ու այլ բնութագրիչներին (ծավալ, տեսակներ, կառուցվածք եւ այլն), գրային համակարգի տեսակին (ըստ նշանների թվի), գրության ուղղությանը եւ ներքին առանձնահատկություններին (գրանշանների ոճական բնույթին, օժանդակ նշանների, դետերմինատիվների, թվանշանների, կցագրման եւ այլնի գործածմանը), բազմալեզու արձանագրություններում մեզ հետաքրքրող լեզվի ու գրի առկայությանը, համաժամանակյա եւ այլ սկզբնաղբյուրներում վերծանությանը նպաստող լրացուցիչ ուրիշ տվյալների գոյությանը:

Հայաստանի գծային գրով արձանագրություններ աշխարհի որեւէ այլ վայրում չեն հայտնաբերվել: Այս գրային համակարգով թողնված որեւէ արձանագրություն դեռևս չի ընթերցվել, իսկ առանձին նշանների վերաբերյալ մեկնաբանությունները բավարար չեն այդ գրով արձանագրված լեզուն պարզելու համար:

Նախորդ ակնարկում համառոտակի ներկայացվեցին այն հնավայրերը, որոնցից գտնվել են գրակիր առարկաներ: Տեղադրելով դրանք քարտեզին^ա տեսնում ենք, որ գրային համակարգի տարածման սահմանը հյուսիսում ընդգրկել է Ջավախքը, հարավում^ա Ուրմիո լճի ավազանը, արեւելքում^ա Մեծ Հայքի Ուտիք եւ Արցախ նահանգների տարածքը, իսկ արեւմուքում նյութի սակավության պատճառով առայժմ հստակ սահմանագիծ չունենք:

Քննարկվող արձանագրություններից հնագույնները թվագրվում են Ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսով: րային համակարգի կիրառությունը դադարեց լեռնաշխարհում Վանի թագավորության իշխանության տարածմամբ, որն, ինչպես հայտնի է, պաշտոնական դարձրեց երեք նոր գրային համակարգեր:

Նշանակիր իրերի եւ արձանագրությունների բնույթի, նշանակության, կիրառման, ինչպես նաև նշանագրման տեխնիկայի վերաբերյալ տեղեկությունները, որպես օրինաչափություն,

օգտակար են լինում գրային համակարգի ուսումնասիրության, երբեմն նաև վերծանության աշխատանքներում: Ներկայացնենք նշանագրված առարկաների հիմնական խմբերը^ա իրենց առանձնահատկություններով: ա) Արձանագրություններ մենհիրանման եւ այլ տեսակի քարակոթողների վրա: Այս շարքի հուշարձաններից են Շամիրամի մենհիրը, Օուդրութից եւ Երնջատափից գտնված կոթողները: բ) Արձանագրություններ դամբանաքարերի վրա: Այս խմբի մեջ են մտնում Տանձատափի, Ջավախքի, Քուչակի, Վերին Նավերի դամբանաքարերը: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել դամբանների ծածկասալերին: գ) Արձանագրություններ քարերի (ժայռերի) վրա: Այս շարքի մեջ են մտնում Ցուլակերտի, Արմավիրի, Մեծամորի, Ագարակի, Կաքավաձորի (նաև չհրատարակված մի քանի այլ) արձանագրությունները: դ) Նշանագրեր խեցեղեն ամանների վրա: Այս խմբում կարելի է տարբերակել երկու ենթախումբ^ա ամբողջական արձանագրություններ եւ առանձին նշաններ (երբեմն^ա մենանշաններ) կրող խեցամաններ: Առաջին ենթախմբի մեջ են մտնում Ելենենդորֆից, Վանից եւ Այգեշատից գտնված գրակիր խեցանոթները: Երկրորդ խումբը, որն ի մի բերելու փորձ դեռևս չի արվել, անհամեմատ մեծ է (մի քանիսը տե՞ս նկ. 1, Քարաշամբից գտնված խեցեղենի պատկերները^ա նկ. 2): ե) Նշանակիր զինատեսակներ: Բացառիկ հետաքրքրություն ներկայացնող այս խմբում առկա են առանձին նշաններ կրող թրեր, կապարձներ, գոտիներ, մարտական կացիներ եւ այլն (մի քանիսը^ա նկ. 3): զ) Կնիքներ: Ինչպես զինատեսակների, այնպես էլ միջին, ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջաններից մեզ հասած կնիքների վրա հանդիպում են միայն առանձին նշաններ: ծային գրերով ամբողջական գրություններ կրող կնիքներ դեռևս չեն հայտնաբերվել: է) Հմայիլներ: Առայժմ հայտնաբերվել է գրակիր մեկ հմայիլ Մեծամորից:

Սակայն մեծ հավանականությամբ պետք է ենթադրել, որ հմայական նշանակություն ունեն նաև քննարկվող ժամանակաշրջանով թվագրվող բազմաթիվ կախիկներ, որոնց վրա պատկերված են առանձին գաղափարագրեր:

Մեր ունեցած արձանագրությունները կարելի է դասակարգել ըստ ծավալի եւ բովանդակային բնույթի: Տեսակավորման համար կարելուր չափանիշ է նաև արձանագրությունների կառուցվածքը: Քանի դեռ արձանագրությունները վերծանված չեն, մենք այս չափանիշներից կարող ենք անդրադառնալ միայն ծավալայինին: Ըստ այդմ, այսօրվա մեր ունեցած գրակիր հուշարձանները կարելի է բաժանել երկու մեծ խմբի^ա ծավալուն արձանագրություններ եւ առանձին նշաններ (երբեմն^ա մենանշաններ) կրող առարկաներ:

Առաջին խմբի արձանագրությունների թիվը, մեր ոչ վերջնական հաշվարկով, անցնում է 300-ից: Երկրորդ խմբի գրակիր առարկաների հաշվարկ դեռևս չի կատարվել, քանի որ չի կազմվել այս գրահամակարգի արձանագրությունների եւ մենանշանների լիակատար ժողովածու:

Դեռևս Ֆ. Շամպոլեոնի կողմից եզիպտական հիերոգլիֆիկայի վերծանության աշխատանքները ցույց տվեցին նույն բովանդակությամբ բազմալեզու արձանագրությունների անգերագնահատելի նշանակությունը անհայտ գրերի եւ լեզուների վերծանության գործում:

Դժբախտաբար, Հայաստանի գծային գրերով ոչ մի հուշարձան գուգահեռ այլ գրությամբ դեռևս չի հայտնաբերվել, ինչն ավելացնում է այս գրահամակարգի վերծանության բարդությունները: րային համակարգերի պատմության մեջ կարելի է հանդիպել գրության ամենատարբեր ուղղությունների² աջից ձախ, ձախից աջ, վերից վար, բուստրոֆեդոն (տողերը հորիզոնական² ամեն հաջորդը նախորդին հակառակ ուղղությամբ), շրջանաձև եւ այլն: Իժնչ ուղղություն է կիրառվել քննարկվող գրահամակարգում:

Այս հարցում մենք լիակատար անորոշության մեջ ենք. թեպետ խնդրո առարկա գրային համակարգով մեզ են հասել հարյուրավոր արձանագրություններ, այնուամենայնիվ, անհասկանալի են մնում դրանց գրության ուղղություն(ներ)ը:

Որոշ դեպքերում տպավորություն է ստացվում, որ գործ ունենք ոչ թե որոշակի ուղղությամբ դասավորված նշանների, այլ ամբողջական տեսարանների հետ, որոնցից պետք է ենթադրել ընդհանուր բովանդակությունը: րային համակարգի կարեւորագույն բնութագրիչներից է նրանում գործածված նշանների թիվը: Այն, որպես օրինաչափություն, ցույց է տալիս, թե գրային ինչ տեսակի համակարգ է մեր առջեւ: Սովորաբար, եթե նշանների թիվը չի անցնում 40-50-ից, ապա մենք գործ ունենք այբուբենի հետ: 50-ից ավելի, մի քանի հարյուր նշաններ ունեցող համակարգերը լինում են վանկային կամ բառա-վանկային: Իսկ հազարավոր նշաններ ունեցողները բառային (գաղափարագրային) համակարգեր են² առանց հնչունային նշանների կամ դրանց հազվադեպ կիրառմամբ (խթա-լուվիական հիերոգլիֆիկան, օրինակ, որը Ք.ա. XV-VIII դարերում կիրառվել է նաեւ Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում, բաղկացած է շուրջ 500 նշաններից, որոնցից հնչունային կիրառություն ունեն մոտ 70-ը):

Հայաստանի գծային գրերի դեպքում առայժմ հայտնի են շուրջ 400-500 նշաններ, սակայն դրանց վերծանված չլինելը դեռևս հնարավորություն չի տալիս որոշակիացնելու, թե դրանց մեջ կաժն հնչունային կիրառություն ունեցողներ, եւ եթե այո² քանիժսն են:

Ինչ վերաբերում է գրահամակարգի բնութագրին, ապա առավել հավանական է, որ այստեղ գործ ունենք բառա-վանկային գրային համակարգի հետ (չի բացառվում, բայց քիչ հավանական է, որ այն լինի գուտ բառային):

Ինչպես ժամանակակից որոշ լեզուներում, մի շարք հին գրային համակարգերում եւս որեւէ գոյական բնորոշելու համար դրանից առաջ դրվել է մեկ ուրիշը, որը դարձել է իր հաջորդի որոշիչը (ինչպես, օրինակ, կոնվերսիայի կանոնը անգլերենում): Սեպագրության մեջ նույն նպատակով լայնորեն կիրառվում են որոշարկիչ-գաղափարագրերը (ցուցիչները, դետերմինատիվները): Որոշարկիչ-գաղափարագրության դրսեւորում է կցագրումը. եթե առաջինում որոշարկիչ ու որոշարկյալ նշանները գրվում են առանձին, երկրորդում կցագրվում եւ հանդես են գալիս որպես մեկ բաղադրյալ գրանիշ:

Հայաստանի գծային գրով թողնված արձանագրություններում առաջին իսկ հայացքից ակնհայտ են կցագրման բազմաթիվ դեպքեր (տե՞ս նկ. 1): Դրանց ուսումնասիրությունը,

սակայն, պահանջում է ավելի զգուշություն. երբեմն դժվար է որոշելը³ մեծ կատարմամբ արված բարդ նշան է դա, թեք երկու կամ ավելի նշանների կցագիր:

Մեր հավաքած նշանները համեմատության մեջ դնելով Հին աշխարհի մի շարք գրերի հետ³ տեսնում ենք զգալի ընդհանրություններ, երբեմն³ զարմանք հարուցող նմանություններ, որոնք կարող են համարվել նաեւ նույնություններ:

Առայժմ ձեռնպահ ենք մնում մեր կազմած համադրական ցանկերը հրատարակելուց, քանի որ Հայաստանի գծային գրերը վերծանված չեն, իսկ առանց իմաստի պարզաբանման, միայն արտաքին տեսքից էլնելով եզրահանգումներ անելը կարող է տանել ոչ ճիշտ ուղղությամբ:

Նկատենք, որ ծագելով ժայռագրությունից³ այս գրանշանների մի մասը միջանկյալ դիրք է գրավում եւ կապող օղակ հանդիսանում ժայռագրության եւ բիայնա-ուրարտական մեհենագրության միջեւ (աղ. 1-ա եւ 1-բ), ինչը կարող է թույլ տալ դիտարկելու նախաերվանդունյաց Հայաստանի գրավոր մշակույթի զարգացումը ժամանակագրական անընդհատության մեջ:

Վերծանությանը խնդիրը: Անհայտ լեզուների ու գրերի վերծանությանը մեծապես նպաստում են դրանք կիրառած երկրի եւ ժողովրդի հոգեւոր ու նյութական արժեքների մասին տեղեկությունները: Բերի ուսումնասիրության պատմությունը հարուստ է բազմաթիվ դեպքերով, երբ առանց տվյալ երկրի ու նրա ժողովրդի մասին ունեցած հանգամանակի տեղեկությունների, էլնելով միայն գրանշանների արտաքին տեսքի վերլուծությունից³ կատարվել են միանգամայն սխալ եզրահանգումներ, եւ, ընդհակառակն, երբ այդ տեղեկությունները մեծապես նպաստել են վերծանության աշխատանքներին:

Թեպետ Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը (հատկապես Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արեւմտյան Հայաստանը) համակարգված հետազոտության դեռեւս չի ենթարկվել, բայց այսօր հայտնի հնագիտական նյութը թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել հնագույն այդ ժամանակաշրջանում լեռնաշխարհի ու նրա ժողովրդի, իշխանությունների, հավատալիքների, սովորույթների, տնտեսության, մշակույթի ու կենցաղի եւ այլ հարցերի վերաբերյալ: Սրանց մասին կան մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք անհրաժեշտաբար պետք է օգտագործվեն վերծանության աշխատանքներում:

Հայաստանի գծային գիրը նախկինում չի դիտարկվել որպես առանձին գրային համակարգ, հետեւաբար, չեն էլ կատարվել այդ համակարգի վերծանությանն ուղղված քայլեր:

Գրի Ծագման Եվ Զարգացման Նախափուլը Հայկական Լեռնաշխարհում Վանի Թագավորության Մեհենագրությունը

Նախաքրիստոնեական Հայաստանի գրավոր մշակույթի պատմության մեջ առանձնանում է Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) ժամանակաշրջանը, որի ընթացքում կիրառվել են երեք գրային համակարգեր. միջագետքյան սեպագիրը³ ասուրերեն, տեղական ոճի սեպագիրը³ բիայնական սեպագրության լեզվով եւ բնիկ հայաստանյան ծագում ունեցող մեհենագրերը (հիերոգլիֆները), որոնց վերծանությանն ու լեզվի խնդրին

հանգամանորեն կանրադառնանք այս հրապարակման մեջ՝ Ի տարբերություն առաջին երկուսի՝ Վանի թագավորության մեհենագրությունը քիչ է ուսումնասիրված:

Մեր ակնարկաշարում կփորձենք ի մի բերել խնդրո առարկա գրային համակարգին վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները, հավաքված նյութի հիման վրա, ըստ հնարավորին, տալ այդ համակարգի ամբողջական բնութագիրը, ներկայացնել վերծանության ուղղությամբ նախկինում եւ մեր կողմից կատարված աշխատանքը, ցույց տալ Վանի թագավորության մեհենագրության տեղը հայաստանյան պատկերագրության ընդհանուր համակարգում:

Ուսումնասիրության պատմությունը: Վանի թագավորության առաջին հիերոգլիֆակիր հուշարձանները հայտնի դարձան դեռևս XIX դարի երկրորդ կեսին, իսկ XX դարակազմի գերմանական արշավախմբի (Կ. Ֆ. Լեհման-Հաուպտ եւ Վ. Բելք) Թոփրաք կալեում 1898-99թթ. իրականացրած պեղումների արդյունքների հրատարակումով հիմք դրվեց հայկական մեհենագրության բիայնա-ուրարտական փուլի ուսումնասիրությանը: Այդ ժամանակվանից մինչև XXI դարասկիզբը նոր նյութեր են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհի ավելի քան 40 հնավայրերից (տե՞ս քարտեզում)՝ բային համակարգի ծագումը: Վանի թագավորության մեհենագրության ուսումնասիրությունը սկզբնավորվեց Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի հրապարակումներով, որն այն կարծիքին էր, թե տերության բնիկները կիրառել են սեպագրերը, իսկ հիերոգլիֆները գործածվել են բիայնական արքաների արեւմտյան արշավանքների ժամանակ բերված ռազմագերիների կողմից: Հետեւելով Կ. Ֆ. Լեհման-Հաուպտին՝ Լեոն, Ա. Քոուլին, Հ. Բոսերթը, Ա. Չիլինգիրոզյուն բիայնական հիերոգլիֆներին վերագրել են խեթական ծագում, իսկ Թ. Բարթն-Բրաունը դրանք համարում է Քնոսոսից (Կրետե կղզի) բերված եւ նմանեցնում է կրետե-միկենյան գծային B գրին:

Դեռևս 1930-40-ական թթ. արեւմտյան ծագման տեսակետին դեմ արտահայտվեցին մի շարք գիտնականներ: Ի. Ի. Մեշչանինովը ենթադրում էր, որ սեպագիրը եղել է միայն վերնախավի գիրը, իսկ հիերոգլիֆները գործածվել են ժողովրդի կողմից եւ ունեն տեղական ծագում: Քննելով Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի, Ի. Ի. Մեշչանինովի, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի հրատարակած եւ Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի հավաքած նյութերը՝ Խ. Սամվելյանը եզրակացրեց, որ Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել բնիկ եւ ինքնուրույն հիերոգլիֆ գրություն: Բ.Պիտտրովսկին եւս այն համարում է տեղական ծագում ունեցող եւ նեղ տնտեսական ու պաշտամունքային կարիքների համար գործածված: Բիայնական մեհենագրության հայաստանյան ծագման կողմնակիցներ են նաեւ մեհենագրերի նշանացանկեր ստեղծելու առաջին փորձերի հեղինակներ Լ.Բարսեղյանը եւ Ռ.Բարնեթը:

Հ.Մարտիրոսյանը, համադրելով բիայնա-ուրարտական հիերոգլիֆները Հայաստանի ժայռապատկերներում եւ վաղբրոնզեդարյան խեցեղենի վրա հանդիպող նմանատեսք պատկերագրերի ու հայկական միջնադարյան մատյաններում վկայված նշանագրերի հետ, ցույց տվեց, որ Վանի թագավորության մեհենագրությունը կապող մի օղակ է այդ երկուսի միջեւ եւ որ ժայռագրերը, ուրարտական հիերոգլիֆներն ու միջնադարյան նշանագրերը

հայաստանյան պատկերագրության ժառանգական զարգացման տարբեր փուլերն են (տե՞ս աղ. 1, որը կազմել ենք Հ. Ա.

Մարտիրոսյանի նյութերով):

XX դարի երկրորդ կեսում հայտնաբերված նյութերն ու կատարված ուսումնասիրությունները վերջնականապես հաստատեցին մինչ այդ արդեն հայտնված տեսակետը Վանի թագավորության մեհենագրության բնիկ հայաստանյան ծագման վերաբերյալ, ինչը ներկայումս ստացել է համընդհանուր ընդունելություն:

Արձանագրությունների ժամանակագրությունն ու տարածումը: Բիայնա-ուրարտական մեհենագրության հուշարձանները հանդիպում են Վանի թագավորության պատմության բոլոր դարերում: Ռ.Դ.Բարնեթն իր ուսումնասիրության մեջ, վկայակոչելով Ռ. Մերհավի կողմից հիերոգլիֆակիր գահի թվագրումը Մենուա արքայի ժամանակաշրջանով (Ք.ա. մոտ 810-786թթ.), նշում է, որ չկան ավելի վաղ թվագրվող արձանագրություններ: Այնուհետև նա մեծ վերապահությամբ առաջ է քաշում մի տեսակետ, համաձայն որի ուրարտական մեհենագրության ծագումը կարելի է հետ տանել մինչև Ք.ա. XIV դար:

Վանի մերձակայքից գտնված երկու բրոնզե թիթեղների արձանագրությունների մեր վերծանությամբ ընթերցվեցին երկու արքայանուններ, ինչից պարզ դարձավ, որ այն վերաբերում է Իշպուիինի արքայի գահակալության (Ք.ա. մոտ 830/825-810թթ.) սկզբնական շրջանին, երբ Մենուան դեռևս մանկահասակ արքայազն էր: Այսինքն՝ բիայնական մեհենագրությունը արդեն կայացած գրային համակարգ էր առնվազն Իշպուիինի օրոք: Մեհենագրերը կիրառվել են մինչև Վանի թագավորության անկումը, ինչը փաստվում է Ք.ա. VII դարավերջով եւ VI դարասկզբով թվագրվող բիայնական հիերոգլիֆակիր հուշարձանների առկայությամբ:

Վանի թագավորության մեհենագրակիր առարկաները, ինչպես նշվեց, գտնվել են շուրջ չորս տասնյակ հնավայրերից (տե՞ս քարտեզում):

Գրի եւ նրանով արձանագրված լեզվի ծանոթության աստիճանը: Բիայնական մեհենագրության հուշարձանները Վանի թագավորության եւ նրա ազդեցության սահմաններից դուրս որեւէ տեղ առայժմ վկայված չեն:

Նախքան 1995թ. բիայնական հիերոգլիֆներով գրված որեւէ բնագիր (եթե հաշվի չառնենք տարողության պարզ նշումները եւ առանձին նշանների վերաբերյալ արված դիտողությունները) չէր ընթերցվել: Մինչև այդ թվականը միանգամայն անհայտ էր նաև մեհենագրության լեզուն: Այդ լեզվի համար առավել հավանական են երկու թեկնածուներ. առաջինը բիայնական սեպագիր արձանագրությունների լեզուն է, երկրորդը՝ Վանի թագավորությունում առավել տարածված լեզուներից մեկը: Բիայնա-ուրարտական մեհենագրության լեզվի հարցը վերջնական եւ սպառիչ լուծում կստանա մեծածավալ բնագրերի հայտնաբերումից ու վերծանությունից հետո: Սակայն վերծանության ուղղությամբ ստացված առաջին արդյունքները թույլ են տալիս մեծ հավանականությամբ խոսելու այդ

լեզվի³ հնագույն հայերենը լինելու մասին: Չօգուտ խնդրի նման լուծման են վկայում նաև երկրի տեղանունների մեծ մասի (հատկապես արքունի ոստանի տարածքի) ու բազմաթիվ դիցանունների հայերենով ստուգաբանվելը, դիցարանի հնդեվրոպական բնութագիրը եւ այլ փաստեր:

Բազմալեզու արձանագրություններում գրահամակարգի առկայության խնդիրը:

Անհայտ գրերի եւ լեզուների վերծանության համար բացառիկ նշանակություն ունի նույնաբովանդակ բազմալեզու արձանագրությունների առկայությունը, երբ վերծանման ենթակա բնագիրն ունի զուգահեռ թարգմանություն մեկ ուրիշ³ արդեն հայտնի գրով ու լեզվով (հաճախ նորահայտ բազմալեզու արձանագրությունները դառնում են արդեն վերծանված գրի ու լեզվի ընթերցման ճշգրտությունը ստուգելու միջոց):

Առ այսօր հայտնի միակ գրային համակարգը, որով թողնված արձանագրությունները հանդիպում են ուրարտական հիերոգլիֆների կողքին, Վանի թագավորության սեպագրերն են: Թարգմանու՜մ են դրանք մեկմեկու, թե ոչ:

Քննելով այս հարցը³ ուսումնասիրողները հանգում էին բացասական պատասխանի, քանի որ առյուծի գլուխ է պատկերված թե՞ Սարդուրիի եւ թե՞ Ռուսայի անունները կրող թասերին, իսկ արծվի գլուխը հանդիպում է եւ՞ Արգիշտիի, եւ՞ Սարդուրիի անունների կողքին: Միանգամայն տրամաբանական այս տեսակետը մենք ընդունել եւ պաշտպանել ենք մինչեւ 1997 թվականը, երբ բիայնական մեհենագիր արձանագրությունների ժողովածուն եւ նշանացանկը կազմելիս նկատեցինք, որ բրոնզե թասերից երկուսի վրա առկա են երկլեզու արձանագրություններ (նկ. 1), որոնք վերծանվում են³ Ռուսայի փոքր քաղաք՝ եւ Սարդուրիի (նվիրաբերումը / ընծան) Խալդիին կամ Սարդուրիից³ Խալդիին: րակիր հուշարձանների խմբային դասակարգումը: Նշանագրված առարկաներն ու արձանագրությունները վերաբերվում են երկրի կյանքի, ըստ էության, բոլոր հիմնական ոլորտներին³ արքայական իշխանությանը, հոգեւոր աշխարհին, ռազմական գործին, տնտեսությանը, մշակույթին ու կենցաղին: Ներկայացնենք գրակիր հուշարձանների հիմնական խմբերը.

- ա) կնիքներ եւ կնքադրոշմներ (տե՞ս նկ. 2),
- բ) մետաղյա թասեր եւ սափորներ,
- գ) արձանիկներ,
- դ) պաշտամունքային տեսարաններով թիթեղներ (նկ. 3-4),
- ե) մեդալիոններ,
- զ) ռազմական հանդերձանքի մասեր,
- է) խեցեղեն ամաններ,
- ը) արձանագրված քարեր եւ կավե սալիկներ,
- թ) այլ իրեր:

Վանի թագավորության ժամանակաշրջանում հանդիպում ենք դպրության մեջ մագաղաթի (կամ որեւէ այլ փափուկ գրանյութի) կիրառման փաստի: Կարմիր բլուրի պեղումներից, ի

թիվս այլոց, գտնվել է հանքաձյութից (բիտում) պատրաստված մի կնքադրոշմ, որի ներքին մակերեսը եւ նրանում պահպանված թելի հետքերը ցույց են տալիս, որ այն դրված է եղել փաթեթի ձեւ ստացած փափուկ գրանյութի վրա: Բ. Բ. Պիտորովսկին այն համարում է պապիրուսի փաթեթ եւ գտնում, որ Թեյշեբահինիում գոյություն է ունեցել նաեւ պապիրուսների փաթեթների արխիվ, իսկ դրանց վրա հնարավոր է, որ գրած լինեին արամեերեն:

Ընդունելով հեղինակի եզրահանգումը այլ^ա սեպագրից տարբեր գրով արխիվի գոյության մասին^ա մենք վերապահությամբ ենք մոտենում գրի եւ գրանյութի հարցերին: Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհում չկար պապիրուսի հումք եւ իբրեւ փափուկ գրանյութ պետք է ծառայեր մեկ ուրիշը (օրինակ^ա մագաղաթը կամ այլ նյութ): Ինչ վերաբերում է արամեական գրին, ապա բիայնական տերությունում այդ գրի գործածության որեւէ փաստ չունենք: Փոխարենը Վանի թագավորությունում, սեպագրին զուգահեռ, կիրառվում են մեհենագրերը: Նման իրավիճակ է Խեթական տերության մեջ, ուր մեհենագրերն օգտագործվում էին հիմնականում կոթողային (մոնումենտալ), իսկ սեպագիրն^ա առօրյա գրառումներում: Բիայնական պետության մեջ, ընդհակառակը, սեպագիրն է հանդես գալիս կոթողային արձանագրություններում, եւ կարելի է ենթադրել, որ մեհենագիրն առավելապես գործածվել է առօրյա գրագրության մեջ, որի համար պահանջվել է փափուկ գրանյութ: Վերջինս կարող էր երկարադիմացկուն չլինել, որով էլ պայմանավորված է մինչ օրս փաթեթային արխիվների պահպանված չլինելը (ինչպես որ չի պահպանվել Կարմիր բլուրի կնքադրոշմը կրած փաթեթը):

Արձանագրությունների քանակն ու տեսակները: Այսօր մեր ունեցած բոլոր մեծ ու փոքր արձանագրությունների (ավելի ճիշտ^ա գրակիր առարկաների) թիվն անցնում է 1500-ից: Այս թիվը մոտ ապագայում անընդհատ կարող է փոխվել, քանի որ օրըստօրե ի հայտ են գալիս նոր հուշարձաններ, գանձագողության հետեւանքով աշխարհով մեկ սփռվող եւ տարբեր թանգարաններում ու հավաքածուներում հայտնվող ու հրապարակվող նորանոր նյութեր:

Մեր ունեցած արձանագրությունները կարելի է դասակարգել ըստ ծավալի եւ բովանդակային բնույթի: Տեսակավորման համար կարելուր չափանիշ է նաեւ արձանագրությունների կառուցվածքը, բայց քանի որ մեր ունեցած բնագրերը սակավանիշ են եւ հիմնականում չվերծանված, այդ հատկանիշով բիայնա-ուրարտական մեհենագրության բնութագրումը մնում է ապագայի գործ:

Ըստ ծավալի, արձանագրությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի^ա միանիշ (հիմնականում վարպետի նշաններ, մի քանիսը տե^օս նկ. 1) եւ բազմանիշ: Բազմանիշ արձանագրությունները նույնպես բաժանելի են երկու խմբի^ա միատող եւ բազմատող (տե^օս, օրինակ, նկ. 2): Մեծամասնությունն են կազմում միատող արձանագրությունները, որոնց շարքն ենք դասում նաեւ խեցեղեն ամանների վարպետի նշանից կամ դաջից եւ տարողության նշումներից բաղկացած նշանախմբերը:

Քանի որ բնագրերի մեծ մասը վերծանված չէ եւ հնարավոր չէ դրանք դասակարգել ըստ բովանդակության, մենք այդ խնդրի ուղղությամբ անում ենք միայն նախնական քայլեր^ա

ելնելով բնագրակիր առարկայի նպատակադրումից: Ըստ նշված հատկանիշի, մեր ունեցած արձանագրությունները բաժանվում են հետևյալ խմբերի. ա) արքայական իշխանության ուղորտին վերաբերող բնագրեր, որոնց մեջ են մտնում մի խումբ կնիքների, ռազմական հանդերձանքի, արքաների անունով սեպագիր արձանագրություններ կրող եւ այլ իրերի գրությունները, բ) արձանագրություններ պաշտամունքային նշանակություն ունեցող առարկաների (բրոնզե թիթեղներ, մեդալիոններ, կնիքների մի խումբ եւ այլն) վրա. ի դեպ, միշտ չէ, որ կարելի է հստակ սահման դնել այս երկու խմբերի միջեւ, քանի որ Վանի թագավորությունում հոգեւոր բարձրագույն իշխանությունը եւս պատկանում էր արքային, գ) տնտեսական եւ կենցաղային նշանակության առարկաների վրա հանդիպող գրություններ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում խեցեղեն ամանները, դ) արձանագրություններ, որոնց բովանդակային բնույթն առայժմ անհայտ է մնում՝ լրացուցիչ տեղեկությունների բացակայության պատճառով: բության ուղղությունները: Առկա նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բիայնական մեհենագրության մեջ կիրառվել է գրության երկու ուղղություն՝ աջից ձախ (հորիզոնական գրության դեպքում) եւ վերից վար (ուղղահայաց դասավորության պարագայում), իսկ շրջանաձեւ կամ պարուրաձեւ (բուստրոֆեդոն) ուղղություն ենթադրելու համար որեւէ հիմնավոր փաստարկ չունենք:

Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ: Բիայնական մեհենագրերը, մեր կատարած նախնական հաշվումներով, 300-ից ավելի են: Այդ թիվը հետագայում կարող է փոփոխություն կրել՝ կապված նոր բնագրերի հայտնաբերման հետ: Նշանների նման քանակը ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող գրային համակարգը գաղափարագրերի կիրառմամբ վանկային՝ բառա-վանկային (գաղափարահնչյունագրային) է: րային համակարգի նույնպիսի բնութագիր ունի նաեւ Վանի թագավորությունում կիրառված սեպագիրը:

Նշանների խմբային դասակարգումն ըստ արտաքին տեսքի: Ուրարտական մեհենագրերի՝ ըստ արտաքին տեսքի խմբային դասակարգման առաջին փորձը կատարել է Ռ. Դ. Բարնեթը: Նա իր հավաքած 102 նշանները բաժանում է 8 խմբի՝ բուսական, երկնային, ճարտարապետական, մարդկային, կենդանական, առարկաների, թվերի եւ անորոշ տեսքով հիերոգլիֆների: Մեր կարծիքով, այս խմբերին պետք է ավելացնել եւս երկուսը՝ դիցաբանական էակների պատկերներ եւ օժանդակ նշաններ:

Թվանշանները: Մեր ունեցած հիերոգլիֆակիր առարկաների մեջ մեծ թիվ են կազմում տարողության նշումներով խեցեղեն ամանները, որոնց վրա բազմաթիվ տարբերակներով հանդիպում են մեկից մինչեւ ինը թվերի նշումները՝ կետերով:

Տարողության նշումներում կետերի կողքին հանդիպում են որոշ առարկաների (տիկ, սափոր, գավաթ, թաս եւ այլն) գծապատկերներ, որոնք չափի միավորներ ցույց տվող հիերոգլիֆներ են: Կարասների վրա, առարկաների պատկեր-նշաններից բացի, հանդիպում են եւս չորս հիերոգլիֆներ, որոնցից երկուսը, մեր կարծիքով, կարող էին նշանակել՝ ակարկի (ահարկու), մյուս երկուսը՝ տերուսի (տուրուզա)՝ չափման միավորները, նաեւ համապատասխանաբար ցույց տալ 10 եւ 100 թվերը:

1-9 թվերի համար, կետային նշումներից բացի, ունենք նաև ուղղահայաց գծիկներով նշաններ, որոնք հանդիպում են Թոփրաք կալեում, Արին-բերդում եւ Այանիսում: Միայն երեք հուշարձաններում հանդիպելուց զատ, հատկանշական է նաև, որ այդ նշաններն արված են շատ անարվեստ, այսինքն՝ դրանք պատկանել են ստորին խավի: Մյուս կողմից, ակնհայտ է դրանց ընդհանրությունը խեթա-լուվիական հիերոգլիֆ-թվանշանների հետ: Ուստի մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այդ նշանները գործածել են քիսայնական արքաների՝ արեւմտյան արշավանքներից բերված ռազմագերիները, որոնց մասին կա գրավոր հիշատակություն:

Թվերի կետային նշումը հին առաջավորասիական տարածաշրջանում բնորոշ է միայն Հայաստանին: Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի եւ հարակից երկրների, Հայկական լեռնաշխարհում թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով (տե՞ս աղ. 1): Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երեւույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից. քիսայնական մեհենագրության մեջ վերջինիս լայն կիրառումը այդ գրային համակարգի տեղական ծագման ապացույցներից մեկն է:

Օժանդակ նշանների կիրառությունը: Այսօրվա մեր ունեցած գիտելիքները թույլ են տալիս խոսելու քիսայնական մեհենագրության մեջ երեք օժանդակ նշանների կիրառության մասին: Դրանցից ամենատարածվածը դեպի վեր ուղղված անկյունաձև նշանն է, որը դրվում է այլ մեհենագրերի վրա: Այս օժանդակ նշանի ստույգ բովանդակությունն առայժմ հայտնի չէ. նշենք միայն, որ այսօր հայտնի է տվյալ հիերոգլիֆի կիրառության մեկ տասնյակից ավելի դեպք:

Մյուս օժանդակ նշանը հանդիպում է Թոփրաք կալեի տողագծած սալիկի (նկ. 1) առաջին եւ երրորդ տողերի վերջում: Նման դիրքում հանդես գալը ցույց է տալիս, որ այն, հավանաբար, կիրառվել է իբրև ավարտանշան: Նման մի նշանով է ավարտվում Երեւանի քիսայնական դամբարանի տարածքից հայտնաբերված երկտող արձանագրությունը (նկ. 2):

Երրորդ նշանը, որը մենք ենթադրաբար ենք համարում օժանդակ, քանի որ ունենք դրա կիրառման մեկ դեպք (եթե դա կցագրում չէ), հանդիպում է Բուդինի թիթեղի վրա (նկ. 3), երկրպագող չորրորդ անձի գլխավերեւում: Այս հիերոգլիֆի նշանակությունը եւս մեզ անհայտ է:

Ծավալուն բնագրերի բացակայությունը ներկայումս թույլ չի տալիս պարզելու՞ կիրառվել էն, արդյոք, բառանջատիչներ եւ կետադրական այլ նշաններ, թե՞ ոչ:

Որոշիչներ (ցուցիչներ, դետերմինատիվներ): Հին գրային համակարգերում լայն տարածում ունեւր մեկ բառը, երեւույթը մեկ նշանով արտահայտելու, գաղափարագրելու սկզբունքը: րային մտածողության զարգացմանը՞ զուգընթաց նշանները, կապված իրենց իմաստային եւ գործառնային բազմանշանակության հետ, ձեռք էին բերում բազմիմաստություն: Դա բավական լայնացրեց գրային հաղորդակցության հնարավորությունները, եւ որպեսզի ստեղ-

ծված բազմիմաստությունը առաջ չբերեր խառնաշփոթ, հին դպիրները սկսեցին կիրառել որոշիչներ (դետերմինատիվներ):

Կիրառության սկզբունքը հետեւյալն էր. բազմիմաստ նշանը գործածելիս, ճշգրտության նպատակով, նրանից առաջ դրվում էր մեկ այլ որոշիչ-նշան, որը որոշակիացնում էր այդ գրանշանի իմաստը: Նույն սկզբունքով հատուկ անուններից առաջ դրվող որոշիչը ցույց էր տալիս անվան տիրոջ ով կամ ինչ (աստված, տղամարդ, կին, թագավոր, երկիր, քաղաք եւ այլն) լինելը:

Վանի թագավորության մեհենագրության մեջ եւս լայն տարածում ունի որոշիչների գործածությունը: Ամենաշատը կիրառվել են 'արքա' եւ 'աստված' որոշիչները: Վերծանության ուղղությամբ հետազայում տարվելիք աշխատանքները, կարծում ենք, ի հայտ կբերեն նոր որոշիչներ:

Կցագրում: Որոշիչ-գաղափարագրության մի դրսեւորում է կցագրումը:

Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում որոշիչ եւ որոշյալ նշանները գրվում են առանձին, իսկ երկրորդի դեպքում կցագրվում եւ հանդես են գալիս որպես մեկ բաղադրյալ գրանիշ:

Ուրարտական մեհենագրության մեջ ամենից շատ կցագրեր են կազմվել աշտարակատեսք հիերոգլիֆով: Վերջինս, թերեւս, նշանակել է 'մեծ կառույց, շինություն' եւ համապատասխանել սեպագրերի լ. GAL-ին (մեծ տուն/ շինություն, նաեւ՝ ամրոց, պալատ): Այսօր հայտնի են այդ նշանով կազմված առնվազն հինգ կցագրեր (նկ. 4), որոնք ցույց են տվել կառույցների, շինությունների զանազան տեսակներ:

Կան մի քանի մեհենագրեր, որոնց կցագրեր լինելու մասին կարելի է խոսել մեծ հավանականությամբ:

Կցագրերի մի հետաքրքիր խումբ է հանդիպում խեցեղեն անոթների վրա: Այս նշանների առանձնահատկությունն այն է, որ կցագրի բաղադրիչները ոչ թե դասավորվում են մեկը մյուսի վրա, այլ մտնում են իրար մեջ (նկ. 5):

Համաժամանակյա գրավոր աղբյուրներից ստացվող տեղեկությունները:

Վերծանության խնդրի լուծման համար առանձնակի կարեւորություն ունեն Վանի թագավորության ժամանակաշրջանից մեզ հասած գուգահեռ գրավոր հուշարձանները:

Այսօր ունենք այդպիսի գրավոր աղբյուրների չորս խումբ. ա) Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, որոնք կիրառվում են Իշպուինիի ժամանակաշրջանից, բ) ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ Ասորեստանում եւ Բիայնիլիում կիրառված, գ) խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները, որոնք վերաբերվում են մինչեւ Ք.ա. VIII դարն ընկած ժամանակահատվածին, դ) Աստվածաշնչի Հին Կտակարանի գրքերը, որոնցում Արարատի թագավորությունը հիշատակվում է՝ կապված Ք.ա. VII-VI դարերի իրադարձությունների հետ:

Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները: Հայտնաբերման եւ հետազոտության սկզբից եւեթ բիայնական մեհենագրերը համաժամանակյա գրային համակարգերի մեջ ամենից ավելի նմանեցվել են խեթա-լուվիականին:

Հետազոտությունները ճշգրտեցին, հստակեցրին արտահայտված կարծիքները, սակայն երկու հարեւան երկրներում կիրառված հիերոգլիֆային նշանների նմանությունը մնաց անհերքելի: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այդ նմանությունը ոչ միայն պատահական չէ, այլև երկու գրային համակարգերի միջև առկա են փոխառնչություններ, որոնք պայմանավորված են նաև ժամանակաշրջանի պատմական անցուդարձով (նշանների համեմատությունը տե՞ս աղ. 1):

Վերծանության ներկա վիճակը: Վերծանության ասպարեզում կատարված աշխատանքները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները (Կ.Ֆ.Լեհման-Հաուպտ, Բ.Բ.Պիտրովսկի, Զ.Ս.Ղասաբյան, Չ.Բարնեյ, Ա.Ֆոն Շուլեր, Ռ.Դ.Բարնեթ, Փ.Քալմայեր, Ա.Ա. Վայման, Ի.Մ.Դյակոնով, Ս..Հմայակյան եւ ուրիշներ) փորձել են մեկնաբանել միայն առանձին նշաններ, երկրորդինը՝ վերծանել ամբողջական բնագրեր: Նման փորձեր են կատարել Լ.Ա.Բարսեղյանը, Ա.Ա.Վայմանը, Հ.Հ.Կարագյոզյանը, տողերիս հեղինակը եւ Ս..Հմայակյանը:

Լ.Ա.Բարսեղյանի, Ա.Ա.Վայմանի, Հ.Հ.Կարագյոզյանի եւ Ս..Հմայակյանի փորձերին անդրադարձել ենք 2003թ. լույս տեսած մեր երկու մենագրություններում: Վերծանության ուղղությամբ 1995 եւ 1997թթ. մեր կատարած աշխատանքների ընթացքում ընթերցվել եւ մեկնաբանվել են շուրջ հինգ տասնյակ մեհենագրեր, այդ թվում՝ բառային եւ վանկային գործածություն ունեցող հիերոգլիֆներ, թվանշաններ եւ մեկ օժանդակ նշան: Ընթերցվեցին հնչյունային գրությամբ երեք հատուկ անուններ (Իշպուհինի, Մենուա, Ինուանի), որոնցում գործածված էին 11 վանկեր: Եվս վեց հատուկ անուններ (Խալդի, Թեյշեբա, Շիվինի, Մարդի, Ռուսա, Մարդուրի) գրված են գաղափարագրերով: աղափարագիր գրությամբ վերծանված է երկու քաղաքանուն՝ (մայրաքաղաք) Ռուսախինիլի եւ Ռուսայի փոքր քաղաք: Հաջողվեց բացահայտել առաջին երկլեզու արձանագրությունները՝ Ընդհանուր առմամբ, այսօր վերծանված եւ մեկնաբանված են ընդամենը շուրջ վեց տասնյակ մեհենագրեր, որը կազմում է գրանշանների ընդհանուր թվի մոտ 20 %-ը: Կարելի է ասել, որ գրային համակարգի վերծանությունը ներկայումս գտնվում է միայն սկզբնական փուլում:

Ընթերցված գրություններն ու նշանները իրենց բնույթով յոթ տեսակի են.

- ա) ցույց են տալիս պատկանելությունն այն իրի, որի վրա նշված են,
- բ) մատնանշում են պատկերվողի ինքնությունը,
- գ) ունեն նվիրատվական բովանդակություն,
- դ) իբրև վարպետի նշան՝ ցույց են տալիս տվյալ իրը պատրաստողին (վարպետի նշանները կարելի է բաժանել երկու խմբի՝ պարզապես նշաններ եւ դաջվածքներ, տե՞ս նկ. 1 եւ 2),
- ե) բնորոշում են նշանակիր առարկայի որակական տվյալները (տարողության

նշաններ եւ այլն),

զ) կապվում են տվյալ իրի նպատակադրման հետ,

է) բազմաթիվ հիերոգլիֆ գրությունների բնույթը մնում է դեռեւս չպարզաբանված:

Այստեղ զետեղում ենք վերծանված ու մեկնաբանելի մեհենագրերի ցանկը (աղ. 2), որում մեր վերծանածներից բացի տեղ են գտել նաեւ մեզնից առաջ մեկնաբանված նշանները:

Հայկական Մեհենագրության Ործածությունը Վանի Թագավորության Անկումից Մինչեւ Քրիստոնեության^ա Որպես Պետական Կրոն Հռչակվելը Հայաստանում

Հայկական մեհենագրության բիայնա-ուրարտական փուլը վերաբերում է Վանի թագավորության ժամանակաշրջանին: Դեռեւս չուսումնասիրված է մնում Ք.ա. VI դարից մինչեւ քրիստոնեության պետականացումն ընկած ժամանակամիջոցում մեր մեհենագրության ճակատագրի հարցը: Ըստ Հ.Ա.Մարտիրոսյանի, այն չի բավարարում զարգացող երիտասարդ պետականության եւ համապատասխան գաղափարաբանության պահանջները: Այդ պատճառով հեթանոսական Հայաստանում լայնորեն օգտագործվում են օտարազգի հնչյունային գրեր... աղափարագրությունը շարունակում է հարատեւել մասնավորապես մեհյաններում^ա իբրեւ կրոնական-հմայական գրչության ձեւ:

Դատելով մատենագրական տեղեկություններից, սակայն, կարելի է եզրակացնել, որ հայալեզու նշանագրերը նախաքրիստոնեական Հայաստանում ունեցել են ավելի լայն կիրառություն: Այդ են վկայում Հիպպոլիտոսի^ա 234-235թթ. գրված ժամանակագրության մեջ հայերի նշվելը սեփական դպրություն ունեցող ժողովուրդների շարքում, Ագաթանգեղոսի հաղորդումները նախաքրիստոնեական Հայաստանում դպրության աստծո^ա Տիրի պաշտամունքի եւ կիրառված նշանագրության մասին, Մովսես Խորենացու տեղեկությունը II-III դարերում Դարանաղյաց Անի ամրոցում մեհենական պատմագրության արխիվի մասին, որից ասորի մատենագիր Բարդաճանը թարգմանություններ է կատարել^ա ասորերեն, հունարեն եւ այլն (նախամաշտոցյան Հայաստանում գոյություն ունեցած հայալեզու եւ օտարալեզու դպրությունների մասին մատենագրական տեղեկություններն ամբողջությամբ կներկայացնենք առաջիկա ակնարկներում):

Մատենագրական տեղեկություններից զատ, կարելի է ցույց տալ նաեւ նյութական վկայություններ նշված ժամանակաշրջանում մեհենագրության կիրառության մասին: Դրանցից է III-IV դարերով թվագրվող նշանագրված քարը (նկ. 1)^ա հայտնաբերված Բաղաբերդի պեղումներից: Կան մեծ թվով հստակ չթվագրվող գրակիր հուշարձաններ, որոնց մի մասը կարող է վերաբերել քննարկվող դարաշրջանին:

Մատենագրական տեղեկությունների եւ առկա այլ փաստերի քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Վանի թագավորության անկումից մինչեւ քրիստոնեության^ա որպես պետական կրոն հռչակվելը Հայաստանում շարունակվել է կիրառվել հայկական մեհենագրությունը^ա հայալեզու բնիկ գրահամակարգը: Օտար այբուբենների կիրառումով այն դուրս չի մղվել գործածությունից, այլ սրբազան ավանդույթի ուժով շարունակել է գործածվել

մեհյաններում, ինչն էլ, թերեւս, ավելի է նպաստել, որ քրիստոնեական դարաշրջանում մեհենագրերն ընկալվեն իբրեւ հմայագրեր³ օժտված գերբնական հատկություններով:

Հայկական Մեհենարերի Որձածությունը Հայաստանում Քրիստոնեությունը Պետական Կրոն Հռչակելուց Հետո

Քրիստոնեության ընդունումը աղետաբեր եղավ հայկական մեհենագրության համար, որն ընկալվում էր իբրեւ նախաքրիստոնեական պաշտամունքի հիմնական կրողը, ուստի պատահական չէ, որ քրիստոնյաների կողմից կործանված տաճարներից առաջինը դպրության Տիր աստծո տաճարն էր: Դրանով, սակայն, մեհենագրերն իսպառ դուրս չեկան գործածությունից: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո սկսվում է մեհենագրության պատմության նոր³ գաղտնի փուլը, որը տարբեր դրսեւորումներով շարունակվում է մինչեւ մեր օրերը: Այդ դրսեւորումից առանձնապես հիշատակելի են հետեւյալները. ա) Հմայագրեր: Հանդիպում են ժապավենաձեւ եւ գրքային հմայիլներում, որոնք բովանդակում են կախարդական եւ մոգական նշանակությամբ աղոթքներ, հմայանքի, թովչանքի բանաձեւեր եւ նշանագրեր (նկ. 2): Սրանք գալիս են նախաքրիստոնեական ժամանակներից, եւ պատահական չէ, որ հայ եկեղեցին իր գոյության ողջ ընթացքում եռանդագին պայքարել է հմայիլների եւ հմայագրության կիրառման դեմ, սակայն այդ երեւույթն առկա է նաեւ մեր օրերում: Անցած եւ մեր դարերում Հայաստանում հմայագրության առկայության վերաբերյալ կա մեծաքանակ ազգագրական գրականություն: Դրանում համոզվելու նպատակով մենք անձամբ այցելեցինք հմայագրերով կախարդություն կատարող երկու անձնավորության եւ ականատես եղանք, թե ինչպես են այսօր եւս հավատում հմայագրերի գերբնական զորությանը, որոնք տարբեր նպատակների համար արտագրվում էին մեծ վախվորածությամբ, թեպետ այդ նշանների իմաստը արտագրողներից եւ ոչ մեկը չէր հասկանում:

Հմայագրերը համապարփակ ուսումնասիրության դեռեւս չեն ենթարկվել, սակայն Լ. Խաչիկյանի կողմից հրատարակված հմայական նշանագրերի ցանկի (որը կազմել է ընդամենը ութ ձեռագրերից քաղելով, իսկ դրանց թիվն անհամեմատ մեծ է. Լ. Խաչիկյանի բերած նյութերի հիման վրա կազմել ենք մեր աղ. 1-ը) ուսումնասիրությունն իսկ ցույց է տալիս դրանց կապը հայկական մեհենագրության հետ (հմայագրերի համադրումը հայկական մեհենագրության մյուս փուլերի նշանների հետ տե՞ս աղ. 2): Հմայագրերը վերծանված չեն, սակայն դրանց մեկնաբանմանն օգնում են մեսրոպատառ հայերենով զուգահեռ գրված աղոթքներն ու բացատրագրերը, որոնցից իմացվում է տվյալ հմայիլի բովանդակությունը: Ըստ այդմ հմայագրերի իմաստային մեկնաբանման փորձ, որքան մեզ հայտնի է, դեռեւս չի կատարվել: Բ)Նշանագիրք իմաստնոց՝ Քրիստոնեական դարաշրջանում հայկական մեհենագրության դրսեւորման կարեւոր արտահայտություններից մեկը միջնադարյան հայկական մատյաններում նշանագրերի ցանկերի առկայությունն է, որոնցում ամեն նշանի դիմաց տրվում է նրա բացատրությունը: Նշանացանկերը կարելի է օգտագործել հայկական մեհենագրության վերծանության ընթացքում որպես օժանդակ աղբյուր, սակայն հարկավոր է

դրանց նկատմամբ ունենալ խիստ զգուշավոր մոտեցում^ա հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նախ^ա դրանց մեջ մեծ թիվ են կազմում մաշտոցյան այբուբենի հիմամբ ստեղծված պարզ ու փակագիր համառոտագրություն-նշանները, որոնք ոչինչ չեն տալիս մեհենագրության վերծանությանը: (Հր.Աճառյանն իր հավաքած 509 նշանագրերից 332-ը համարում է մաշտոցյան տառերից առաջացած: Ա. . Աբրահամյանի կատարած քննությունը ցույց է տալիս, որ նշանագրերի ցուցակներ ունեցող ձեռագրերը հստակորեն բաժանվում են երկու խմբի, որոնք նա պայմանականորեն կոչում է 'կիլիկյան' եւ 'Երզնկայի': Առաջին խմբի նշանագրերի հիմնական մասը ստեղծված է մաշտոցյան տառերից, մինչդեռ երկրորդի գերակշիռ մասը (ավելի քան 180 գաղափարագիր) կապ չունի հայկական այբուբենի հետ եւ բազմաթիվ զուգահեռներ ունի հին աշխարհի մի շարք գրային համակարգերում): Երկրորդ^ա պետք է հաշվի առնել, որ դրանց իմաստները կարող էին փոփոխություն կրել^ա հարմարվելով նոր, քրիստոնեական միջավայրի մտածողությանը: Երրորդ^ա պահպանելով իմաստը^ա նշանը կարող էր կոչվել նոր, օտար լեզվից փոխառյալ բառով, իսկ հնում գործածված տերմինը մոռացվել: Այս հանգամանքը կարելու է հատկապես վանկագրության (հնչյունագրության) բացահայտման տեսանկյունից, քանի որ սկզբնահնչյունության (ակրոֆոնիայի) կանոնի համաձայն, որեւէ բառ արտահայտող նշանը վանկային գրության մեջ ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (մասը), ուստի կարելու է իմանալ ամեն մի բառ-գաղափարագրի ճշգրիտ հնչողությունը: Եվ վերջապես, դարեր շարունակ արտագրվելու հետեւանքով նշանների տեսքը կարող էր զգալի փոփոխության ենթարկվել: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելու պարագայում միայն նշանագրերի ցանկերը կարելի է օգտագործել իբրեւ վերծանության օժանդակ աղբյուր: գ) Արհեստագործ վարպետների նշաններ: Պատկերագրության զարգացած փուլի^ա գաղափարագրության դրսևորումներից մեկը դրոշմների կամ տոհմական նշանների ի հայտ գալն էր: Դրանք ներկվում, խազվում կամ փորագրվում էին տների պատերին, իսկ այդ նշանների առկայությունը որեւէ իրի, ապրանքի վրա ցույց էր տալիս վերջինիս պատկանելությունը տվյալ տան կամ տոհմի անդամին: Այդպես ծագեցին արհեստագործ վարպետների նշանները, որոնք դարեր շարունակ անփոփոխ կրում էին նույն տոհմի ներկայացուցիչները (հին եւ միջին դարերում արհեստները եւս ժառանգական էին): Միջնադարի հայկական շինությունների պատերին պահպանվել են մեծ թվով վարպետանշաններ (մի քանիսը, վկայված IX-XI դդ., տե՞ս նկ. 1), որոնց մի մասը նույնությամբ առկա է նաեւ Վանի թագավորության ժամանակաշրջանում (աղ. 1): դ) Նշանագրեր քրիստոնեական տաճարների պատերին: Քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի ճակատագրում նկատվում է ուշագրավ մի երեւույթ եւս: Այդ նշանագրերը հայտնվում են քրիստոնեական տաճարների պատերին: Դրանց ուսումնասիրությունից ակնհայտ է, որ եկեղեցիների կառուցման ընթացքում ոչ թե օգտագործվել են նախապես նշանագրեր կրող քարեր, այլ նշանագրերը քանդակվել են կառուցումից հետո: Այսինքն^ա մենք գործ ունենք քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի կիրառության փաստերի հետ:

Մեր ոչ վերջնական տվյալներով, միայն Հայաստանի Հանրապետության տարածքում այդ երեւույթը նկատվում է Երեբունյքի (V դ.), Պտղնավանքի (VI դ.), Սբ. Հռիփսիմե (VII դ.), Սբ. այանե (VII դ.), Արուճի (VII դ.), Բջնիի Սբ. Աստվածածին (XI դ.) տաճարների, Սելիմի քարավանատան եւ Դիլիջանի եկեղեցիներից մեկի պատերին:

Այս երեւույթն, անհասկանալիորեն, անուշադրության է մատնվել: Այն կարող էր չգրավել նաեւ մեր ուշադրությունը, եթե տարբեր եկեղեցիների պատերին հանդիպող նշանները չկրկնվեին եւ նախապես ծանոթ չլինեին նախաքրիստոնեական ժամանակաշրջանից:

Երեբունյքի, Պտղնավանքի եւ Բջնիի տաճարների կապակցությամբ անդրադառնալով ժայռապատկերներ հիշեցնող նշաններին^ա ժայռապատկերաբան Կարեն Թոխայանը կարծիք է հայտնում, որ 'սրանք հին, դասական' ժայռապատկերներ չեն, սակայն վկայություն են վաղ միջնադարում ժայռապատկերման ավանդույթների հարատեւման:

Մենք հատուկ ուսումնասիրության նյութ դարձրեցինք Պտղնիի, Սբ. Հռիփսիմե, Սբ. այանե, Արուճի տաճարների նշանները: Պտղնավանքում, որը մեզ հայտնի ամենամեծաթիվ նշաններ ունեցող տաճարն է, նշաններով է պատված հյուսիսային պատի արտաքին կողմը (նկ. 2 a եւ b): Առանձին նշաններ կան հարավային պատի երկու կողմերում (նկ. 2 c):

Սբ. Հռիփսիմե տաճարի բոլոր նշանները պահպանվել են ներսի կողմում (դրսի պատերին պահպանված չլինելը գուցե հետեւանքն է վերանորոգումների ընթացքում ոչնչանալու): Ուշադիր զննման արդյունքում մեզ հաջողվեց գտնել տասնմեկ նշան (նկ. 3):

Ինչպես վերոնշյալ երկու տաճարների, այնպես էլ Սբ. այանեի նշանները պահպանվել են ամենահին քարերի վրա: Վերջինիս հյուսիսային պատի դրսի կողմի աջ մասում պահպանված քարերի նշանները հիերոգլիֆ արձանագրության տպավորություն են թողնում (նկ. 4 a): Բացի դրանից, առանձին նշաններ կան նույն պատի կենտրոնում եւ ձախ մասում, ինչպես նաեւ արեւելյան պատի դրսի երեսին (նկ. 4 b եւ c): Ակնհայտ է, որ նշանների զգալի մասը չի պահպանվել:

Չորս պատկերանշան է պահպանվել Արուճի տաճարի (նկ. 5 a-d) եւ մեկ նշան (խոյ)^ա տաճարից ոչ հեռու գտնվող պալատի պատին (նկ. 5 e): Պտղնիի, Սբ. Հռիփսիմե (եկեղեցու նշանները տե՞ս նկ. 1), Սբ. այանե, Արուճի տաճարների նշանների դասակարգումը եւ համադրումը ցույց են տալիս, որ ամենից շատ գործածվել են 'արեւանշանները' (ընդ որում^ա մի քանի տարբերակներով), այժապատկերները եւ դեպի վեր ուղղված նետաղեղ հիշեցնող նշանը: Այս նշանների նախաքրիստոնեական բնույթը, ինչպես նաեւ դրանց քանդակման 'ժայռապատկերային' եղանակը կասկած չեն թողնում, որ դրանց հեղինակները նախաքրիստոնեական ժամանակներից շարունակվող աշխարհայացքի կրողներ են եղել:

Ինչո՞ք կարող է բացատրվել այս երեւույթը:

Հայտնի է, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն մեծ դիմադրություն ցույց տվեցին նախաքրիստոնեական հավատքի կրողները, եւ տեղի ունեցած քաղաքացիական պատերազմում զոհվեց 'հույժ քաջամարտիկ Արձան քրմապետը' (Հովհան

Մամիկոնյան, Տարոնի պատմություն): Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո էլ նախկին հավատքի կողմնակիցները ժամանակ առ ժամանակ գլուխ էին բարձրացնում. այդ մասին բազմաթիվ վկայություններ կան մեր մատենագրության մեջ: Նախկին կրոնի^ա զգալի տարածում ունեցող գաղափարախոսական հիմնադրույթներն արտահայտվում էին նաև աղանդավորական շարժումների տեսքով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է արեւորդիների եւ թոնդրակյան շարժումներին: Հատկանշական է, որ թոնդրակյաններին բնորոշելիս ընդհանուր Մագիստրոս Պահլավունին գրում է. 'Եւ ահա յայտնի է, զի որոշեալք են եւ անեպիսկոպոսունս եւ անքահանայս շրջին եւ ասեն բանիւք, եթե մեք Արամեան գնդէն եմք եւ հաւատով համեմատ նոցա':

Չի բացառվում, որ այս նշանների քանդակողները լինեին հենց նրանք կամ հայոց նախաքրիստոնեական հավատքի այլ կրողներ: Ե) Նշաններ դրամների վրա: Մաշտոցի գյուտից առաջ Հայաստանում սեփական գրի ու դպրության մասին տեղեկություններից մեկը պատկանում է Վարդան Արեւելցուն (XII-XIII դդ.), ըստ որի Լեւոն Մեծ արքայի օրոք (1187-1219թթ.) Կիլիկյան Հայաստանում գտնվել է դրամ^ա հեթանոս հայ արքաների հայերեն գրությամբ: Կիլիկյան դրամների ուսումնասիրությամբ պարզվում է ուշագրավ մի երևույթ. հենց Լեւոն Մեծի ժամանակներից սկսած կիլիկահայ դրամների վրա հայտնվում են նշաններ, որոնք կապ չունեն ոչ^ո հայկական, ոչ^ո եվրոպական, ոչ^ո Առաջավոր Ասիայում այդ ժամանակաշրջանում գործածված այբուբենների հետ: Մենք հավաքեցինք մինչ օրս հայտնի դրամների նշանները (որոնց թիվը հասնում է չորս տասնյակի) եւ համադրեցինք հայկական մեհենագրության բոլոր փուլերի ու դրսևորումների գրային միավորների հետ:

Համադրության արդյունքը (աղ. 1) բավական համոզիչ կերպով ցույց է տալիս հայկական մեհենագրության եւ Կիլիկյան Հայաստանի դրամների ժառանգական կապը, որը բացատրելու համար խիստ կարևորվում է Վարդան Արեւելցու վերոհիշյալ հաղորդումը:

Նախաքրիստոնեական շրջանից դրամները կամ դրամանման իրերը (երկկողմ կնիքներ, մեդալիոններ եւ այլն) մինչեւ XII-XIII դարերը կարող էին հասնել Հայաստանում պահպանված նախաքրիստոնեական հավատքին ու ավանդույթներին հավատարիմ մնացած համայնքների միջոցով, իսկ նրանց նշանները պետք է որ տեղափոխված լինեն կիլիկյան դրամների վրա^ա առաջին հայ արքաների (կռապաշտ հայկազանց) եւ Կիլիկիո հայ տիրակալների ժառանգական կապն ընդգծելու միտումով: զ) Մարմնին դաջված մոզական նշաններ: Ըստ հայտնի բանահավաք-ազգագրագետ արեգին Սրվանձոյանցի հաղորդման^ա մինչեւ XIX դարի վերջերը Հայաստանի հարավ-արեւմուտքում (Տիգրանակերտի շրջանում) պահպանվել էին նախաքրիստոնեական շրջանից եկող շատ ավանդույթներ, որոնցից մեկը մարմնի տարբեր մասերին մոզական համարվող նշանների դաջումն էր (նկ. 2): Ակնհայտ է սրանց կապը մեհենագրության հետ: Մեհենական նշանների^ա մինչեւ մեր ժամանակները հասնող կիրառության այս ասպարեզը կարելի է համարել հմայական գրչության դրսևորման մի ձև: Ե) Նախաքրիստոնեական նշանագրության հարատեւումը հայոց զարդարվեստում:

Զարդանախշերը, սկզբնավորվելով վաղնջական ժամանակներում, գեղագիտականից բացի ունեին նաև իմաստային, գաղափարաբանական նշանակություն: Հին ու միջին դարերում արհեստները, որպես օրինաչափություն, փոխանցվում էին ժառանգաբար. նույնպիսի ճանապարհով գոյատևում էին նաև իմաստակիր-զարդանախշերը: Եվ պատահական չէ, որ մի շարք խորհրդանշաններ, որոնք կիրառվել են դեռևս ժայռապատկերներում եւ մեհենագրության մեջ, գոյատևում են հայոց զարդարվեստում:

Հայոց զարդարվեստում գործածված գաղափարանշանների իմաստի, ծագումնաբանության եւ այլ խնդիրների ուսումնասիրությունը, անշուշտ, կարող է դառնալ բազմաթիվ հատորների նյութ: Հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դառնա իմաստակիր-զարդանախշերի եւ հայկական մեհենագրերի կապը: Այս ուղղությամբ կատարվել են միայն նախնական քայլեր:

Վերջին տարիներին ուշադրություն դարձվեց հայկական գորգարվեստում կիրառված իմաստակիր-զարդանախշերին, ինչի արդյունքում ակնհայտ դարձավ դրանց ծագումնաբանական կապը Հայաստանի ժայռապատկերների, պեղված հնագիտական իրերի (որոնցից հնագույնները թվագրվում են Ք.ա. IV հազարամյակով) եւ միջնադարյան կիրառական արվեստի հուշարձանների նշանների հետ (տե՞ս աղ. 2, ըստ Լ. Ավանեսյանի նյութերի):

Անդրադարձ է եղել նաև գուլպաների ու սոնապանների զարդանախշերին, որում ընդգծվել է դրանց ընդհանրությունը Ք.ա. III հազարամյակի խեցեղենի նշանների հետ:

Անշուշտ, նշվածներով չի սահմանափակվում հայոց կիրառական արվեստում իմաստակիր-զարդանախշերի եւ հայկական մեհենագրերի կապը, ինչը, կարծում ենք, առաջիկայում կդառնա լուրջ ուսումնասիրության առարկա:

Այսքանով առայժմ սահմանափակվում են հայկական մեհենագրության² քրիստոնեական դարաշրջանում ունեցած մեզ հայտնի դրսևերումները, սակայն չի բացառվում, որ առաջիկայում հայտնի դառնան նորերը: Նշենք նման մի դեպք:

1987թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանից գտնվել էին երկաթե սրեր ու դաշույններ, որոնցից երեքի վրա կային բազմաթիվ նշաններ: Իրերը գտնողը պետք է դրանք հանձնէր Հայաստանի պատմության պետական թանգարան: Ներկայումս մեզ հայտնի չէ դրանց գտնվելու վայրը: Նման գտածոներ կարող են հայտնի դառնալ հետագայում եւս:

Այլ երկրներում ստեղծված եւ նախամաշտոցյան Հայաստանում կիրառված գրային համակարգերը բաժանվում են երկու խմբի³ գաղափարա-հնչյունագրային (բառա-վանկային) եւ այբբենական (տառային): Առաջին խմբին են պատկանում իւթա-լուվիական մեհենագրությունը, ասուրա-բաբելոնյան եւ փայնական (ուրարտական) սեպագիր համակարգերը, իսկ երկրորդ խումբը կազմում են հունական, արամեական եւ վերջինից ծագող պահլավական (միջին պարսկական) ու ասորական այբուբենները:

Խեթա-Լուվիական Հիերոգլիֆիկայի Կիրառումը Հայական Լեռնաշխարհում

Հայական լեռնաշխարհի արեւմուտքում² Եփրատի հովտում Ք.ա. II-I հազարամյակներում կիրառվել է խեթա-լուվիական մեհենագրությունը (հիերոգլիֆիկան): Այդ գրով առաջին արձանագրությունները նոր ժամանակներում հայտնի են դարձել XIX դարի երկրորդ կեսին³ սկիզբ դնելով գրային համակարգի ուսումնասիրությանը: Սկզբնական շրջանում հայտնվել էր կարծիք, թե խեթա-լուվիական հիերոգլիֆների լեզուն կարող է լինել հնագույն հայերենը (գերմանացի գիտնական Ն. Ենսենը անգամ դրանք փորձեց ընթերցել հայերեն):

Սակայն տարիներ անց պարզ դարձավ, որ դրանք գրված են ոչ թե հայերենով, այլ հայերենին մոտ ազգակից հնդեվրոպական լեզուներից մեկով⁴ լուվիերենով:

Թեպետ ներկայումս կատարված է զգալի աշխատանք վերծանության ուղղությամբ, դեռևս մնում են մեծ քանակությամբ չլուսաբանված հարցեր, որոնք կարող են նորություններ բերել նաև հայագիտությանը: րային համակարգի ծագումը: Խեթա-լուվիական հիերոգլիֆների ծագման վերաբերյալ ընդհանուր ճանաչում գտած կարծիք դեռևս չկա: Առավել տարածված մի տեսակետի համաձայն⁵ խեթա-լուվիական հիերոգլիֆները առաջացել են կրետական պատկերային գրից, որն, իր հերթին, մեծ ազդեցություն է կրել եգիպտական հիերոգլիֆիկայից: Ըստ մեկ այլ տեսակետի, խեթա-լուվիական հիերոգլիֆները ստեղծվել են ինքնուրույնաբար⁶ տեղական փոքրասիական պատկերագրության հիման վրա: րային համակարգի առաջացումը ենթադրաբար թվագրվում է Ք. ա. III հազարամյակով կամ II-ի սկզբով:

Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները: Եթե մի կողմ թողնելու լինենք բոլոր պատկերագրային համակարգերում առկա ընդհանրությունները, խեթա-լուվիական հիերոգլիֆիկան ամենից ավելի համադրելի է կրետական պատկերային գրի եւ Վանի թագավորության մեհենագրության հետ: Մեր ակնարկաշարում արդեն նշել ենք խեթա-լուվիական եւ բիայնական հիերոգլիֆային համակարգերի կապի մասին: րության ուղղությունը: Սա միակ գրային համակարգն է, որում բոլոր բնագրերը գրված են պարուրաձև (բուստրոֆեդոն) ուղղությամբ: Որպես օրինակափություն, բնագրերը սկսվում են աջից, եւ ամեն հաջորդ տողը գրվում է նախորդի հակառակ ուղղությամբ:

Նշանների թիվը, գրային համակարգի բնույթը եւ որոշ սկզբունքներ: Խեթա-լուվիական նշանների թիվը շուրջ 500 է: Նշաններից շուրջ 70-ը հնչյունային արժեքով գրեր են, մյուսները գաղափարագրեր են կամ դեռևս վերծանված չեն:

Այսինքն⁷ խեթա-լուվիական մեհենագրությունը բառա-վանկային գրային համակարգ էր:

Հիերոգլիֆները նկարային բնույթի են, մի մասն ունի նաև պարզեցված տարբերակներ:

Հայտնի են երեք ձայնավորներ⁸ a, i, u: Առավել տարածված են բաց վանկերը⁹ բաղաձայն-ձայնավոր կառուցվածքով, հանդիպում են նաև եռահնչյուն փակ վանկեր: Ի տարբերություն սեպագրի, հնչյունային նշաններն ունեն միայն մեկ նշանակություն:

Լայնորեն կիրառված է ակրոֆոնիայի (սկզբնահնչունության) սկզբունքը, որի համաձայն գաղափարագրերը հնչյունային գրությամբ գրվելիս արտահայտում էին բառի սկզբնամասը:

Շատ տարածված է նաև հնչյունային կոմպլիմենտի՝ երեւոյթը, որը կոչված է ճշգրտելու, թե տվյալ նշանը հատկապես իր որ իմաստով է գործածված:

Արձանագրություններում տարբերակվում են գրության երկու ոճեր² կոթողային (մոնումենտալ) եւ արագագիր (գծային կամ պարզեցված), ընդ որում, առաջինի նշանները զգալի նմանություն ունեն նախնական պատկերանշանների հետ:

Այլ Երկրներում Ստեղծված Եվ Նախամաշտոցյան Հայաստանում Կիրառված Գրային Համակարերը: Խեթա-Լուվիական Հիերոգլիֆիկայի Կիրառումը Հայակական Լեռնաշխարհում

րահամակարգի հայաստանյան կիրառությունը (տարածման աշխարհագրությունն ու ժամանակագրությունը): Խեթա-լուվիական հիերոգլիֆիկան գործածվել է Ք.ա. XVI-VIII դդ. Փոքր Ասիայում, Հայկական Լեռնաշխարհում եւ Սիրիայի հյուսիսում:

Նորխեթական թագավորությունում (Ք.ա. XV-XII դդ.) այն հանդես է գալիս խեթական սեպագրին զուգահեռ, ընդ որում, վերջինս օգտագործվում է առօրյա գրագրության մեջ, իսկ հիերոգլիֆները³ կոթողային (մոնումենտալ) արձանագրություններում: Այդ ժամանակաշրջանով են թվագրվում Ծոփքի (սեպագիր աղբյուրներում⁴ Ծուփա(նի), Իսուվա) տարածքից հայտնաբերված կնիքները: Ք.ա. XII-VIII դարերում խեթա-լուվիական հիերոգլիֆները լայն տարածում են ստանում, այսպես կոչված, հետխեթական կամ լուվիական պետություններում (այդ թվում⁵ Հայկական Լեռնաշխարհի արեւմուտքում⁶ Եփրատի հովտում գտնվող Մելիդ-Թեգարամայում եւ Կումմուխում):

Խեթա-լուվիական հիերոգլիֆներով արձանագրություններ են հայտնաբերվել Հայկական Լեռնաշխարհի շուրջ երկու տասնյակ հնավայրերից: Դրանք հիմնականում պատկանում են արքայական իշխանության ոլորտին: Հայտնաբերվել են նաև արքայական կնիքներ (դրանցից մի քանիսը տե՞ս նկ. 1):

Չափազանց ուշագրավ են Երզնկայի մոտ գտնվող Ալթին թեփե հնավայրից (պատմական Հայաստանի Չրմես ամրոցը) հայտնաբերված իրերը, որոնց վրա խեթա-լուվիական հիերոգլիֆներով գրված են բիայնական չափի միավորների անվանումները (տե՞ս նկ. 2): Դա յուրօրինակ սահմանային խառնարան էր խեթա-լուվիական եւ բիայնական գրավոր մշակույթների տարածման շրջանում:

Եփրատի հովտից բավականին հեռու⁷ Հայկական Լեռնաշխարհի հյուսիս-արեւելյան Կալաքենդ հնավայրից գտնվել է արքայական մի գայիսոն, որի վերին մասում կան երկու հիերոգլիֆներ⁸՝ տեր/տիրակալ՝ եւ քաղաք՝ (տե՞ս նկ. 3): Եթե գայիսոնը հետագա դարերում չի հասել նշված հնավայրի տարածք, այն կարելի է համարել խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի⁹ Հայկական Լեռնաշխարհում տարածման արեւելյան սահմանը:

Հայկական Լեռնաշխարհից հայտնաբերված խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները ժամանակագրորեն բաժանվում են երեք խմբի.

- ա) Ք.ա. XV-XII դդ. արձանագրված կնիքներ,
- բ) Ք.ա. XII-XI դդ. արձանագրություններ,
- գ) Ք.ա. X-VIII դդ. արձանագրություններ:

Արձանագրությունների խմբերն ըստ բովանդակության եւ կառուցվածքի: Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված արձանագրություններն, ըստ բովանդակության եւ կառուցվածքի, կարելի է բաժանել չորս խմբի.

- 1) միայն արքայի (կառավարչի±) անունով կնիքներ,
- 2) նվիրատվական արձանագրություններ^ա կապված շինությունների կառուցման եւ աստվածներին նվիրաբերման հետ,
- 3) հակիրճ գրություններ բարձրաքանդակների վրա, որոնցում նշվում են միայն արքայի անունն ու որոշ տիտղոսներ,
- 4) այս դեպքում եւս մեկուսի է ընկած Կալաքենդի գայիսունը, որը կրում է միայն քաղաքի տեր/տիրակալ տիտղոսը:

Կառուցվածքի մասին խոսելիս քննության առարկա կարելի է դարձնել միայն վերոնշյալ երկրորդ խմբի բնագրերը, որոնք ունեն եռամաս կառուցվածք.

- ա) նախաբան, որում հեղինակ-արքան ներկայանում է անունով, տիտղոս(աշար)ով եւ իր ծագումնաբանությամբ,
- բ) հաղորդման բուն նյութը,

գ) անեծքի բանաձեւը^ա ուղղված շինությունը կամ կոթողը ավերողներին ու պղծողներին:

Վերձանության ներկա վիճակը: Կատարված զգալի աշխատանքով հանդերձ, խեթա-լուվիական հիերոգլիֆիկայի վերձանության բազմաթիվ հարցեր սպասում են իրենց բացահայտմանը: Դեռեւս զգալի թիվ են կազմում անհայտ իմաստով մեհենագրերը:

Արձանագրությունների առավել դժվարընկալելի խումբը Մելիդ-Թեգարամայի Ք.ա. XII-XI դդ. բնագրերն են, որոնց բնորոշ է նշանների արխայիկությունը^ա գաղափարանշանների գերակշռմամբ:

Խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները հայագիտության համար ունեն եռակի կարեւորություն: Նախ^ա լինելով հայերենին մոտ ազգակից լեզվի հուշարձաններ^ա կարեւոր սկզբնաղբյուրներ են վաղնջահայերենի ուսումնասիրության համար, ապա^ա արժեքավոր վկայագրեր են Հայաստանի (հատկապես արեւմտյան շրջանների) Ք.ա. II-I հազարամյակների պատմության վերականգնման տեսանկյունից, եւ, ի վերջո, կիրառվելով նաեւ Հայկական լեռնաշխարհում^ա նպաստել են նախամաշտոցյան Հայաստանում գրային մտածողության զարգացմանը:

Այլ Երկրներում Ստեղծված Եվ Նախամաշտոցյան Հայաստանում Կիրառված Գրային Համակարերը: Ասուրա-Բաբելոնյան Մեպարության Որձածությունը Հայկական Լեռնաշխարհում

րային համակարգի ծագումը: Ասուրա-բաբելոնյան սեպագրությունը, ինչպես միջագետքյան ծագում ունեցող մյուս սեպագիր համակարգերը, ակունքներով կապվում է Ք.ա. III հազարամյակի շումերական իրականության հետ: Շումերները նախապես ստեղծել էին պատկերագրեր եւ գրում էին վերից վար ուղղությամբ:

Շումերական պատկերագրության հիման վրա Ք. ա. III հազարամյակի առաջին կեսին ստեղծվում է սեպագիրը, որի ծնունդը պայմանավորված էր Միջագետքում որպես հիմնական գրանյութ հանդես եկող կավի օգտագործմամբ: Միջագետքյան դպիրները թաց կավի վրա եղեգնյա ձողերով նշումներ էին անում, այնուհետեւ դրանք չորացնում ու թրծում էին: Թրծման շնորհիվ կավե սալիկները հազարամյակներ ի վեր պահպանեցին իրենց վրա դրոշմված գրերը, որոնք ընթերցվում են մեր օրերում: Թաց կավի վրա շրջանակներ, կոր եւ երկար գծեր քաշելը ավելի դժվար ու անհարմար էր, քան կարճ, ուղիղ գծիկներ դաջելը:

Դրանից ելնելով³ միջագետքյան դպիրները հետզհետեւ պատկերագիրը փոխարինեցին գծային նշաններով: Ծային նշաններից անցումը սեպանշաններին նույնպես պայմանավորված էր գրի եւ գրչության միջագետքյան առանձնահատկություններով: Բանն այն է, որ երբ հում կավի վրա գծիկները դաջում էին ուղղանկյուն եղեգնյա ձողերով, ձողը սեղմում էին կավին³ անկյուններից որեւէ մեկով եւ քաշում գիծը: Արդյունքում գծի սկիզբը դառնում էր սեպաձեւ, իսկ գիծը ստանում էր մեխի տեսք (այստեղից էլ արաբական գրականության մեջ սեպագրի 'մեխաձեւ' անվանումը, հայկական որոշ աղբյուրներում այդ նշանների համար գործածվում է նաեւ 'բեւեռագիր' տերմինը): Ք.ա. III հազարամյակում տեղի ունեցավ նաեւ գրության ուղղության փոփոխություն, ինչն անդրադարձավ գրանշանների արտաքին տեսքի վրա:

Սկզբնական վերից վար ուղղությունը երբ փոխարինվեց ձախից աջով, հին սալիկները գործածում էին 900-ով շրջված դիրքով, ուստի նշանները եւս շրջվեցին 900-ով (տե՞ս Պատկերագրից սեպագրի առաջացման եւ զարգացման աղյուսակը³ աղ. 1):

Սեպագիրը շումերներից անցավ աքքադացիներին, որոնք այն հարմարեցրեցին սեմական լեզվանյութին: Աքքադական սեպագրությունը Միջագետքում զարգացավ երկու ուղղությամբ. հյուսիսում³ ասուրական, հարավում³ բաբելոնյան (այդ պատճառով էլ աքքադական սեպագրությունը հայտնի է նաեւ 'ասուրա-բաբելոնյան' անվամբ): Այն Միջագետքից տարածվեց Առաջավոր Ասիայի շատ երկրներում, այդ թվում նաեւ Հայկական լեռնաշխարհում: Դառնալով միջազգային հաղորդակցության միջոց՝ ասուրա-բաբելոնյան սեպագրությունը մուտք է գործում հինարեւելյան մի շարք երկրներ: րահամակարգի նշաններից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն մինչեւ 20 տարբեր ընթերցում: Ընդհանուր առմամբ այն արտահայտում էր շուրջ 3000 վանկ եւ բառ:

Որոշիչների (դետերմինատիվների), թվանշանների եւ օժանդակ նշանների կիրառությանը կանդրադառնանք Վանի թագավորության սեպագրերի բաժնում, քանի որ դրանց սկզբունքները նույնն են երկու համակարգերում:

Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ: Ասուրա-բաբելոնյան սեպագրությունը բաղկացած էր շուրջ 600 նշանից, սակայն բոլորը չէ, որ գործածվել են Հայկական լեռնաշխարհում: Դրային համակարգը բառա-վանկային է:

Առանձին նշաններով արտահայտվել են ձայնավորները (հայտնի են չորսը՝ a, e, i, u), վանկերը, գաղափարագրերը եւ որոշիչները (ցուցիչները, դետերմինատիվները): Դրային համակարգի հայաստանյան կիրառությունը: Ասուրա-բաբելոնյան սեպագրության հուշարձանները Հայաստանում բաժանվում են երկու խմբի՝ օտարների թողած եւ տեղացիների հեղինակած: Առաջին խմբին կանդրադառնանք առաջիկայում: Երկրորդ խմբի հուշարձանները վերաբերում են բացառապես Վանի թագավորության ժամանակաշրջանին:

Սարգուրի Ա արքայի օրոք (Ք.ա. մոտ 835-825թթ.) Ուրարտուում սկսեց կիրառվել ասորեստանյան սեպագիրը՝ ասուրերեն լեզվով, որով էլ գրի են առնվել մայրաքաղաք Տուշպայի (Վանի) հիմնադրման մասին վկայող մեզ հասած վեց արձանագրությունները (որոնցից մեկը տե՞ս նկ. 1): Դրանք ունեն հետեւյալ բովանդակությունը.

Սարգուրիի արձանագրությունը՝ Լուծիպրիի որդու, մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի, արքայի, որին հավասարը չկա, զարմանահրաշ հովվի, (որ) չի վախենում կովից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին:

Սարգուրիին՝ որդին Լուծիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարկ վերցրեց: Սարգուրիին՝ որդին Լուծիպրիի, ասում է այսպես.- Ես քարերն այս Ալնիունու (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի՝

Ասուրերեն արձանագրություն է պահպանվել արժաթե մի կաթսայի վրա, ինչից իմանում ենք, որ այն Իշպուինի արքան նվիրել է իր թոռ Ինուշպուային. Իշպուինին՝ որդին Սարգուրիի, տվեց Ինուշպուային, քանի որ (նա) բարեհաճ է իր ծերունու նկատմամբ՝

Ասուրերենով բնագրեր են հանդիպում Վանի արքաների երկլեզու կոթողներում՝ գրված ուրարտական տեքստերից հետո, թարգմանելով վերջիններս: Այդպիսի արձանագրություն են կանգնեցրել Իշպուինի արքան եւ արքայազն Մինուան Քելիշինում (Ուրմիո լճից հարավ-արեւմուտք, Ռեւանդուզ քաղաքի մոտ, նկ. 2), որը պատմում է Խալդի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի-Մուսասիրում նրանց կատարած շինարարական աշխատանքների եւ պաշտամունքային արարողությունների մասին:

Մինուայի՝ Շուշանցում (Վանի մոտ) թողած կոթողներից մեկի վրա կողք կողքի առկա են ասուրերեն եւ փայներեն արձանագրություններ, որոնք, սակայն, չեն թարգմանում մեկմեկու: Բիայներեն բնագրում Խալդի աստծուց եւ Խալդյան դարպասներից մեծություն ու իշխանություն է ակնկալվում Իշպուինիի եւ Մինուայի համար, իսկ ասուրերենում պատմվում է Արծունիունու քաղաքում Խալդիի պաշտամունքին նվիրված պաշտամունքային շինությունների հիմնադրման մասին՝ կատարված միայն Մինուայի կողմից:

Տուշպա-Վանի միջնաբերդից գտնվել է ասուրերեն խիստ վնասված մի արձանագրություն, որը, ելնելով պահպանված բառերից մի քանիսի ընթերցումից, Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը համարել էր զոհաբերությունների մասին բնագիր:

1982թ. հրատարակելով բնագրի պահպանված հատվածները՝ Մ. Սալվինին կարծիք հայտնեց, որ այն կարող էր գրվել Սարդուրի Ա-ից մինչև Մինուայի կառավարման վերջն ընկած ժամանակաշրջանում (Ք. ա. IX դարի երկրորդ կեսից մինչև VIII դ. 80-ական թթ.):

Անդրադառնալով բնագրի պահպանված մասերի ուսումնասիրությանը՝ Ի. Մ. Դյակոնովը այն մեկնաբանում է որպես արձանագրված օրենսդրության հատված, որում մի հանցանքի համար սահմանվում է պատիժ՝ փոխհատուցել 10 ցուլ եւ 5 կով, մեկ ուրիշի համար՝ ցմահ աշխատանքային ծառայություն:

Ռուսա Ա-ի Թոփուզավայի (Ուրմիո լճից հարավ-արեւմուտք, Ռեւանդուզից Ուշնու տանող ճանապարհին) երկլեզու արձանագրությունը (նկ. 1) եւս հաղորդում է Արդինի-Մուսասիրում կատարված պետական-պաշտամունքային արարողությունների ու շինարարական աշխատանքների մասին: Ուշագրավ է, որ այս բնագրում Վանի տիրակալն իրեն անվանում է Խալդի աստծո ծառա, ժողովրդի հավատարիմ հովիվ... Նշենք նաեւ, որ Հայաստանի տարածքից գտնվել են Թոփուզավայի բիլինգվայի երկու կրկնօրինակները (Մերգեհ Քարվանից եւ Մովանայից):

Բիայնական երկլեզու արձանագրությունների բնորոշ կողմերից մեկն այն է, որ դրանց բիայներեն եւ ասուրերեն հատվածները բառացի, ստույգ չեն թարգմանում մեկմեկու:

Մեզ է հասել Արդինի-Մուսասիրի արքա Ուրզանայի կնիքը՝ ասուրերեն գրությամբ (տե՞ս նկ. 2): Կնիքի մակագրությունը մասնագիտական գրականության մեջ թարգմանվել է երկու տարբերակով. Կնիքը Ուրզանայի՝ արքայի Մուսասիրի, ագռավի (±) քաղաքի, որն օձի նման բացել է իր երախը թշնամի լեռներում՝ եւ Կնիքը Ուրզանայի՝ արքայի Մուսասիրի, ուրարտական (±) քաղաքի, որը վիշապ օձի նման բացել է երախը թշնամի լեռներում: Պահպանվել են նաեւ նույն արքայի ասուրերենով գրված նամակները, որոնք գտնվել են Ասորեստանից:

Հայտնվել է կարծիք, որ Դիոդորոս Միկիլիացու հիշատակած Հայաստանի արքա Բարզանեսը, որն Ասորեստանի հետ դաշնակցած հարձակվել է Մեդիայի (Մարաստանի) վրա, կարող էր լինել Մուսասիրի արքա Ուրզանան: Ուրզանա՝ անունը համադրվել է հայոց վերջին քրմապետ Արձանի անվան հետ:

Մրանք են այսօր մեր ունեցած ասուրերեն արձանագրությունները՝ թողնված հայաստանյան տիրակալների կողմից: Դրանք թվագրվում են Ք.ա. IX-VIII դարերով, գտնվել են երկու շրջանից՝ մայրաքաղաք Տուշպայից ու նրա մերձակայքից եւ գերագույն աստված Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի-Մուսասիրի շրջանից, վերաբերում են պետական-պաշտոնական եւ պաշտամունքային իրադարձություններին:

Տուշպա-Վանի միջնաբերդից գտնվել է ասուրերեն խիստ վնասված մի արձանագրություն, որը, ելնելով պահպանված բառերից մի քանիսի ընթերցումից, Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը համարել էր զոհաբերությունների մասին բնագիր:

1982թ. հրատարակելով բնագրի պահպանված հատվածները՝ Մ. Սալվինին կարծիք հայտնեց, որ այն կարող էր գրվել Սարդուրի Ա-ից մինչև Մինուայի կառավարման վերջն ընկած ժամանակաշրջանում (Ք. ա. IX դարի երկրորդ կեսից մինչև VIII դ. 80-ական թթ.):

Անդրադառնալով բնագրի պահպանված մասերի ուսումնասիրությանը՝ Ի. Մ. Դյակոնովը այն մեկնաբանում է որպես արձանագրված օրենսդրության հատված, որում մի հանցանքի համար սահմանվում է պատիժ՝ փոխհատուցել 10 ցուլ եւ 5 կով, մեկ ուրիշի համար՝ ցմահ աշխատանքային ծառայություն:

Ռուսա Ա-ի Թոփուզավայի (Ուրմիո լճից հարավ-արեւմուտք, Ռեւանդուզից Ուշնու տանող ճանապարհին) երկլեզու արձանագրությունը (նկ. 1) եւս հաղորդում է Արդինի-Մուսասիրում կատարված պետական-պաշտամունքային արարողությունների ու շինարարական աշխատանքների մասին: Ուշագրավ է, որ այս բնագրում Վանի տիրակալն իրեն անվանում է Խալդի աստծո ծառա, ժողովրդի հավատարիմ հովիվ... Նշենք նաեւ, որ Հայաստանի տարածքից գտնվել են Թոփուզավայի բիլինգվայի երկու կրկնօրինակները (Մերգեհ Քարվանից եւ Մովանայից):

Բիայնական երկլեզու արձանագրությունների բնորոշ կողմերից մեկն այն է, որ դրանց բիայներեն եւ ասուրերեն հատվածները բառացի, ստույգ չեն թարգմանում մեկմեկու:

Մեզ է հասել Արդինի-Մուսասիրի արքա Ուրզանայի կնիքը՝ ասուրերեն գրությամբ (տե՞ս նկ. 2): Կնիքի մակագրությունը մասնագիտական գրականության մեջ թարգմանվել է երկու տարբերակով. Կնիքը Ուրզանայի՝ արքայի Մուսասիրի, ագռավի (±) քաղաքի, որն օձի նման բացել է իր երախը թշնամի լեռներում՝ եւ Կնիքը Ուրզանայի՝ արքայի Մուսասիրի, ուրարտական (±) քաղաքի, որը վիշապ օձի նման բացել է երախը թշնամի լեռներում: Պահպանվել են նաեւ նույն արքայի ասուրերենով գրված նամակները, որոնք գտնվել են Ասորեստանից:

Հայտնվել է կարծիք, որ Դիոդորոս Միկիլիացու հիշատակած Հայաստանի արքա Բարզանեսը, որն Ասորեստանի հետ դաշնակցած հարձակվել է Մեդիայի (Մարաստանի) վրա, կարող էր լինել Մուսասիրի արքա Ուրզանան: Ուրզանա՝ անունը համադրվել է հայոց վերջին քրմապետ Արձանի անվան հետ:

Մրանք են այսօր մեր ունեցած ասուրերեն արձանագրությունները՝ թողնված հայաստանյան տիրակալների կողմից: Դրանք թվագրվում են Ք.ա. IX-VIII դարերով, գտնվել են երկու շրջանից՝ մայրաքաղաք Տուշպայից ու նրա մերձակայքից եւ գերագույն աստված Խալդիի պաշտամունքի գլխավոր կենտրոն Արդինի-Մուսասիրի շրջանից, վերաբերում են պետական-պաշտոնական եւ պաշտամունքային իրադարձություններին:

Գրակիր հուշարձանների քանակն ու տեսակները: Մեզ հասած ավելի քան 600 սեպագիր արձանագրությունների մեծագույն մասը գրված է քարի վրա: Ամենամեծ խումբը կազմում են արձանագրված ժայռերն ու քարե կոթողները: Հանդիպում են նաև գրություններ կավե, մետաղյա եւ ոսկրե իրերի վրա (կավե սալիկներ, ռազմական հանդերձանքի մասեր (վահաններ, սաղավարտներ, զրահաշապիկի մասեր, նետասլաքներ, ձիու սպառազինության մասեր եւ այլն), մետաղյա ամաններ (թասեր, կաթսաներ), կնիքներ ու կնքադրոշմներ, խեցեղեն ամաններ, կահույքի մասեր, պերճանքի առարկաներ եւ այլ իրեր):

Ենթադրվում է, որ գոյություն է ունեցել մագաղաթի (կամ այլ տեսակ փափուկ գրանյութի) վրա գրություն, ինչը երեւում է Կարմիր բլուրից գտնված փաթեթի կնիքի առկայությունից եւ այլ փաստերից:

Արձանագրությունների ծավալը եւ կառուցվածքը: Ըստ ծավալի² բնագրերը խիստ բազմազան են: Ամենածավալուն արձանագրությունը Արգիշտի Ա-ի գահակալության մասին պատմող Խորխոռյան տարեգրությունն է³ փորագրված Վանի ժայռի հարավ-արեւմտյան կողմում (նկ. 1), որի ոչ լրիվ պահպանված մասերը⁴ գրված ութ սյունակով, կազմում են 380 տող (ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարեգրության սկզբնական բնագրի ծավալը պետք է անցներ 500 տողից): Ծավալով ամենափոքր բնագրերը միատող են (տարողության, պատկանելության եւ այլ նշումներ):

Արձանագրությունները, հիմնականում, ունեն կադապարային կառուցվածք: Մեծ բնագրերին բնորոշ է եռամաս կառուցվածքը⁵ ներածություն, հաղորդման բուն նյութ եւ վերջաբան: Երեք մասերն էլ կառուցված են բնորոշ կադապար-արտահայտություններով, ընդ որում, դրանք տարբեր են⁶ կապված բնագրերի բովանդակության հետ: Արձանագրությունների սկզբնամասերը, սովորաբար, նվիրվում են Խալդի գերագույն աստծուն, որի հետ են այս կամ այն կերպ կապվում ներկայացվելիք իրադարձությունները: Միջնամասում նկարագրվում է իրադարձությունների ընթացքը (հիմնադրում, կառուցում, նվիրաբերում, զոհաբերություններ, զորահավաք, արշավանք, հաղթանակներ, ավարառություն, հարկահավաքում եւ այլն): Արձանագրություններն ավարտվում են հաղթող-արքայի հզորությունը ներկայացնող տիտղոսաշարով, կառուցող-արքայի փառաբանությամբ կամ օրհնությամբ, կոթողը փչացնողին ուղղված անեծքով... Հանդիպում են արձանագրություններ, որոնցում համառոտակի տրվում է բուն հաղորդումն⁷ առանց ներածականի կամ վերջաբանի:

Փոքրածավալ բնագրերին եւս բնորոշ է կադապարային կառուցվածքը (...-ի սեփականությունը, '...-ի գորանցի', '...-ի⁸ որդու ...-ի' եւ այլն): Մեծ քանակությամբ հանդիպում են տարողության նշումներ:

Բիայնական արձանագրությունների կառուցվածքի եւ բնորոշ արտահայտությունների ընդհանրությունները կարող են վկայել խեթական եւ միջագետքյան դպրությունների⁹ ուրարտականի վրա ունեցած, ինչպես նաև վերջինիս¹⁰ հին պարսկականի վրա թողած ազդեցությունների մասին:

Կառուցվածքի առումով բիայնական արձանագրությունների ամենաբնորոշ գծերն են կաղապարայնությունը եւ համառոտությունը (լակոնիզմը):

Մինուայի ջրանցքի՝ (որը ժողովրդի հիշողության մեջ մնաց Շամիրամի առու/ ջուր՝ անվամբ) անցկացման մասին պատմող մեզ հասած տասնչորս արձանագրություններից մեկը.

Խալդյան գորությամբ Մինուա Իշպուհնորդին այս ջրանցքը անցկացրեց:

Մինուայի ջրանցք՝ (է) անունը: Խալդյան մեծությամբ Մինուան արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի: Մինուան ասում է. – Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որեւէ մեկին ստիպի դրանք անել, ով ասի՞ Ես եմ այս ջրանքն անցկացրել, թո՞ղ Խալդին, Թեյշեբան, Շիվինին (բուր) աստվածները ոչնչացնեն նրան արեւի տակ...:

Մարզական իրադարձության արձանագրում.

Խալդյան գորությամբ Մինուա Իշպուհնորդին ասում է. – Հենց այս տեղից Արծիբինի անունով նժույզը Մինուայի տակ ցատկեց քսաներկու կանգուն:

Մինուան ասում է. – Ով այս արձանագրությունը տեղահանի, թո՞ղ ոչնչացնեն Խալդին, Թեյշեբան, Շիվինին նրա ընտանիքն (ու) ժառանգությունն արեւի տակ:

(Քսաներկու կանգունը հավասար է 11,39 մետրի. համաշխարհային այդ ռեկորդը գերազանցվել է միայն 1975 թվականին):

Վարչատնտեսական բնույթի բնագրերից մեկը կավե սալիկի վրա. (Դիմացի կողմում) - Արքան ասում է. - Ասա՞ Խալդիբուրային՞ դրամների մարդուն, Ալուանիի՞ խոհարարի մասին. հիրավի հաճելի թող լինի կյանքը (քո ?) աստծուն: Մի կնոջ՞ Մուիդային՞ խոհարարին, տվեցի (նրան) լինելու կին: Հիմա (?) արքան արքունիքից վերադարձրել է (նրան) Ալուանիին՞ խոհարարին...:

(Հակառակ կողմում) - Վերադարձրո՞ւ...: (Կնիքին) - [Ռուսայի՞] Էրիմեն[այի որդու]..... Բազմալեզու արձանագրություններում մեզ հետաքրքրող գրային համակարգը հանդիպում է միայն Վանի թագավորության մեհենագրերի եւ ասուրական սեպագրերի հետ, որոնց մասին արդեն խոսվել է նախորդ ակնարկներում: րության ուղղությունը եւ որոշ սկզբունքներ: Արձանագրությունների գրության ուղղությունը եղել է ձախից աջ: Բառանջատիչներ կիրառվել են միայն սեպագիր սալիկներում: Արձանագրություններում չի թույլատրվել տողադարձը. բառը, թերեւս, ընկալվում էր իբրեւ սրբազան հասկացություն եւ չէր կարելի այն մասնատել: Եթե տողը կարող էր կիսատ մնալ, կիրառվում էր հավելյալ ձայնավորների գրության սկզբունքը, օրինակ՞ Մինուա անունը կարող էր գրվել Mi-nu-O-a, Mi-i-nu-a (հնարավոր է նաեւ, որ կրկնությունը ցույց է տվել տվյալ ձայնավորի երկար արտասանությունը): Եթե տեղը սուղ էր, վանկային գրության փոխարեն կիրառվում էր գաղափարագիր, օրինակ՞՝ քաղաք՝ բառը ուրարտերեն հնչում է pa-ta-ri (հիմքում հայերեն՝ պատ՝ բառն է). եռավանկ գրությունը փոխարինվում է միավանկ գաղափարագրով՞ URU, որը նույնպես նշանակում է՝ քաղաք:

Բիայնական սեպագրության մեջ հանդիպում են բառի գրության կրճատման դեպքեր (օրինակ՝ կարասների վրայի տարողության գրառումներում *aqarqi* եւ *tlrusi* չափերի նշումը սկզբնատառերով՝ *a* եւ *tl*):

Նշանների թիվն ու գրային համակարգի տեսակն ըստ այդմ: Ուրարտական սեպագրության համակարգը բառավանկային է: Առանձին նշաններով արտահայտվել են ձայնավորները, վանկերը, գաղափարագրերը եւ որոշիչները (ցուցիչները, դետերմինատիվները):

Ձայնավորներից հայտնի են չորսը՝ *a*, *e*, *i*, *u*, վկայված են *ia* եւ *ue* երկհնչյունները:

Բաղաձայններ գրելու համար կիրառվում էր տվյալ բաղաձայնը պարունակող վանկերից մեկը (օրինակ՝ *l*՝ բաղաձայնի համար՝ *la*, *li/e*, *lu*, *al*, *il*, *el*, *ul*): Մեծամասնությունն են կազմում բաց վանկերը, կան նաեւ եռահնչյուն փակ վանկեր (*bar*, *din*, *hal*, *kur*, *man*, *sar* եւ այլն):

Այլ երկրներում Ստեղծված Եվ Նախամաշտոցյան Հայաստանում Կիրառված Բայինհամակարգերը: Վանի Թաավորության Սեպաիրը

Թվանշանները: Բիայնական սեպագրության մեջ թվերը նշվել են երկու կերպ՝ հատուկ սեպագիր-թվանշաններով եւ վանկանշաններով դրանց անունները գրելով:

Առավել տարածված է առաջին տարբերակը, որը համընդհանուր տարածում ունի սեպագրության աշխարհում: Սեպագիր թվանշանները ներկայացված են ադ. 1-ում:

Ամենափոքր նիշը նախատեսված էր կեսի (0,5), իսկ ամենամեծը՝ 1000-ի համար:

Համակարգը հնարավորություն էր տալիս գրելու անսահմանորեն մեծ թվեր. օրինակ՝ երկու '1000' նշանակող սեպանշանները իրար կողք դնելով՝ ստացվում է մեկ միլիոն (1000 X 1000 = 1000000)

Թյուրիմացությունից խուսափելու նպատակով անհրաժեշտ ենք համարում տալ մի մեկնաբանություն: Բիայնական թվաբանության հիմքում ընկած է եղել հաշվարկի տասնորդական համակարգը, ինչը երեւում է նաեւ բերված աղյուսակից, բացառությամբ մեկ դեպքի: Դա '60' թիվն է, որը տասնյակի շարքը չավարտված՝ ունենում է նոր նշան, եւ '70'-ը ներկայացվում է '60 + 10' բանաձեւով (փոխանակ '7 X 10'-ի), ինչը միջագետքյան միջավայրում տարածում ունեցած հաշվարկի 60-ական համակարգի հեռավոր մի արձագանքն է:

Որոշիչներ (ցուցիչներ, դետերմինատիվներ): Բառ-գաղափարանշաններից մի քանիսը կիրառվում են նաեւ որպես որոշիչներ (դետերմինատիվներ), որոնք դրվելով այլ բառերից առաջ՝ բնորոշել են դրանց, ցույց տվել ով կամ ինչ լինելը, տեսակը, բնույթը եւ այլ հատկանիշներ:

Համաժամանակյա գրավոր աղբյուրներից ստացվող տեղեկությունները: Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ընկալմանը, ինչպես նաեւ երկրի պատմության բազմաթիվ հարցերի լուսաբանմանը մեծապես օգնում են համաժամանակյա հետեւյալ գրավոր աղբյուրները. ա) ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ Ասորեստանում եւ Բիայնիլիում կիրառված, բ) բիայնական

մեհենագիր արձանագրությունները, որոնք կիրառվում են առնվազն Իշպուհնիի ժամանակաշրջանից (Ք.ա. 825-810թթ.), գ) խեթա-լուվիական հիերոգլիֆ արձանագրությունները, որոնք վերաբերվում են մինչև Ք.ա. VIII դարն ընկած ժամանակահատվածին, դ) Աստվածաշնչի Հին Կտակարանի գրքերը, որոնցում Արարատի թագավորությունը հիշատակվում է՝ կապված նախասկզբնական պատմության եւ Ք.ա. VII-VI դարերի իրադարձությունների հետ:

Այլ գրային համակարգերի հետ ունեցած առնչությունները: Վանի թագավորության սեպագրության ամենասերտ կապը միջագետքյան ծագում ունեցող մյուս սեպագիր համակարգերի հետ է, ինչը, հասկանալիորեն, կապվում է ծագումնաբանական ընդհանրության հետ: Իր հերթին բիայնական գրահամակարգը ազդել է հին պարսկական սեպագրի վրա:

Այլ Երկրներում Ստեղծված Եվ Նախամաշտոցյան Հայաստանում Կիրառված Գրային Համակարգերը: Վանի Թագավորության Մեպաիրը

Վերծանության ներկա վիճակը եւ հետագա խնդիրները: Թեպետ բիայնական սեպագիր արձանագրություններն ուսումնասիրվում են ավելի քան մեկ ու կես դար, սակայն տակավին շատ են կապակցված վերծանության չենթարկվող բնագրերը:

Վերջնական ճշտման կարիք ունի բիայնական սեպագրերի վերծանության հնչյունային կողմը. մինչ օրս արձանագրություններն ընթերցվում են սեպանշանների՝ ասուրերենում ունեցած հնչյունային արժեքներով: Արդեն նշել ենք Հայաստանում կատարված գրային ընդգրկուն բարեփոխման մասին, ինչի արդյունքում տրամաբանական է, որ գրային համակարգը հարմարեցվեր տեղի լեզվանյութին: Մի քանի նշանների պարզաբանված իմաստներն արդեն տարբերվում են Ասորեստանում ունեցածներից: Մյուս կողմից ակներե է, որ պետք է շարունակել ճշգրտման աշխատանքները: Բերենք մի օրինակ: Բիայնական սեպագրերում, ըստ այսօրվա ընթերցումների, բացակայում են 'օ' եւ 'վ' հնչյունները, որոնք հաճախ փոխարինվում են 'ու'-ով (բացի այդ, 'վ'-ն հանդես է գալիս նաեւ 'բ'-ի տեսքով): Ու'-ն, իբրեւ առանձին հնչյուն, ունի երկու սեպանշան եւ հանդես է գալիս նաեւ բազմաթիվ այլ վանկանշաններում. ո թր վանկի դեպքում 'ու'-ն պետք է կարդալ 'օ', ոթրի դեպքում 'վ' կամ 'ու'՝ հստակեցված չէ: Նման օրինակները շատ են...

Հունարեն Արձանարությունները

Հունական այբուբենը եւ նրա ծագման հարցը: Հունական գիրը համաշխարհային պատմության ընթացքում ստեղծված մեզ հայտնի առաջին այբուբենն է, որն օժտված էր ձայնավորներով: Հունահռոմեական աղբյուրներում պահպանված ավանդազրույցներն այդ գրային համակարգի ստեղծումը կապում են մի շարք առասպելական (Պալամեդես, Պրոմեթեոս, Օրփեոս, Մուսեոս, Լինոս, Կեկրոպս, Կադմոս) եւ պատմական (կատակերգու

Էպիխարմես, բանաստեղծ Սիմոնիդաս) դեմքերի հետ: Նրանց մեջ հասկապես ընդգծվում է Թեբեի առասպելական հիմնադիր, փյունիկյան Ազենոր (Փենիկս) արքայի որդի Կադմոսը, որը համարվել է փյունիկյան այբուբենը Հունաստան ներմուծողը: րաբանության ասպարեզում կատարված ուսումնասիրությունների զգալի մասում եզրակացվել է, որ նշված ավանդությունը պահպանել է պատմական իրականության հիշողությունը: Հետազոտողների մեծ մասի կարծիքով^ա հույները այբուբենը փոխառել են փյունիկեցիներից, ինչի օգտին (նշանների արտաքին նմանությունից բացի) վկայակոչում են նաև փյունիկյան եւ հունական տառերի անվանումները, որոնք իմաստ չարտահայտելով հունարենում^ա թարգմանվում են հին սեմական լեզուներով, որոնց շարքին է դասվում նաև փյունիկերենը (օր.^ա ալեֆ - 'ցուլ', բետ - 'տուն', գիմել - 'ուղտ', դալետ - 'դուռ' եւ այլն):

Կատարելագործելով փյունիկյան այբուբենը (տե՞ս աղ. 1)^ա հույները առանձին տառեր նշանակեցին ձայնավորների համար, փոխեցին բաղաձայնային կազմը, ավելացրեցին 'ֆի', 'խի', 'փսի' բաղաձայնները: Որոշ փոփոխության ենթարկվեցին տառերի անվանումները (օր.^ա ալեֆ - ալֆա, բետ - բետա, գիմել - գամմա, դալետ - դելտա եւ այլն):

Այլ Երկրներում Ստեղծված Եվ Նախամաշտոցյան Հայաստանում Կիրառված Գրային համակարերը:

Հունական այբուբենը եւ նրա ծագման հարցը: Սկզբնապես հունական գիրն ուներ աջից ձախ ուղղություն, որը ժամանակի ընթացքում վերածվեց պարուրածեի (բուստրոֆեդոնի), իսկ Ք.ա. 4-րդ դարում հաստատվեց ձախից աջ ուղղությունը, որն առ այսօր մնում է անփոփոխ:

Հունական այբուբենի տառերն օգտագործվել են նաև թվային նշանակությամբ:

Նախամաշտոցյան Հայաստանում հունարենի կիրառության ուսումնասիրության պատմությունը: Հունարեն առաջին բնագրերը Հայաստանում հանդես են գալիս Ք. ա. 3-րդ դարից սկսած^ա իբրեւ հետեւանք Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Արեւելքում հելլենական մշակույթի տարածման: Դրանց ուսումնասիրությունը գիտության համար առնվազն երկակի կարեւորություն ունի. նախ Հայաստանի պատմության ու մշակույթի, ապա^ա հելլենիզմի դրսևորման օջախներից մեկի առանձնահատկությունների լուսաբանման առումով:

Քանի որ մեզ հետաքրքրող դարաշրջանում (Ալ. Մակեդոնացու արշավանքներից մինչեւ Մեսրոպ Մաշտոցի գյուտը) Հայաստանը բաժանված էր մի քանի հայկական պետական կազմավորումների (Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք եւ Կոմմագենե), նպատակահարմար ենք գտնում հունարենի կիրառությունը ներկայացնել ըստ թագավորությունների:

Մեծ Հայքի թագավորություն: Նոր ժամանակներում գիտությանը հայտնի դարձած առաջին հունարեն բնագիրը Մեծ Հայքի արքա Բակուր III-ի (161-163թթ.) արձանագրությունն էր Հռոմում գրված մարմարյա գոհասեղանին^ա ի հիշատակ իր եղբորը (գծանկարը, տե՞ս նկ. 1, առաջին անգամ հրատարակվել է 1602 թվականին): Դատելով սկզբնաղբյուրների

հաղորդումներից^ա Բակուր III-ը Հռոմում պետք է եղած լինի 163թ. վերջին կամ 164-ին: Արձանագրված է հետևյալը.

Մ[ստվածներին] Ա[նդրաշխարհի].

Ավրելիոս Պակուրը (Բակուրը)^ա արքան Մեծ Հայքի, գնեց սարկոֆագ Ավրելիոս Մերիթատին^ա քաղցրագույն եղբորը, ինձ հետ ապրած հիսունվեց տարի, երկու ամիս:

Հռոմում արդեն գահընկեց եղած Բակուր արքան եւ նրա եղբայր Միհրդատը (բնագրում^ա Մերիթատ) ընդունվել էին կայսերական Ավրելիոս ազգակցության մեջ, այդ պատճառով էլ այս արձանագրության մեջ կրում են Ավրելիոս պատվանունը՝ Մեզ է հասել նույն արքայի եւս մի արձանագրություն^ա արված արծաթե թասի վրա, որը գտնվել է Հյուսիսային Կովկասում, Մայկոպի մոտ գտնվող Դուխովսկայա կայարանից: Բարձր արվեստով պատրաստված թասը պատված է տոնախմբությունների ու թատերական խաղերի տեսարաններով (նկ. 2) եւ կրում է հունարեն հակիրճ գրություն^ա Պակուր (Բակուր) արքայից՝ (նկ. 3):

Թե երբ եւ ինչպես է հասել թասը Հյուսիսային Կովկաս, ում է ուղղված եղել այն, հայտնի չէ. դրա մասին այսօր կարելի է միայն ենթադրություններ անել Նախամաշտոցյան Հայաստանում հունարենի կիրառության ուսումնասիրության պատմությունը: Հայոց արքաների^ա Հայաստանից դուրս հայտնաբերված արձանագրությունների մեջ հիշատակության է արժանի Կապադովկիայից՝ Կեսարիայի շրջանից 1891թ. գտնված սաղավարտաձեւ դիմակը՝ հունարեն արձանագրությամբ:

Արձանագրությունը բաղկացած է երկու մասից՝ Առաջին մասում ընթերցվում է^ա Տիգրան(ի) թագավոր(ի) Հայաստանի: րակիր հուշարձանը ուղարկվել է Կոստանդնուպոլիս, որից հետո դրա մասին որեւէ տեղեկություն հայտնի չէ:

Արձանագրության առաջին հրապարակումը եղել է 1908 թվականին, սակայն այն անհասկանալիորեն չի մտել հայագիտության շրջանառության մեջ:

Արձանագրության երկու հատվածները գրված են ոչ գրագետ հունարենով եւ, չնայած փոքրածավալ լինելուն, բավական բարդություններ են առաջացնում ընթերցման ժամանակ: Այս հատվածները, համապատասխան ուղղումներ կատարելով, մեր խնդրանքով հունարենից թարգմանեց եւ ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը, որը շնորհակալությամբ ներկայացնում ենք ստորեւ. ա) Տիգրան(ի) թագավոր(ի) Հայաստանի, (բ) Արարչագործությունից աշխարհի 5571 (կամ 5509) ... (±) չորս հազար հինգ հարյուր քառասուներկու... Մահվան դիմակների կիրառությունը բավական տարածված է Հին աշխարհում (Եգիպտոս, Միկենք, Իրան, Ասորեստան, նաեւ Մեքսիկա եւ այլն) եւ կապվել է անդրաշխարհի հետ առնչվող հավատալիքներին: Մակայն այդ ծիսակարգը լիովին բացակայում է Հայաստանում, ինչից, թերեւս, կարելի է ենթադրել, որ թաղվողը եղել է ոչ հայազգի, հայոց արքայի օտարազգի զորավարներից մեկը:

Տառասխալների առկայությունից, ոչ գրագետ հունարենից կարելի է ենթադրել, որ գրության կազմողը չի եղել ո՞չ հույն, ո՞չ էլ հայ (հակառակ դեպքում արքայանունը ճիշտ կգրվեր):

Ելնելով երկրանվան Arman գրելաձևից՝ հնարավոր է ենթադրել, որ գրության կազմողը ունենցել է սեմական ծագում:

Ուշվ կարող էր լինել արձանագրության մեջ նշվող հայոց արքա Տիգրանը:

Մեր պատմությունից հայտնի Տիգրան անունը կրող առաջին արքան Ք.ա. 6-րդ դարում իշխած Տիգրան Երվանդյանն է: Նրա թեկնածությունը բացառվում է, քանի որ նրա օրոք, այդ ժամանակաշրջանում հունարենը չի կիրառվել մեր տարածաշրջանում:

Տիգրան Բ-ի հոր՝ Տիրան-Տիգրան Ա-ի՝ Կապադովկիայում լինելու մասին որեւէ տեղեկություն չունենք: Հունագիր հուշարձանը կարող էր վերաբերել Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանին՝ Ք.ա. 93 եւ 91 թվականներին: Եթե այս կարծիքը հաստատվի, հունագիր հուշարձանը կարող է համարվել նշված արշավանքների մասին առայժմ հայտնի միակ նյութական վկայությունը: Չի բացառվում, սակայն, որ հունագիր հուշարձանը կապված լինի Տիգրան -ի, որը Ք.ա. 20 թվականին Հռոմի կողմից ուղարկվեց Հայաստան, կամ Հայոց գահին հավակնող հռոմեական դրածոներ Տիգրան Ե-ի (մոտ 6 թ.) եւ Տիգրան Զ-ի (60-61 թթ.) հետ, որոնք անցել են Կապադովկիայով:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի արձանագրության երկրորդ հատվածը, որում հիշատակվում է թվական՝ հաշված՝ աշխարհի արարչագործությունից: Բանն այն է, որ՝ աշխարհի արարչագործությունից՝ հաշվարկվող մինչ օրս մեզ հայտնի տոմարները ի հայտ են եկել միջնադարում: Այսինքն՝ այս դեպքում պետք է ենթադրել, որ հունարեն արձանագրության երկրորդ հատվածը ավելացվել է միջնադարում կամ էլ՝ Ք.ա. I – I դարերում մեր իրականության մեջ գոյություն է ունեցել՝ աշխարհի արարչագործությունից՝ հաշվարկվող տոմար:

Տիգրան Բ Մեծի պատկերաքանդակով եւ մեծածավալ հունարեն արձանագրությամբ

կոթող է հայտնաբերվել Արեւմտյան Հայաստանում, որը 1869թ. Տրապիզոնի

անգլիական հյուպատոսի կողմից ուղարկվել է Բրիտանական թանգարան: Հասել է

այն Լոնդոն, թե ոչ՝ մեզ հայտնի չէ. համենայն դեպս, այն մինչ օրս չի

հրատարակվել եւ դարձել Տիգրան Բ-ի ժամանակաշրջանի պատմության սկզբնաղբյուր

Այս տեղեկությունը պարունակող հաղորդագրության մեջ նշվում է, որ ի պատասխան Կ.Պոլսի ռուս դեսպան գեներալ Իգնատևի հարցումին, թե ինչու է թուրքական կառավարությունը երկար ժամանակ խոչընդոտել կոթողի տեղափոխմանը, մեծ վեզիրը պատասխանել է. 'Դա արվում է ոչ ամենեւին հնությունների մասին նոր օրենքի ուժով, այլ որովհետեւ կառավարությունը նախատեսում էր ոչնչացնել այն, որպեսզի չբորբոքվի հայերի մեջ նիրհող ազգայնականության զգացումը': Նշվում է նաեւ, որ դրանից դեռեւս տարիներ առաջ Արեւմտյան Հայաստանի տեղական կառավարիչները հրահանգ էին ստացել

ոչնչացնելու բոլոր հուշարձանները, որոնք կարող էին հիշեցնել հայերին իրենց փառավոր անցյալը:

Հրահանգի իրականացման արդյունքում, ըստ թերթի, ոչնչացվել են բազմաթիվ դեռևս չընթերցված եւ այդպես էլ գիտությանը անհայտ մնացած սեպագիր արձանագրություններ...

Ուշագրավ հունարեն մի արձանագրություն է հայտնաբերվել 1819թ. Ուրմիո լճից հարավ, Ջագատու գետի միջին հոսանքի շրջանում գտնվող Քարաֆտու լեռան վրա գտնվող ժայռափոր շինության մեջ (Կ. Վ. Տրեւերը հնարավոր է համարում, որ այս անունը լինի հին հայկական 'Քարափտուն' տեղանվան աղավաղված տարբերակը): Դատելով կառույցի առանձնահատկություններից եւ երկտող հունարեն արձանագրությունից (նկ. 2)^ա այն եղել է Վահագն-Հերակլեսին (որի անունը նշվում է բնագրում) նվիրված պաշտամունքային ամրացված կենտրոն:

1898-1899թթ. Կ.Ֆ.Լեհման-Հաուպտը ուսումնասիրություններ կատարեց Ֆարկին հնավայրի բերդի^ա իր կարծիքով^ա Տիգրանակերտի ավերակներում, հատուկ ուշադրություն դարձնելով ամրոցի մուտքի մոտ պարսպի շարվածքի հունարեն արձանագրության բեկորներին (նկ.1), որն իրենից առաջ նկատել են Բ.Թեյլորը 1865թ. եւ պորտուգալացի ճանապարհորդ Ա. Թենրեյրոն դեռևս 1560 թվին:

Արձանագրության պահպանված ութ քարերով (նկ.2, դրանք Կ.Ֆ.Լեհման-Հաուպտի կարծիքով^ա սկզբնապես դասավորված են եղել հինգ շարքով, ընդ որում, առաջինը, որում պետք է լինեք արքայի անունը, չի պահպանվել), դժբախտաբար, հնարավոր չէ վերականգնել այն: Կ.Ֆ.Լեհման-Հաուպտի հետ բնագրի ընթերցման ուղղությամբ ջանքեր են գործադրել ժամանակի հայտնի հնագրագետներ Ֆ.Հ. ֆոն աերթրինգենը, Թ.Նյոլդեկեն, Ու. ֆոն Վիլամովից-Մյոլենդորֆը եւ Վ. Դիտենբերգերը, սակայն չի հաջողվել վերականգնել ամբողջական եւ կապակցված մի բնագիր:

Արձանագրության հնագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն պետք է գրված լինի III-IV դարերում, ինչի մասին են վկայում այդ ժամանակաշրջանին բնորոշ կցագրումների մեծ քանակությունը (միաձուլված են երկուսից մինչեւ չորս տառեր) եւ համառոտագրությունները: Պահպանված հատվածների քննությունից կարելի է հասկանալ, որ այն պարունակում է հայոց արքայի դիմումը քաղաքի բնակչությանը: Արքան, ինչպես նշում է Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը (եւ նրա հետ համաձայն են մյուս ուսումնասիրողները), հայոց թագավորն է, քանզի բնագրում պարսից արքան եւ հռոմեացիները հիշատակվում են երրորդ դեմքով: Արքան քաղաքի բնակչությանը դիմում է՝ ձեր համայնքը, դուք՝ արտահայտություններով, ինչը Հին Հայաստանում քաղաքային ինքնավարության գոյությունը վկայող փաստերից է: Արքան հանդիմանում է քաղաքի համայնքին ապստամբելու համար, որին հետեւել է իր ռազմական միջամտությունը:

Ձեր համայնքն ապստամբեց եւ պայքար սկսեց [...] հետ Ահա թե ինչու մենք քաղաքը հանձնեցինք մեր զորքին, որպեսզի կանխենք հետագա հանդգնությունը եւ որպեսզի ինչ-որ

մասը [չապստամբի կրկին] մեր դեմ: Իսկ այն չարիքը, որը դուք կրեցիք, թե ոչվ էր դրա մեղավորը, ինքներդ գիտեք:

Մեկ այլ հատվածում արքան հաղորդում է.

Ես հրամայեցի ամրացնել սա դարպասների մոտ, եւ ինչպես որ գրված է հրամանում, այնպես էլ փորագրել եւ ամրացնել: Ես հրամայեցի նույնպես, որ դարպասների մոտ բոլոր մյուս քաղաքների, որոնց մենք իշխում ենք աստվածների նախախնամությամբ եւ բարեհաճությամբ, նույնպես քանդակեն [նման արձանագրություններ]:

Արձանագրության մեջ պահպանված մի քանի արտահայտություններից (նախնինների բախտ, թշնամիների տապալում, աստվածների բարեհաճություն, արքայի բախտ) Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը եզրակացնում է, որ հեղինակ-արքան պետք է վտարանդիությունից եւ ինչ-որ խռովություններից հետո նոր վերադարձած ու հաստատված լինի գահին: Նրա կարծիքով^ա արձանագրության հեղինակը Պապ թագավորն է, որն այն կանգնեցրել է Ձիրավի ճակատամարտից հետո:

Այս կարծիքը չեն կիսում Յ.Մարկվարտը, նրան հետեւելով^ա Հ.Մանանդյանը, .Մարգայանը, Ա.Մարտիրոսյանը: Բանն այն է, որ արձանագրության մեջ հայոց արքան վկայակոչում է ոչ թե մեկ աստծո, այլ աստվածների, իսկ պարսից արքային մեծարում է աստված, արքայից արքա՝ պատվատիտղոսներով, որից ելնելով^ա հիշյալ հեղինակները բացառում են Պապի կամ որեւէ քրիստոնյա արքայի թեկնածությունը: Յ. Մարկվարտը նկատում է, որ Պապի ժամանակ կարող էր լինել նահանջ քրիստոնեությունից, ինչի պատճառով հայ եկեղեցին նրան վերագրել է դիվային հատկանիշներ, սակայն վերադարձ բազմաստվածությանը չի կատարվել: Պապի թեկնածությունը մերժվում է նաեւ այն պատճառով, որ Տիգրանակերտը ավերվել էր նրա հոր^ա Արշակ Բ-ի օրոք, իսկ վերջինիս գահընկեցությունից հետո Աղձնիք նահանգը^ա Տիգրանակերտ քաղաքով, գտնվում էր պարսիկների ձեռքում: Յ.Մարկվարտն ու նրա կարծիքի հետեւորդները արձանագրության հեղինակ են համարում Տրդատ -ին^ա բնագրի ստեղծման ժամանակը համարելով նրա իշխանության առաջին^ա մինչեւ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ժամանակաշրջանը:

Արձանագրության հեղինակի հարցը բուռն քննարկումների առարկա դարձավ նաեւ 1950-1960-ական թվականներին, այդուհանդերձ, այն չի կարելի վերջնականապես լուծված համարել:

Թագավորական պարգեւագրի արձանագրում է 1908թ. Ապարանից գտնված Մեծ Հայքի Տրդատ արքայի հունագիր կոթողը (նկ.1): Արձանագրությունը հայտնաբերել է հայագետ . Հովսեփյանը. այն նախապես գտնվել է մոտակա ամրոցի ավերակներում:

Արձանագրությունը հաղորդում է հետեւյալը. Տիրիդատես Մեծը, Մեծ Հայքի թագավորը տվեց նթունու (տոհմից) Հռոդոմիթրի որդուն ուտեստ (±) Նիզ նորաքաղաքը ... փետրվարի...՝

Ս..Կրկյաշարյանի կարծիքով, Հռոդոմիթր՝ անունը հայերեն Վարդ-Միհրի հունարեն թարգմանությունն է: Ուսումնասիրողների շրջանում բուռն բանավեճ է ծավալվել

արձանագրության հեղինակի ինքնության վերաբերյալ. ուժը Տրդատն է նա՞ Ա-ն, Բ-ն, թե՛ -ն: Բանավեճն այսօր էլ չի կարելի ավարտված համարել, թեպետ առավել ընդունված է համարվում Տրդատ Ա-ի թեկնածությունը:

1911թ. Արմավիրի բլրի հարավային լանջին գտնվեց մի մեծ քար՞ երեք հունարեն արձանագրություններով (նկ. 2-4), որոնց վերծանության ուղղությամբ առաջին քայլերը կատարեց Յ.Սմիրնովը: Հեղինակի մահվան պատճառով ուսումնասիրությունը կիսատ մնաց, իսկ նրա գրառումները տրվեցին Ա.Բոլտունովային՞ այն շարունակելու հանձնառությամբ:

1927թ. (1911թ. հայտնաբերվածից 10-12 մետր հեռավորության վրա) Արմավիրում գտնվեց նոր քար՞ չորս հունարեն արձանագրություններով (առաջին երեքը՝ նկ. 5-7): Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բոլոր յոթ արձանագրություններն էլ գրված են ոչ թե վիմագիր կոթողային, այլ մագաղաթի եւ խեցեղենի գրառումներում տարածված ոճով: Չորս արձանագրություններից երկուսի մեկնաբանումն առաջին անգամ կատարեց Ս.Տեր-Հակոբյանը: Ըստ նրա՞ առաջին հատվածը՝ մի բարեկամական ողջունագրում է Միթրա եւ Օրոնտ թագավորների՝ Երկրորդ հատվածում ընթերցելով սելեկյան ամսանունները՞ նա կարծում է, որ այն Հայաստանում սելեկյան տոմարի անցման պաշտոնական որոշման արձանագրումն է: Եվ արձանագրության երկրորդ տողի տառերը (լ՛ եւ ա՛) համարելով թվական՞ 31, հաշվելով սելեկյան թվարկության սկզբից (Ք.ա. 313-31 = Ք.ա. 282 թ.), ստացավ, իր կարծիքով, բնագրերի եւ հիշատակվող դեպքերի ու անձանց ժամանակաշրջանը: այթակղիչ այս բացատրությունը հետագայում մերժվեց Կ.Տրեյերի կողմից, քանի որ այդ տառերը պարզապես բաց են թողնվել երկրորդ ամսանունից, ապա լրացվել (Ապելլաիոս-ի փոխարեն գրված է Ապելիոս): Նույն այս արձանագրության մեջ բաց է թողնված երրորդ ամսանունը, որն ավելացվել է լուսանցքի համապատասխան տողի դիմաց. դա կարող է վկայել գրագրի ոչ այնքան լավ իմացության մասին:

1927թ. Արմավիրի պեղումների արդյունքների մասին ընդհանրացնող հրապարակումով հանդես եկավ Ս.Տեր-Ավետիսյանը, որում նա արձանագրությունների չափագրության հետ ներկայացրեց նաեւ չորս բնագրերի համառոտ բովանդակություններն՞ ըստ Ա.Բոլտունովայի (Սմիրանիշվիլի) նախնական հաղորդման: Հաղորդման համաձայն՞ արձանագրությունները վերաբերում են Ք.ա. II դարին: Դրանցից առաջինը հայոց արքաներից մեկի նամակն է մյուսին, երկրորդը բարեմաղթություն է Պոնտոսի արքա Փառնակեսին տարվա բոլոր 12 ամիսների ընթացքում, որը, հավանաբար, գրել է հայոց Արտաշես արքան (ենթադրության պատճառը հայոց արքայի անվան պահպանված առաջին երկու տառերն են՞ Ար), երրորդը ողջունագրում է Նումենիոսին, չորրորդը Սելեկյան արքաներից մեկի դեպի Հայաստան կատարած արշավանքը նկարագրող բանաստեղծական հատված է:

Շարունակելով Յ.Սմիրնովի աշխատանքները՞ Ա.Բոլտունովան 1942թ. ներկայացրեց Արմավիրից հայտնաբերված բոլոր յոթ բնագրերի նախնական ընթերցումը, որի վերաբերյալ իրենց դիտարկումները հայտնեցին Բ.բակովը, Հ.Մանանդյանը, .ոյանը, Կ.Տրեյերը եւ ուրիշներ: Արձանագրությունների վնասվածությունը տարակարծությունների առիթ է դարձել

ուսումնասիրողների շրջանում^ա կապված ոչ միայն առանձին բառերի ու հատվածների, այլև ամբողջական արձանագրությունների մեկնաբանման հետ:

Արմավիրից հայտնաբերված հունարեն առաջին բնագիրը 8 տողանոց չափածո մի հատված է (գծանկարը տես նկ. 1), որի առաջին տողում Յ.Սմիռնովը Ս.Ժեբեյովի օգնությամբ ընթերցում է՝ որձեր եւ օրեր՝ խրատական պոեմի հեղինակ Հեսիոդոսի, իսկ երկրորդում^ա նրա եղբայր Պերսեսի անունները: Ըստ Ա.Բոլտունովայի^ա արձանագրության ընդհանուր իմաստը բարոյախրատական է:

Ընդունելով Ա.Բոլտունովայի ընթերցումն ու իմաստի բարոյախրատական լինելը^ա Հ.Մանանդյանը, վկայակոչելով Հեսիոդոսի եւ նրա եղբոր մասին հին աղբյուրներում պահպանված կենսագրական տեղեկությունները, գտնում է, որ այն՝ դատապարտում է ժառանգական գույքի անարդար բաժանումը եւ խրատում է մոտիկ ազգականներին ապրել խաղաղ ու համերաշխ եւ աջակցել ու օգնել միմյանց:

Կ.Տրեյերը եւս, նշելով, որ սա բարոյախրատական բովանդակությամբ գրական ստեղծագործության հատված է, մատնանշում է Հեսիոդոսին վերագրված գուշակությունների շնորհի մասին տեղեկությունները^ա դրանով իսկ բացատրելով նրա անվան առկայությունը մի տեղում, որն, ըստ իր տեսության, եղել է Արամանյակին նվիրված գուշակությունների սույաց անտառը՝ Երկրորդ հատվածը նույնպես չափածո է, բաղկացած է 12 տողից (գծանկարը՝ նկ. 2), որոնցից առաջինը, թերեւս, վերնագիրն է: Հաջորդ տողն ընթերցվում է. ‘Չկա որեւէ տեղ ավելի ռազմատենչ աստվածուհի’: Վերջինս նույնացվում է հայոց Անահիտ դիցուհու հետ: Հաջորդ տողերն ասվում են դիցուհու անունից, նա սպառնում է իսկապես պատժել մարդկանց վատ արարքները: Այստեղ եւս Ա.Բոլտունովան եւ Հ.Մանանդյանը տարակարծիք են.

Ա.Բոլտունովան դիցուհու խոսքում տեսնում է սպառնալիք ընդդեմ՝ անարդարացի եւ վատ սկզբունքների, իսկ Հ.Մանանդյանը^ա կալվածքների անարդարացի բաժանման: Կ.Տրեյերը այս հատվածի վերջում եւ հաջորդում ընթերցում է [գուշակություն], առաքված քամու փչելով (շնչով)՝ արտահայտությունը^ա համարելով իր տեսության հաստատում:

Երկու հատվածների տաղաչափության, բովանդակության եւ դարձվածքների վերլուծությունից Յ.Սմիռնովը եւ Ա.Բոլտունովան եզրակացնում են, որ սրանք ինչ-որ անհայտ ողբերգության հատվածներ են, որի հեղինակը քաջածանոթ է եղել Հեսիոդոսի, Սոֆոկլեսի, Եվրիպիդեսի եւ Մենանդրոսի ստեղծագործություններին:

Նրանք հավանական են համարում, որ սա տեղական պոետի ստեղծագործություն է եւ գտնում, որ նա, ըստ երեւոյթին, հայոց Արտավազդ Բ արքան է: Նման եզրակացության համար հիմք են տալիս Արտավազդ Բ-ի արքունիքում Եվրիպիդեսի ‘Բաքոսուհիների’ բեմականացումը եւ Պլուտարքոսի տեղեկությունը նույն արքայի հունարենով գրած ողբերգությունների ու այլ ստեղծագործությունների մասին, որոնցից մի քանիսը պահպանվել եւ հայտնի էին նրա ժամանակներում Հայաստանի սահմաններից դուրս:

1911թ. հայտնաբերված քարի երրորդ բնագիրը (գծանկարը՝ նկ.3) հնգատող նվիրատվական մի արձանագրություն է, որը Ա.Բոլտունովան վերծանում է. 'Չորս ձի, մեկ կառք՝ նվիրաբերված Եվտիխարմիդասի, եւ մի փոքր նկար՝ Պելամիդեսի կողմից: Հետեւելով Ս.Լիսիցյանի ցուցումին՝ Ա.Բոլտունովան հակված է ուղիղ կապ տեսնելու չորս ձի եւ մի կառք նվիրաբերելու (ինչը, թերեւս, առնչվում է Արեւի պաշտամունքին) եւ Արտավազդ Բ-ի դրամներին պատկերված քառաձի կառքի միջեւ: Նրա ընթերցման հետ համաձայնելով՝ Հ.Մանանդյանը ենթադրում է Արմավիրում Ք.ա. III-II դարերում հունական գաղութի եւ տաճարի գոյություն, ինչն, իրավացիորեն, սուր քննադատության է ենթարկում Կ.Տրեւերը:

Յ.Սմիռնովը ընթերցման առաջին փորձի ժամանակ հնարավոր էր համարում առաջին անվան մասնատումը եւ բնագրի երրորդ տողի երկրորդ կեսում 'Խարմի' անվան ընթերցումը՝ այն համարելով Հարմա նահապետի անունը: Կ.Տրեւերը համաձայնելով Յ.Սմիռնովի հետ՝ խիստ տրամաբանական է համարում այստեղ Հարմայի հիշատակությունը (որին, ըստ հայոց ազգային ավանդության, եղամ նահապետը ծնելով Արմավիրում՝ թողել է այնտեղ եւ հեռացել հյուսիս-արեւելք), մանավանդ որ Արմավիրում, ըստ Մովսես Խորենացու, Արեւի եւ Լուսնի աստվածների կողքին պաշտվել են հայոց արքաների նախնիները: Ուստի առաջարկում է բնագրի հետեւյալ ընթերցումը. 'Չորս ձի [եւ] կառք՝ (նվիրաբերված) Հարմային. Պելամիդեսի պնակիտն [է]: Բացի այդ, Կ.Տրեւերը հատուկ ուշադրություն է դարձնում բնագրից աջ, երրորդ տողի ուղղությամբ պահպանված [գուշակություն], առաքված քամու փչելով (շնչով)' արտահայտությանը, որն առկա է նաեւ երկրորդ բնագրում:

Առաջին երկու բնագրերի՝ Արտավազդ Բ-ի հեղինակած ողբերգության հատվածները լինելու հարցում համամիտ լինելով Յ.Սմիռնովի եւ Ա.Բոլտունովայի կարծիքներին, .ոյանը փորձում է ավելի հիմնավորել այդ տեսակետը՝ ուշագրավ թատերագիտական քննությամբ: Նա միանգամայն հավանական է համարում, որ նման մի հատված է նաեւ երրորդ բնագիրը, որը ոչ թե առանձին նվիրատվական արձանագրություն է, այլ՝ միեւնույն ստեղծագործության կտորներից մեկը, որը նա պայմանականորեն, ըստ առաջին հատվածի սկզբնատողի, կոչում է 'Ռազմատենչ աստվածուհին':

Արմավիրից հայտնաբերված չորրորդ՝ 1927թ. գտնված առաջին՝ 11 տողանոց բնագիրը (նկ.1), որն, ըստ Ս.Տեր-Հակոբյանի, 'մի բարեկամական ողջունագրում է Միթրա եւ Օրոնտ թագավորների', Ա.Բոլտունովան համարում է Արտաշես Ա արքայի դիմումը Եբրոնտ արքային՝ թարգմանելով հետեւյալ կերպ. 'Արքա Ար [տաշես] Մադոեիրոն Միթրասը ողջոյն է հղում Եբրոնտ արքային: Եթե դու ողջ-առողջ ապրում ես, ապա լավ կլիներ, որ ողջ-առողջ ապրեր նաեւ նրա սերունդը:

Ողջ-առողջ լինելով՝ դու կբոլորես թագավորությունը: Արտաշես անունը նա վերականգնում է՝ կարծելով, որ առաջին տողի վերջին երկու տառերը՝ 'ա' եւ 'ր', արքայանվան կրճատումն են: Հաջորդ երկու բառերը նա համարում է տիտղոսներ: Հ.Մանանդյանը չընդունելով նման մեկնաբանությունը՝ առաջարկում է բնագրի առաջին տողի վերջին երկու տառերը միացնել երկրորդ տողին եւ, կատարելով մի տառի փոփոխություն, չորս տողերը կարդալ.

Մյուս կողմից՝ Սիբիրյան թագավոր Միխայիլ Բարեկեցի է ուղարկում Երվանդ թագավորին: Միխայիլն նա նույնացնում է Մովսես Խորենացու հիշատակած Երվանդ արքայի եղբայր Երվազ քրմապետի հետ: Կ.Տրեյերը հիմնականում համաձայնելով Ա.Բոլտունովայի ընթերցման եւ Հ.Մանանդյանի ուղղումների հետ՝ բարեհաջող թագավորության գուշակություն ու առողջության մաղթանք պարունակող այս բնագրի նպատակադրումը եւս կապում է քրմական գուշակության հետ:

1927թ. գտնված երկրորդ բնագիրը (ընդհանուր թվով՝ հինգերորդը, 13 տող, նկ. 2) Ս.Տեր-Հակոբյանը իրավացիորեն համարել էր սելեւկյան օրացույցի ամիսներ, սակայն չէր նկատել վերջին տողում՝ Փառնակ՝ անվանը հետեւող շարունակությունը, որն, ըստ Ա.Բոլտունովայի, ողջուն-մաղթանք է՝ ուղղված Պոնտոսի Փառնակ արքային (Ք.ա. 190-169թթ.): Մրան եւս առարկում է Հ.Մանանդյանը՝ գտնելով, որ 13-րդ տողի սկզբում նշված է ոչ թե արքայանունը, այլ 13-րդ հավելյալ ամիսը (epagomenia), որը կոչվել է լուսնի Փառնակ՝ մականունով, իսկ առողջության մաղթանքն ուղղված է Արմավիրի քրմապետ Միխայիլ Երվանդ արքային: Կ.Տրեյերը մերժելով թե՛ Ա.Բոլտունովայի եւ թե՛ Հ.Մանանդյանի մեկնաբանությունները՝ շեշտում է Փառնակի՝ Լուսնի աստծո անվանումներից մեկը լինելը եւ այն համարում ամիսների հովանավոր աստվածություն՝ կրկին դիտարկելով գուշակության մասին իր տեսության համատեքստում (թեպետ չի բացատրում նաեւ անձնանուն լինելը):

Օրացույց-արձանագրության տակ փորագրված է վեցերորդը (1927թ. երրորդը, նկ. 3), որից նշմարելի են միայն հինգ վատ պահպանված տողեր: Դրանցում հիշատակվում է հելլեն Նումենիոսը, որին Ա.Բոլտունովան հակված է նույնացնելու Ք.ա. II դարի համանուն պատմական մի գործչի հետ:

Հ.Մանանդյանը եւ Կ.Տրեյերը ձեռնպահ են մնում եզրակացություններ անելուց:

Յոթերորդ (1927թ. գտնված չորրորդ բնագիրը՝ բաղկացած 11 տողից), գտնվում է վեցերորդի տակ եւ չափաժող է: Ա.Բոլտունովան ներկայացրել է այս բնագրի միայն տառադարձումը (առանց լուսանկարի եւ գրչանկարի), եւ հետագա ուսումնասիրողները, դժգոհությամբ այդ փաստը նշելով հանդերձ, չեն փորձել լրացնել այդ բացը: Պահպանված մասերից, ըստ Ա.Բոլտունովայի, կարելի է հասկանալ, որ նկարագրվող դեպքերը տեղի են ունեցել Ք.ա. 160-ական թթ., որոնց մասին նախորդ բնագրից արդեն հայտնի Նումենիոսը պատմում է Սելեւկյան Անտիոքոս Դ Եպիփանես արքայի քույր Լատոնիկային, որը բնագրում հանդես է գալիս ոչ թե անունով, այլ թագուհիներին տրվող փիլադելփոս պատվանունով:

Նա հաղորդում է տխուր լուրը՝ նշելով, որ դրանում չկա՝ անփառունակ ոչինչ՝ եւ հայտնում, թե նրա ամուսինը, որ տիրացել էր՝ գեղեցիկ Հայաստան երկրին, սպանվել է իր զինվորներից՝ շունչը փչելով գենքը ձեռքին: Իր այս մեկնաբանությունը Ա.Բոլտունովան փորձում է հիմնավորել ժամանակաշրջանի պատմական դեպքերի քննությամբ:

Հ.Մանանդյանն այս դեպքում եւս, ընդունելով Ա.Բոլտունովայի ընթերցումը, չի համաձայնում նրա մեկնության հետ: Նա իրավացիորեն նշում է, որ նախ Անտիոքոս Դ-ի մահվան

պատմությունը, ըստ տրամաբանության, պետք է արձանագրվեր ոչ թե Արմավիրում, այլ Սելևկյանների կենտրոնական որևէ նստավայրում, բացի այդ, սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այդ արքան ոչ թե սպանվել, այլ ծանր հիվանդացել ու մահացել է Էլամում: Նա կարծում է, որ այստեղ խոսքը վերաբերում է Ք.ա. III դարավերջի իրադարձություններին. զենքը ձեռքին, իր զինվորներից սպանված արքան Մեծ Հայքի Երվանդ Վերջին արքան է, որը, համաձայն Մովսես Խորենացու հաղորդումների, սպանվել է Երվանդաշատում Արտաշեսի զորքերի հարձակման ժամանակ իր զինվորներից մեկից:

Այնուհետև Արտաշեսը հրամայել է նրան թաղել եւ մահարձան կանգնեցնել:

Հ.Մանանդյանը ենթադրում է, որ Նումենիոսը Երվանդ արքայի մահվան գույժը հայտնում է նրա քույր-թագուհուն, որը հիշվում է միայն փիլադելփոս՝ պատվանունով, իսկ Երվանդ արքայի դին փոխադրվել է Արմավիր, եւ 1927թ. գտնված քարը, հավանաբար, եղել է նրա մահարձանի մի մասը: Կ.Տրեյերը ենթադրում է, որ բնագիրը կարող է լինել գրական մի երկի հատված, որը պատմում է ոչ թե Անտիոքոս Դ-ի կամ Երվանդ Վերջինի, այլ Արտաշես Տիեզերակալի ողբերգական մահվան մասին, ով սպանվեց իր զինվորների կողմից (Խորենացի, գիրք Բ, գլ. ԺԲ): Նա խիստ բարձր է գնահատում բնագրի պատմագիտական եւ գրական արժեքը, նշելով, որ այն պատմական բովանդակությամբ Ք.ա. II-1 դարերի պոեմի կամ ողբերգության հատված է, մինչդեռ Հռոմում պատմական կերպարները գրական ստեղծագործություններում հայտնվում են միայն Քրիստոսի ծննդյան I դարում... Արմավիրյան յոթ հատվածների մասին ուշագրավ կարծիք է հայտնել Խ. Հաբիխթը, որի հետ համաձայն է .Տիրացյանը. ըստ այդմ⁹ Արմավիրում տարբեր (հիմնականում⁹ Եվրիպիդեսի) ողբերգությունների տողերից կազմվել է մի ժողովածու, անթուղգիա, ինչը կարող էր ուսուցողական նպատակ ունենալ եւ կիրառվել դպրոցում:

Նշենք, որ Արմավիրի հունարեն արձանագրություններին անդրադարձել են բազմաթիվ այլ ուսումնասիրողներ, սակայն նրանց բոլորի աշխատանքներին անդրադառնալը դուրս է մեր խնդրից:

Մեկ անգամ եւս ցանկանում ենք շեշտել մեր ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմության ուսումնասիրության համար արմավիրյան արձանագրությունների կարեւորությունը, որոնք վերջին տասնամյակներում հանիրավի անուշադրության են մատնվել: Դրա հետեւանքով մեկ մեհենագիր եւ երեք հունարեն արձանագրություններ կրող քարն անհետացավ Արմավիրից, իսկ պահպանվածներն այսօր գտնվում են անմխիթար վիճակում:

Հին Հայաստանի պատմության եւ մշակույթի ուսումնասիրության առումով արժեքավոր է 1945թ. առնիից գտնված Տրդատ արքայի հունարեն արձանագրությունը, եւ պատահական չէ, որ այն դարձել է մեծ թվով ուսումնասիրությունների առարկա: Արձանագրությունը հաղորդում է.

Հելլոս Տիրիդատես⁹ թագավոր Մեծ Հայքի, թագավորելով իբրեւ դեսպոս

(վեհապետ), կառուցեց պայծառափայլ թագուհու համար անհաղթահարելի ամրոցը
11-րդ տարում իր թագավորության...

Մեննեասը տիրոջ արտոնությամբ [իբրեւ]

լիտուրգոս մեծ սպահապետի,

ի նշան շնորհակալության,

Մատե վկայի ներկայությամբ [գնեց]:

Արձանագրության առանձին բառերի, անունների եւ հասկացությունների շուրջ հայտնվել են զանազան կարծիքներ ու մեկնություններ, որոնց այստեղ չենք անդրադառնա: Նշենք, որ տարակարծություններ կան նաեւ այն հարցում, թե ո՞ք Տրդատն է (I, II, թե՞ III) ամրոցի եւ կոթողի հեղինակը (ինչպես Ապարանի արձանագրության պարագայում)... Առանձնակի ուշադրության են արժանի 1953թ. հայտնաբերված առնիի բաղնիքի հանդերձարանի առասպելադիցաբանական բովանդակությամբ խճանկարի հունարեն գրությունները: Խճանկարում պատկերված են ծովային աստվածություններ, ջրահարսներ, իխթիոկենտավրոսներ, ձկնորսներ, ձկներ եւ այլն: Խճանկարի կենտրոնում եղջյուրավոր տղամարդու եւ կնոջ տեսքով պատկերված են Օվկիանոսը (ըստ հռմեքոսյան շրջանի պատկերացումների՝ բոլոր աստվածների նախահայրը, ըստ Հեսիոդոսի՝ Ուրանոսի եւ Եայի որդին, Քրոնոսի եղբայրը, երեք հազար գետային որդի-աստվածությունների եւ նույնքան օվկիանոսի դուստրերի. ավելի ուշ շրջանի պատկերացումներում ետ է մղվել Պոսեյդոնի կողմից. Օվկիանոսը համարվել է նաեւ երկիրը շրջապատող գետ, որից սկիզբ էին առնում բոլոր ջրերը) եւ Ծովը (որից ծնվել է սիրո դիցուհի Աֆրոդիտեն): Ծովի գլխավերեւում արձանագրված է. 'Աշխատեցինք՝ չստանալով ոչինչ': Եռտոնյա տաղաչափական յամբով գրված այս հիանալի հատվածը (որը հայտնի չէ որեւէ հունական ստեղծագործությունից) ասվում է խճանկարի վերոնշյալ երկու գլխավոր կերպարների անունից՝ խորհրդանշելով նրանց հավերժական, անհոգնում եւ անշահախնդիր աշխատանքը հանուն երկրի վրա կյանքի լինելության:

Խորհրդային պատմագրության մեջ երբեմն այս հատվածը միանգամայն անհիմն կերպով վկայակոչվում էր իբրեւ վկայություն դասակարգային հակասությունների ու ճնշման...

Խճանկարի վերին եզրաշերտով կան հետեւյալ գրությունները. 'Ծովի խորք', 'Ծովի անդորր', լավկոս (ձկնորսներին եւ ծովագնացներին հովանավորող աստվածություն), Պելեւս եւ Թետիս (Աքիլլեսի հայրն ու մայրը), 'Ծովի ափ':

Աջ եզրագծի սկզբին, թեւավոր ձկնորսի գլխավերեւում մակագրված է՝ 'եղեցկություն', իսկ շարունակության վրա պահպանվել են միայն 74որոշ տառեր, ապա մեկ այլ անվան թերի սկզբնամասը: Ստորին եզրաշերտը խիստ վնասված է, աջ կողմում հնարավոր է վերականգնել միայն Ապոլոնին եւ Դիոնիսոսին տրված մականուններից մեկը (որը տվյալ դեպքում, թերեւս, վերաբերում է Դիոնիսոսին) եւ 'Ցանկություն' բառերը: Արեւմտյան պատի երկայնքով ձգվող եզրաշերտում պահպանված գրության ու պատկերների բեկորների վերլուծությունից հնարավոր է վերականգնել, որ այնտեղ եղել են սիրո աստված Էրոսի, սիրո համոզմունքի եւ

պերճախոսության աստվածուհի Պիթոյի եւ ցանկության աստված Պոթոսի պատկերներն ու անունները: Ենթադրելի է, որ վնասված մասերում պետք է լինեին նաեւ Աֆրոդիտեի եւ ամուսնության աստված Հիմենայոսի պատկերներն ու անունները, որոնք ընդունված են եղել նման տեսարաններում: Այսպիսով, Գառնիի խճանկարը ներկայացնում է մի կենսահաստատ տեսարան, որը խորհրդանշում է կյանքի սկզբնավորումն⁹ ըստ հին հունական պատկերացումների⁹ օվկիանոսից ու ծովից, եւ նրա հարատեւությունը սիրո եւ ամուսնության միջոցով:

1971-1977թթ. Արտաշատի անտիկ ժամանակաշրջանով թվագրվող դամբարանադաշտերի պեղումներից հայտնաբերված վնասված կավե արձանիկներից մեկի պատվանդանին առկա էր երկտող հունարեն արձանագրություն, որը գրվել էր նախքան արձանիկի թրծումը: Առաջին տողի գրությունն է՝ ΡΗΟΥΗΝΑ, երկրորդինը՝ ΙΑ: Ենթադրվում է, որ առաջին տողում արձանիկի տիրոջ անունն է, երկրորդում նշված է տարեթիվ⁹ 11:

Մեծ արձանագրություններից բացի, հունաստառ մենանշաններ եւ առանձին բառերի գրություններ են հայտնաբերվել Արմավիրից, Արտաշատից եւ առնիից գտնված կնքադրոշմների եւ խեցեբեկորների վրա, որոնք դեռեւս չեն դարձել հատուկ ուսումնասիրության առարկա:

Փոքր Հայքի թագավորություն: 1898-1899թթ. Արեւմտյան Հայաստանում Կ.Ֆ.Լեհման-Հաուպտի եւ Վ.Բելքի բազմաթիվ հայտնագործություններից մեկը եղավ Վանք գյուղի (Մալաթիայից 95կմ դեպի հյուսիս, ուր պահպանվել են հին ամրոցի ավերակներ⁹ ժայռափոր կառույցներով) մերձակա ժայռի հունարեն արձանագրությունը: Այն 10 տողանոց, եղերերգի բանաստեղծական չափով գրված տապանագիր էր (նկ. 1), որի հնագրական ուսումնասիրությունը թույլ է տալիս այն թվագրելու II դարով: Բնագիրն ընթերցել է Կ.Ֆ.Լեհման-Հաուպտը⁹ Ա.Մոմզենի եւ Ֆ.Հ. ֆոն աերթրինգենի օգնությամբ: Ստորեւ բերում ենք տապանագրի տողացի (ոչ չափածո) թարգմանությունը.

Այստեղ հանգչում է տիրուհի Աթենաիսը, որի հետ ես ժամանակին փոխադարձ ձգտմամբ ամուսնացա:

Նրան, ով անցնելով⁹ կնվիրի [նրան] վարդ կամ այլ ծաղիկ, թող բարեհաճ լինեն բոլոր երկնաբնակները:
Եթե որեւէ մեկը գա⁹ վատը խորհելով,
նրան թող պատժեն բոլոր ստորերկրյա աստվածները:

Սա գրեց Աեյմարիտը (Դեյմարիտը) ⁹ [որդին] նույնանուն հոր, որի համար նա իր կարճ կյանքում եղել էր սիրելի կին / ամուսին:

Հայրը նրա նույնանուն էր իմ հորը,
մայրը նրա⁹ Անտոնիան, դուստրն էր Լուկիոսի:

Եղբերգի բանաստեղծական չափով գրված հունարեն այս ժայռափոր արձանագրությունը ոչ միայն կարելու գրական հուշարձան է, այլ պատմական ուշագրավ սկզբնաղբյուր II դարի հայ ազնվականության վերաբերյալ: Քննելով արձանագրության հաղորդումները եւ համադրելով հայտնի հարակից տվյալներին՝ Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը հնարավոր է համարում, որ Աթենախար լինել Գոքր Հայքում իշխած Կոտիսի արքայի ծոռը:

Հունարեն չափածո մեկ այլ տապանագիր է գտնվել Գոքր Հայքի Նիկոպոլիս քաղաքի մերձակայքից:

1900 թ. Գոքր Հայքի տարածքի Աղջակալե (Աղաչա կալե) հնավայրից հայտնաբերված հունա-արամեական երկլեզու արձանագրության մասին խոսվել է արամեերեն արձանագրություններին նվիրված ակնարկում, ուր բերվել է արամեերեն մասի թարգմանությունը: Քանի որ բնագրի հունարեն եւ արամեերեն հատվածները բառացիորեն չեն կրկնում մեկմեկու, այստեղ ներկայացնում ենք հունարեն բաժինը.

Օրինավոր սատրապների մեջ անմահ հիշատակ կլինի Օրոմանեսին՝ (որդուն) Արիոուկեսի, եւ Արիոուկեսին՝ (նրա) սիրելի որդուն, Արանդայի (Անդոմոնի) համար, որ (նա) կառուցեց գեղեցիկ բնակավայրի շքեղ պարիսպներն ամայի տեղերում:

Գոքր Հայքի տարածքից գտնվել են նաեւ Պոնտական թագավորության ժամանակաշրջանի (Ք.ա. 302/1-64թթ.) հունարեն արձանագրություններ (Տրապիզոն եւ Սեբաստիա քաղաքներից), որոնք եւս կարող են որոշակի հետաքրքրություն ներկայացնել հայագիտության համար: Խոսելով Միհրդատ Եվպատորի մասին՝ մենք հաճախ հիշատակում ենք միայն նրա դաշինքը Տիգրան Մեծի հետ՝ մոռանալով հայ իրականության հետ նրա առաջին կարելուր կապի մասին. Ք.ա. 112 թ. Պոնտոսից փախուստի դիմած Միհրդատ Եվպատորին որդեգրել էր Գոքր Հայքի արքա Անտիպատրոսը եւ ժառանգել նրան իր թագավորությունը:

Դրանից հետո նա կրել է թագավոր Պոնտոսի եւ Հայոց տիտղոսը, ինչը մեզ հիմք է տալիս նրան դիտարկելու նաեւ իբրեւ Գոքր Հայքի արքա:

Վիմագրերից բացի, Գոքր Հայքում հունարենը գործածվել է նաեւ դրամահատության բնագավառում, որին կանդրադառնանք դրամների մասին խոսելիս:

Նեմրուքի սրբավայրը. Կոմմագենեի թագավորություն: XIX դարի երկրորդ կեսին գիտական աշխարհին հայտնի դարձավ հայոց նախաքրիստոնեական մշակույթի ամենափառահեղ հուշարձանախմբերից մեկը, որը պահպանվել է Եփրատի աջ ափին գտնվող Նեմրուք լեռան վրա (չշփոթել Վանա լճից հյուսիս բարձրացող Նեմրուքի հետ): Հուշարձանախումբը կառուցել է հայոց Երվանդունյաց տոհմի շառավիղ, Կոմմագենեի արքա Անտիոքոս Ա-ն (Ք.ա. 69-34թթ.), թողնելով մեծ թվով հունարեն արձանագրություններ, որոնք մեր պատմության եւ հատկապես հոգեւոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության համար անգնահատելի սկզբնաղբյուրներ են: Նեմրուքի սրբավայրը համակարգված ուսումնասիրության է ենթարկվել XIX դարի երկրորդ կեսին գերմանացի հետազոտողների եւ 1950-ական թվականներին՝ գերմանական եւ ամերիկյան արշավախմբերի կողմից: Կոմմագենեի

տարածքում² Ներմուծ լեռան սրբավայրի բնագրերից բացի, հունարեն արձանագրություններ են գտնվել մայրաքաղաք Սամոսատից, Եփրատի վրա (գտնվող) Արսամեայից՝ (ներկայումս³ երգեր կամ յառգյառ), Նիմֆայոս գետի վրա (գտնվող) Արսամեայից՝ (այժմ⁴ Քյահթա), Ադիյաման, Սեմսիդիա, Կարակուշ, Սելիկ, Անջոզ, Չապուտլու, Ադաչ Քյուլուք, Դոլիլե, Դիրեք կալե, Հասանօղլու հնավայրերից: Ընդհանուր առմամբ Կոմմագենեի տարածքից հայտնաբերված նախաքրիստոնեական շրջանի արձանագրությունների թիվն անցնում է հիսունից:

Նշված արձանագրությունների ճնշող մեծամասնության հեղինակը Անտիոքոս Ա-ն է, որը, սովորաբար, հանդես է գալիս Մեծն արքա Անտիոքոս⁵ Աստված, Արդարադատ, Հայտնված (աստված), Հռոմեասեր եւ Հելլենասեր, տոհմից արքա Միթրադատես Կալիսիկոսի եւ թագուհի Լաոդիկեի⁶ եղբայրասեր աստվածուհու...՝ տիտղոսաշարով:

Անտիոքոս Ա-ի հաղորդումների մի զգալի մասը վերաբերում է իր նախնիներին:

Նիմֆայոսի Արսամեայի 256 տողանոց արձանագրության մեջ, օրինակ, տեղեկացվում է, որ այդ քաղաքը հիմնադրել է Արսամեսը (Արշամը, Ք.ա. IIIդ.), որում սրբավայր է կառուցել իր հայր Միթրադատես (Միհրդատ) Կալիսիկոսը, իսկ ինքը բարեկարգել եւ շքեղացրել է քաղաքը: Ներմուծ լեռան գագաթամերձ շրջանի արեւելյան ու արեւմտյան կողմերում վեր են խոյանում նույնատեսակ երկու պաշտամունքային համալիրներ: Երկուսում էլ գլխավոր մասը կազմում են հինգ մարդատեսք արձանները (նստած վիճակում), որոնցից կենտրոնականը պատկերում է գերագույն աստված Օրոմազդես-Ջեւս-Արամազդին (9 մետր բարձրությամբ), նրա երկու կողմերում⁷ Մայր դիցուհուն, Արտագնես-Հերակլես-Վահագնին, Միհր-Ապոլլոն-Հելիոս-Հերմեսին եւ Անտիոքոս Ա-ին (8-ական մետր բարձրությամբ): Արձանների թիկունքին քանդակված է հսկա մի արձանագրություն⁸ նվիրված արքայի եւ նրա հոր պաշտամունքի հաստատմանը, նրանց ծննդյան ու գահակալման օրերը տոնական սահմանելուն, մի շարք նոր կարգերի ու օրենքների հաստատմանը: Յուրաքանչյուր կողմում եղել են 30-ական քարե սալեր (2 շարքով, 3 մետր բարձրությամբ), որոնց վրա պատկերված են եղել արքայի նախնիները⁹ 15-ը հայրական, նույնքան էլ մայրական գծով (դրանց մի մասը ոչնչացել է ժամանակի ընթացքում, մյուսները պահպանվել են մասամբ կամ ամբողջությամբ): Յուրաքանչյուր քարասալի հետեւում առկա է պատկերված նախնուն ներկայացված արձանագրություն, որը սկսվում է վերոհիշյալ տիտղոսաշարով:

Ներմուծի սրբավայրի արձանագրություններից իմանում ենք, որ նա հայրական գծով սերում էր Երվանդունիներից: Հայրական նախնիների ոչ լրիվ պահպանված շարքում հիշատակվում են Հայաստանի սատրապ Արտանդեսը (Երվանդ, Քսենոփոնի Անաբասիսում¹⁰ Օրոնտաս, Ք.ա. V-IVդ.), որը Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II Մնեմոնի (Ք.ա. 405-359թթ.) փեսան էր, մեկ այլ Արտանդես (Երվանդ), որն, ի տարբերություն նախորդի, կրում է արքա տիտղոսը (նա, ամենայն հավանականությամբ, ավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի անկախությունը վերականգնած Երվանդ արքան է), Ծոփքի եւ Կոմմագենեի միացյալ թագավորության առաջին արքաներ Սամեսն ու Արսամեսը (Արշամը), որոնք իշխել են Ք.ա. III

դարում: Սրան ավելացնենք, որ Անտիոքոս Ա-ն կրում է Հայկական (Տիգրանյան) թագ, որը մինչև թագավորության անկումը (Քրիստոսի ծննդյան 72թ.) կոմմագենյան դրամների վրա խորհրդանշում է հայկական պետականությունը (այդ մասին՝ դրամներին վերաբերող ակնարկում): Ասվածը, կարծում ենք, բավական է պատկերացնելու կոմմագենյան հուշարձանների ուսումնասիրության կարեւորությունը հայագիտության համար: Հակառակ դրան, կոմմագենյան բնագրերից մինչ օրս միայն առանձին պատատիկներ են թարգմանվել հայերեն:

Կոմմագենեի պատմության ուսումնասիրության կարեւորությունը մեզ համար մի ավելորդ անգամ կարող են ընդգծել վերջին տասնամյակներում այնտեղից գտնված երկու սահմանաքարերը (պահվում են Ադիյամանի թանգարանում, մեկի լուսանկարը³ նկ. 1), որոնց վրայի արձանագրություններում հիշատակվում է Օրիոն-Հայկ աստվածը... Հունարեն գրությամբ հայկական դրամներին անցնելուց առաջ կարելու է նաև համարում էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պատի շարվածքում պահպանված երկու հունագիր սալաքանդակների հիշատակումը (նկ. 2): Դրանցից առաջինին քանդակված են երկու անձինք⁴ իրենց անուններով⁵ Թեկդի եւ Պոդոս, երկրորդին⁶ շրջանակի մեջ առված հավասարաթեւ խաչ, կողքին երկու թռչուն (աղավնի⁷), հունարեն աղոթք եւ երեք անուն: Ուսումնասիրողներն այդ քանդակները թվագրում են IV-VI դարերով, սակայն հնարավոր չէ ավելի որոշակիացնել⁸ փորագրվել են դրանք Մեսրոպ Մաշտոցի գյուտից առաջ, թե՛ հետո... Հունարեն գրությամբ հայկական դրամները: Հայկական լեռնաշխարհում հունարենի կիրառության կարեւորագույն ոլորտներից մեկը դրամաշրջանառությունն էր: Ք. ա. 3-րդ դարից սկսած Հայաստանում թողարկվում են դրամներ, որոնց մեծ մասի գրությունները հունարեն են: Հունագիր դրամներ են հատել ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ Փոքր Հայքի, Ծոփքի եւ Կոմմագենեի հայոց արքաները: Մեզ են հասել Աքեմենյան ժամանակաշրջանի Հայաստանի սատրապներ Օրոնտաս-Երվանդի հունատառ եւ Տիրիբագոսի հունատառ ու արամեատառ դրամները, որոնք, սակայն, հատվել են ոչ թե Հայաստանում, այլ (համապատասխանաբար) Մյուսիայում եւ Կիլիկիայում նրանց իշխանության տարիներին, ուստի եւ չեն կարող դիտարկվել որպես հայկական կամ հայաստանյան դրամներ:

Դրամների մակագրություններում կարելի է առանձնացնել նշումների չորս խմբեր⁹ անուններ, տիտղոսաշարեր, տարեթվեր, մենանշաններ: Ըստ թագավորությունների ներկայացնենք դրամների վրա առկա անուններն ու տիտղոսաշարերը.

Ծոփքի եւ Կոմմագենեի թագավորություն.

Սամես (Ք.ա. մոտ 260-240 թթ.) - 'արքայի Սամեսի' (նկ. 3ա), Արշամ (Ք.ա. մոտ 240-220 թթ.) - 'արքայի Արշամի' (նկ. 3բ):

Ծոփքի թագավորություն.

Քսերքսես (Ք.ա. մոտ 220-210-ական թթ.) - 'արքայի Քսերքսեսի', Արդիսարես (Ք.ա. II դարի վերջ) - 'արքայի Արդիսարեսի' (նկ. 4), Ջարեհ (Ջարիադրես, Ք.ա. 189-ից) - 'Ջարի[ադրեսի]^ա (որդու) Անիասադ [րեսի]

(±),

Մորֆիլիկ (Ք.ա. մոտ 150 թ.) - 'Մորի[ֆիլիկի]' (որդու) Ջարի[ադրեսի]:

Կոմմագենեի թագավորություն.

Միթրադատես (Միհրդատ) Ա Կալլինիկոս (Ք.ա. 96-70 թթ.) - 'արքայի Միթրադատեսի Կալլինիկոսի' (նկ. 5), Անտիոքոս Ա Թեոս (Ք.ա. 69-34 թթ.) - 'արքայի Անտիոքոսի' (նկ. 6):

Հունարեն գրությամբ հայկական դրամները: Կոմմագենեի արքա Անտիոքոս Ա-ին հաջորդում են Միթրադատես Բ-ն, նրա եղբայր Անտիոքոս Բ-ն, Միթրադատես -ն, Անտիոքոս -ն, որոնցից դրամներ մեզ չեն հասել: Անտիոքոս -ի մահից հետո տիրած անիշխանությունից հետո Հռոմի կայսր Կալիգուլան գահ է բարձրացնում Անտիոքոս Դ Եպիփանեսին, որն իր մի կողմից արյունակից քրոջ^ա Յոթապեի (Իոթապեի) հետ իշխում է 38-72 թվերին: Այդ ընթացքում նրանք թողարկում են եւ՞ համատեղ, եւ՞ առանձին դրամներ: Անտիոքոս Դ-ի դրամները հիմնականում կրում են 'արքայի Մեծի Անտիոքոսի Եպիփանեսի', Յոթապեինը^ա թագուհու Իոթապեի^ա եղբայրասերի՝ մակագրությունները, հաճախ պարունակելով նաեւ դրամահատության վայրի անունը: 72թ. հատվել են Եպիփանեսի եւ Կալլինիկոսի անուններով դրամներ: Նույն թվականին Հռոմի Վեսպասիանոս կայսրը վերացրել է Կոմմագենեի թագավորությունը: Առաջին դարում Կոմմագենեի թագավորությունը հատել է այլ դրամներ եւս, որոնցից առանձնապես հետաքրքիր են Սամոսատ մայրաքաղաքի եւ Կոմմագենեի պետության դրամները: Սամոսատի դրամները թողարկվել են Ք.ա. 31-Ք.հ. 38 թթ. եւ կրում են 'Սամոսատ քաղաք', մակագրությանը, իսկ Կոմմագենեի պետության դրամները^ա KOMMAGHNWN մակագրությամբ^ա 72 թվականին (նկ.1): Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ թեպետ Ք.հ. I դարի կոմմագենյան դրամները կրում են հռոմեական դրամահատության բնորոշ գծերը, դրանց (այդ թվում^ա Կոմմագենեի պետության դրամների) վրա հաճախ է հանդես գալիս Հայկական (կամ Տիգրանյան) թագը, որը Հայաստանի եւ հայկական թագավորության խորհրդանշանն էր նաեւ հռոմեական դրամահատության մեջ... Ք.ա. III-II դարերից մեզ են հասել նաեւ անհայտ ծագումով հայկական դրամներ, որոնք, ուսումնասիրողների մի մասի կարծիքով, հավանաբար պատկանել են Փոքր Հայքի եւ Ծոփքի արքաներին: Դրանք են Քարասպեսի (Ք.ա. III դար, 'արքայի Քարասպեսի' մակագրությամբ) եւ Միհրդատի (Միթրիդատ, Ք.ա. III-II դարերի սահման, 'արքայի Միթրիդ[ատի]' մակագրությամբ) դրամները:

Մեծ Հայքի թագավորություն (Արտաշեսյան հարստություն). Արտաշես Ա (Ք.ա. 189-160թթ.) - 'արքայի Մեծի Արտաշեսի', Տիգրան Ա (Ք.ա. մոտ 115-95թթ.) - 'արքայի Մեծի Տիգրանի', 'արքայի Մեծի Տիգրանի հելլենասերի' (նկ.2), Տիգրան Բ (Ք.ա. 95-55թթ.) - 'արքայի Տիգրանի', 'արքայից արքայի Տիգրանի' (նկ.3), Ջարեհ (Ք.ա. 72թ.) - 'արքայից արքայի Ջարեհի' (նկ.4, սա Տիգրան Բ-ի

ավագ որդին է, որն ապստամբեց հոր դեմ Բ.ա. 72թ. եւ հատեց դրամ), Արտավազդ Բ (Բ.ա. 95-55թթ.) - 'արքայից արքայի Արտավազդի', 'արքայից արքայի Արտավազդի^ա աստվածայինի' (նկ.5), Արտաշես Բ (Բ.ա. 34/30-20թթ.) - 'արքայի Մեծի Արտաշեսի, Տիգրան (Բ.ա. 20-8թթ.) - 'արքայի Մեծի Տիգրանի', 'արքայի Մեծի Տիգրանի^ա հայրասերի եւ հելլենասերի', 'արքայի Մեծի Տիգրանի^ա աստծո' (նկ.6), Տիգրան Դ եւ Էրատո (Բ.ա. 8-5 եւ 2-1թթ.) - 'արքայի Մեծի Տիգրանի', 'արքայից արքայի Տիգրանի II Էրատո^ա քույրը արքայի Տիգրանի' (նկ.7), 'արքայի Մեծի, նոր Տիգրանի II Էրատո^ա քույրը արքայի Տիգրանի', 'արքայի Մեծի, նոր Տիգրանի II աստվածային Օգոստոս կայսեր^ա աստծո որդու', Արտավազդ (Բ.ա. 5-2թթ.) - 'արքայի Մեծի Արտավազդի':

Հետարտաշեսյան շրջանում մասամբ շարունակվում են Արտաշեսյանների դրամահատության ավանդույթները, ինչի արդյունք կարելի է համարել հռոմեական դրածո Արտավազդ Դ-ի (Բ.հ. 4-6թթ.) եւ Օգոստոս կայսեր համատեղ դրամները^ա նրանց պատկերներով ու 'արքայի մեծի Արտավազդի II աստծո, կայսեր, բարերարի' մակագրությամբ, մեկ այլ հռոմեական դրածոյի^ա Տիգրան Ե-ի (Բ.հ. 6թ., հրեից արքա Հերովդես Մեծի թոռը) դրամները^ա 'արքայի մեծի Տիգրանի' գրությամբ: Իրենց բնույթով զգալիորեն տարբեր են Վոնոն Արշակունու դրամները, որը Պարթևստանում գահազրկվելուց հետո մի քանի տարի (11-16 թթ.) իշխել է Մեծ Հայքում: Նրա դրամների մի մասը թողարկվել է Հայաստանում, հավանաբար, հենց այդ տարիներին, ինչի վկայությունն է դրանց վրա Տիգրանակերտ անվան հապավում-կցագրի առկայությունը^ա կազմված TGP հունական տառերով:

Նշվածներից բացի, հայոց թագավորների անուններ են հիշատակվում մի շարք հռոմեական դրամների վրա: Դրանցից են, օրինակ, Ջենոն-Արտաշեսի (18-34 թթ.) եւ Սոհեմոսի թագադրությունների առիթներով թողարկված լատինատառ գրությամբ դրամները, որոնք կարելուր պատմական անցքերի վկայություններ լինելով հանդերձ^ա չեն վերաբերում քննարկվող խնդրին:

Առանձնակի ուշադրության են արժանի Արտաշատ մայրաքաղաքի դրամները, որոնք II դարի վերջից հատվել են ոչ թե հայոց արքայի կամ հռոմեական կայսեր անունից, այլ հենց մայրաքաղաքի (նման իրավունք նվաճել էին միջազգային առևտրի, մշակույթի եւ վարչական խիստ սակավաթիվ կենտրոններ):

Հետաքրքրական է եւ այն հանգամանքը, որ այդ դրամների գրությունները հունարեն էին, թեպետ Հայաստանը վաղուց գտնվում էր հռոմեական ազդեցության ներքո, իսկ կայսերական դրամները լատինատառ էին: Սա կարող է վկայել նաև ներմուծված գրերի հարցում տեղական կայուն ավանդույթների գոյության մասին:

Արտաշատյան դրամի մի երեսին պատկերված է աստվածամայր Անահիտը^ա մայրաքաղաքի հովանավորը, մյուսին^ա դափնեպսակ պարզած Հաղթանակի թելավոր դիցուհին: Նրա դիմաց նշված են I, թիկունքի մոտ^ա ΖΧ տառերին նմանվող նշաններ, իսկ շրջագծով ΑΡΤΑΧΙΣΑΤΩΝ ΜΗΤΡΟΠΟΛΕΩΝ - Արտաշատ մայրաքաղաքի' մակագրությունն է (նկ. 1):

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական դրամների թվագրումը եւս կատարվել է հունական այբուբենով, տառերի թվային արժեքների միջոցով: Ընդ որում, այսօր հայտնի դրամների գրություններում կարելի է ցույց տալ առնվազն թվագրման երեք սկզբունք. ա) ժամանակի հաշվարկը սելեւկյան տոմարով, որի սկիզբը հաշվվում է Ք.ա. 312 թվից (Տիգրան Բ-ի Դամասկոսում հատված արծաթե դրամները կրում են AMZ=241, BMZ=242, GMZ=243 թվագրումները, որոնք համապատասխանում են Ք.ա. 71-69 թվականներին, երբ հայոց տիրակալն իշխում էր նաեւ Սելեւկյանների տիրույթներին). հիշենք, որ սելեւկյան օրացույցի ամիսներն արձանագրված են եղել Արամվիրում, բ) տարիների նշումը փյունիկյան օրացույցի միջոցով, որի թվագրության սկիզբը Ք.ա. 111 թվականն էր (Տիգրան Բ-ի դրամների մի խումբ թվագրված է 34-ից (DL) մինչեւ 39 (QL) թվականները, որոնք Ք.ա. 111-ից հաշվելով ստանում ենք Ք.ա. 77-72 թվականները), գ) արքայի թագավորության սկիզբը թվագրման հիմք ընդունելը (օրինակ՝ Արտավազդ Բ-ի դրամների S (6) եւ Z (7) տարեթվերը):

Կա կարծիք, որ դրամների վրա որպէս մենանշաններ հանդիպող հունական այբուբենի առաջին տասը տառերը դրամների թողարկման ամիսների նշումներն են, ինչի հետ ոչ բոլոր ուսումնասիրողներն են համաձայն:

Հայկական դրամների վրա առկա մենանշանները (նկ.2) կարելի է բաժանել երեք խմբի. ա) հունական այբուբենի տառեր (որոնց մի մասն, ինչպէս նշվեց, ժամանակագրության նշումներ են), բ) հունական տառերի հիմամբ ստեղծված կցազրեր (օրինակ՝ Արտաշատ եւ Տիգրանակերտ մայրաքաղաքների նշումը PTX եւ TGP հունական տառերով կազմված կցազրերով, տե՞ս նկ.2, բ՝ շարքի առաջին երկու նշանները), որոնցից ոչ բոլորի իմաստ է մեկնաբանված, գ) որեւէ այբուբենի հետ չկապվող պատկերանշաններ (նկ.2գ), որոնք մնում են չմեկնաբանված:

* * *

Բացի մինչ այսօր գտնված արձանագրություններից, մենք ունենք մի շարք մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան Հայաստանում հունական գրի ու գրականության լայն տարածման մասին, որոնց կանդրադառնանք համապատասխան բաժնում:

Ի մի բերելով նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված հունարեն արձանագրությունները՝ փորձենք տալ դրանց խմբային դասակարգումը. արքայական արձանագրությունները՝ նվիրված աստվածների պաշտամունքին, թագավորական նախնիներին ձոնված արձանագրություններ, թագավորական իշխանության եւ արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ, արքայական արձանագրություններ քաղաքների ու շինությունների (հատկապէս՝ սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին, նոր օրենքներ ու կարգեր սահմանող արձանագրություններ, արքայական նվիրատվական արձանագրություններ, թագավորական դրամների մակագրություններ, արքայական նամակագրության արձանագրումներ, հոգեւոր-պաշտամունքային բնույթի բնագրեր, ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ, ընծայագրեր, բարոյախրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությաւն)

հատվածներ, պատմական բովանդակությամբ չափաժող ստեղծագործության (ողբերգությամբ) հատվածներ, տապանագրեր (այդ թվում³ չափաժող եղերերգեր), մենանշաններ:

Հայաստանի Արամեատառ Արձանարությունները

1950թ. կրկին Սեւանի ավազանից (Մարտունու շրջանի Ջորագյուղ գյուղի եկեղեցու մերձակայքից) գտնվեց նոր արամեատառ արձանագրություն, որը նախորդներից շատ ավելի վատ էր պահպանված: Ի.Դյակոնովն ու Կ.Ստարկովան, ուսումնասիրելով այն, ձեռնպահ մնացին թարգմանելուց, նշելով միայն, որ կոթողի հնագրական հետազոտությունից կարելի է եզրակացնել նախորդ երկուսից ժամանակագրորեն ավելի ուշ շրջանի պատկանելը: Նույն հրապարակման մեջ հիշյալ հեղինակները, մերժելով Ա.Դյուպոն-Մոմերի վերծանության վերջնամասերը, լիովին անհիմն համարեցին դրանք ձկան որսի հետ կապելը: Ընդունելով Հ. Օրբելու կարծիքը սահմանաքարերի մասին³ նրանք 1906 եւ 1932 թվերին գտնված բնագրերն ընթերցեցին լիովին արամեերեն³ տալով հնարավոր երկուական մեկնաբանություններ.

(1906թ. գտնված բնագիրը) ա) Արտաքսիլը³ արքան, որդին Չարիաթրի (հողամասը) RWNDKN բաժանեց (սահմանագատեց): բ) Արտաքսիլը³ արքան, որդին Չարիաթրի: RWND հողամաս (կամ³ RWND-ական հողամաս):

(1932 թ. գտնված բնագիրը) ա) Արտաքսիլը³ արքան, որդին Չարիաթրի միջեւ: բ) Արտաքսիլը³ արքան, որդին Չարիաթրի: Հողամասը միջեւ:

Այստեղ նրանք փորձեցին Ա. Բորիսովի կողմից առանձնացված եւ ենթադրաբար պահլավերեն՝ գնացողներ՝ անցնողներ՝ թարգմանված RWNDKN բառում տեսնել Երվանդ-Օրոնտաս արքայանունը, սակայն իրենք էլ առարկեցին, քանի որ, ըստ նրանց, պարսկական ծագում ունեցող այդ անունը տվյալ ժամանակաշրջանում պետք է ունենար Arvant(a) ձևը եւ գրվեր ժ-ով, ոչ թե t-ով: Ի վերջո եզրակացվեց, որ RWNDKN-ն հողամասի անվանումն է:

Ա.Դյուպոն-Մոմերի եւ Ի.Դյակոնովի ու Կ.Ստարկովայի ընթերցումների հաշտեցման՝ յուրօրինակ փորձ արեց Ա.Դանիելյանը³ Սեւանի ավազանից գտնված արձանագրությունները մեկնաբանելով իբրեւ արքայական ձկնորսարանի սահմանները ցույց տվող վկայագրեր: Լինելով իրավագետ եւ նկատի ունենալով այլ երկրներում (հատկապես Բաբելոնում) սահմանաքարերի գործածման փորձը³ նա իրավացիորեն գտնում է, որ սահմանաքարերի բնագրերը պետք է միմյանցից տարբերվեն գոնե բաժանված հողերի սեփականատերերի անունների նշումներով:

1957թ. Մարտունու շրջանի Ծակքար գյուղի մոտակայքից հայտնաբերվեց սահմանաքար համարվող եւս մի կոթող, որն, ի տարբերություն նախորդների, շատ լավ էր պահպանված (նկ. 1): Բնագրի վերծանությունը հրատարակեց Տիրացյանը, որը RWNDKN-ն համարեց Արտաշես արքայի տոհմանունը. Արտաշես արքան, Չարեհի որդին Երվանդական բաժանեց հողը (միջեւ) մասերի (բաժինների):

Այստեղ առաջ քաշվեց եւ հետագայում լայն տարածում գտավ այն կարծիքը, որ Արտաշէսն իրեն՝ Երվանդական՝ է հռչակել իր իշխանությանն իրավական հիմնավորում տալու, Երվանդունիներին եւ, թերեւս, նրանց միջոցով, նաեւ Աքեմենյաններին կապվելու նպատակով:

1961թ. առնիի ամբոցի պեղումների ժամանակ ուշ միջնադարյան պատի շարվածքում գտնվեց քարե արամեատառ արձանագրություն եւս (նկ.2), որի վերին մասն ու ձախ եզրը վնասված էին: Հրատարակելով բնագրի վերծանությունը՝ Ա.Փերիխանյանը կարծիք հայտնեց, որ դրա հեղինակը երկրորդ դարավերջին եւ երրորդ դարի սկզբին իշխած Վաղարշի (Վոլոգեսի) որդի Խոսրով I հայոց արքան է: Արձանագրության պահպանված մասը վերծանվում է՝ արքա մեծ Հայաստանի, որդի Վոլոգեսի՝ արքայի՝

1964թ. Չանգեզուրի Իշխանասար լեռան ստորոտին՝ Սիսիանից որիս տանող ճանապարհի մոտակայքից գտնվեց ինը տողանոց արամեատառ արձանագրություն (նկ. 3), որի վերծանությունը հաջորդ տարի ներկայացրեց Ա.Փերիխանյանը. ... գյուղը [...] Արտաշէսը՝ արքան, Երվանդական, Բարին՝ որդին Չարեհի, եւ Նեկփառը՝ թագադիր, որդին Ախշահրասարտի՝ Սակայն վեց տարի անց նույն գիտնականը միեւնույն արձանագրությանը տվեց միանգամայն այլ վերծանություն եւ մեկնաբանություն՝ Հողը բաժանեց գյուղերի միջեւ Արտաշէսը, արքան, Երվանդական, Բարին, որդին Չարեհի, հաղթողն ամենի, ինչ քաջալերում է չարը, թագակիրը, դաշնակիցը Խշատրայի: (Խշատրան (Շահիրը) զրադաշտականության մեջ համարվում է անմահներից մեկը՝ Ամեշա Մպենտան կամ Ամահրասպանդը):

Իմաստային ադաղակող տարբերությունը, մեղմ ասած, վստահություն չի ներշնչում ընթերցումների արժանահավատության նկատմամբ: Արձանագրության ընթերցման առաջին՝ հեղինակի կողմից իսկ մերժված փորձը, որպես հավաստի սկզբնաղբյուր, օգտագործվել է 1971թ. լույս տեսած 'Հայ ժողովրդի պատմություն' ակադեմիական ութհատորյակի առաջին հատորում, այնտեղից էլ մտել բազմաթիվ այլ ուսումնասիրություններ եւ ուսումնական ձեռնարկներ՝ համարվելով Հայաստանում թագադիր ասպետություն գործակալության եւ հարակից հարցերի մասին վաղագույն վկայություն Արամեական գրով արձանագրություն է հայտնաբերվել 1970թ. Սիսիանի մոտակայքում բացված մի դամբարանից, որում առկա թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մեջ ամենաուշ թվագրվող դրամները կրում էին պարթեւ արքա Օրոդես Բ-ի (Ք.ա.57-37թթ.) անունը: Արձանագրությունը կետային դրվագմամբ կատարված էր արծաթե մի թասի վրա (նկ.1, վերելում՝ գրակիր հատվածը), որն, ըստ Ա.Փերիխանյանի, թարգմանվում է՝ Այս թասը պատկանում է Աբախաստին. արծաթի քաշն է 100 դրախմա: Հարկ է նշել, սակայն, որ թասի գրության առաջին նշանը չի հանդիպում արամեական (կամ նրանից ծագած որեւէ) այբուբենում, ինչը նշում է եւ հեղինակը՝ տալով խսիստ անհամոզիչ մի բացատրություն, ըստ որի դա, հավանաբար, ցույց է տալիս արձանագրության սկիզբը: Բացատրությունն անհամոզիչ է նախ այն պատճառով, որ թասի միայն մի կողմը զբաղեցնող գրության սկիզբն ու ավարտն ինքնին հասկանալի են, եւ ապա՝

եթե այդ նշանը սկզբնաճույց լիներ, կհանդիպեր աշխարհում հայտնի հսկայական թվով արամեագիր արձանագրություններից եւս որեւէ մեկում:

1971թ. Իջեւանի շրջանի Թեղուտ գյուղից գտնվեցին երկու քարակոթողներ (նկ. 2-3), որոնցից մեկն ամբողջական էր, մյուսը՝ վնասված: Երկուսն էլ կրում էին համանման արձանագրություններ, որոնք Ա.Փերիխանյանը վերծանեց՝՝Արտաշես արքա Երվանդականի, Ջարեհի որդու, Բարու, թագակրի, Խշատրայի դաշնակցի, հաղթողի այն ամենը, ինչ քաջալերում է չարը, 10-րդ տարում:

Արտաշեսը՝ Ջարեհի որդին, բաժանեց հողը գյուղերի միջեւ:

1977 թ. Սպիտակի մերձակայքից գտնվեց մի նոր սահմանաքար համարվող կոթող, որը .Տիրացյանի կողմից ընթերցվեց հետեւյալ կերպ.՝ Արտաշես արքա, Երվանդունի վեհը, որդի Ջարեհի, բաժանող հողը, այստեղ, (այսինչ) գյուղի մեջ...:

1970-1977թթ. Արտաշատի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին արամեատառ գրություններով երեք առարկաներ՝ լաջվարդե (լագուրիտե) թաս (նկ.4), գդալ եւ զարդատուփի բեկոր: Որքան մեզ հայտնի է, դրանց վերծանության փորձերը դեռեւս չեն հրատարակվել:

1979-80թթ. Արտաշատի 5-րդ բլրի պեղումներից հայտնաբերվեցին շուրջ 8000 կնքադրոշմներ: Ժ.Խաչատրյանի բանավոր հաղորդման համաձայն՝ դրանց թվում կան արամեատառ գրություններով բազմաթիվ կնքադրոշմներ, որոնք դրոշմված են շուրջ երեք տասնյակ կնիքներով (կան նույն կնիքի բազմակի դրոշմվածքներ):

2001թ. ամռանը հայ-իտալական միացյալ արշավախումբը ավառ քաղաքից հարավ գտնվող Սարուխան գյուղից հայտնաբերեց թվով իններորդ սահմանաքարը՝ հետեւյալ գրությամբ.՝ Արտաշես արքան, որդին Ջարեհի բաժանեց հողը գյուղ (երի) միջեւ:

Ուշագրավ է, որ նշված հինգ տողերից վերեւ եւ ներքեւ՝ քարի կենտրոնական մասերում առկա են երկու կամ երեք նշաններ (նկ.5), որոնք, ըստ երեւույթին, արամեական տառեր չեն:

Նույն թվականին եղարքունիքի մարզի պատմական միջավայրի պահպանության ծառայության պետ Ն.Հազեյանը հայտնաբերեց եւս երկու նման արամեատառ քարակոթողներ, որոնք պահպանվել էին Վարդենիկ գյուղի եկեղեցու պատի մեջ:

Արձանագրություններից մեկը հնգատող էր, մյուսը՝ վեցատող.

Ա.՝ Արտաշես արքան, որդին Ջարեհի բաժանեց հողը միջեւ գյուղերի:

Բ. Արտաշես արքան, որդին Ջարեհի Երվանդական բաժանեց հողը միջեւ գյուղ(եր) ի:

Ի մի բերելով եւ դասակարգելով մինչեւ 2002 թվականը հայտնաբերված արամեատառ քարակոթողների առանձնահատկությունները Ս.Հմայակյանը արեց մի շարք ուշագրավ դիտարկումներ: Հիմք ընդունելով Ս.Պետրոսյանի եւ Ս.Հարությունյանի փաստարկները՝ Երուանդ-ի՝ հնդեվրոպական ամպրոպի աստծո հետ կապված դիցանուն լինելու վերաբերյալ, նա հնարավոր է համարում՝ Երվանդական՝ բառի՝ աստվածային,՝ աստվածագարմ՝

թարգմանությունը, որի դեպքում արքայի տիտղոսաշարը կստանա հետևյալ տեսքը. 'Արտաշես արքան, Ձարեհի որդին աստվածային... Հայկական լեռնաշխարհին մերձակա եւ պատմականորեն առավել կապված շրջաններից հայտնաբերված հնագույն արամեերեն արձանագրությունը գտնվել է 1985թ. Ուրմիո լճից դեպի հարավ-արեւելք ընկած Բուկան հնավայրից (լուսանկարն ու գծանկարը տե՞ս նկ. 1): Այն պաշտամունքային նշանակություն ունեցող բնագիր է, անեծքի բանաձեւ, որում հիշատակվում են աստվածներ Խալդին եւ Հադադը (իմա՞ Ադադ-Թեյշեբան, որը Վանի թագավորության դիցարանի երկրորդ գլխավոր աստվածն էր): Ելնելով հայագիտության համար ունեցած կարեւորությունից եւ նկատի ունենալով, որ մեզանում այդ ուշագրավ արձանագրությունը դեռեւս մնում է գրեթե անծանոթ, ստորեւ բերում ենք բնագրի ամբողջական թարգմանությունը.

1. Ով որ շրջի այս կոթողը, [թե՞]
2. պատերազմի ժամանակ, թե՞ խաղաղության, ամեն տեսակ համաճարակ, այնքան
3. շատ, որքան եղել է ողջ աշխարհում, թո՞ղ աստվածները տարածեն երկրում
4. այդ արքայի: Եվ նա ատելի է աստվածներին, եւ նա ատելի է
5. Խալդիին, որը ՇՒՐ-ում է: Թո՞ղ յոթը կով
6. կերակրեն մեկ հորթի, եւ այն թող չկշտանա: Թո՞ղ յոթը
7. կին [հաց] թխեն մի վառարանում եւ չլցնեն
8. այն: Թո՞ղ ծովսը (եփող) կրակի եւ աղմուկը
9. ջրաղացի անհետանան նրա երկրից: Թո՞ղ նրա հողն աղակալվի, եւ
10. թո՞ղ այն մոլախոտերից դառնանա թունավոր: Եվ այն արքան, որ [կգրի

(±)]

11. այս կոթողին, թո՞ղ Հադադն ու Խալդին կործանեն նրա գահը:
12. Եվ թո՞ղ Հադադը չամպրոպի
13. նրա երկրում, եւ թո՞ղ ողջ անեծքն այս կոթողի հարվածի (ջախջախի) նրան:

Հայաստանից հայտնաբերված արամեատառ դրամները: Վերջերս գիտական շրջանառության մեջ դրվեց Վանա լճի շրջանից գտնված մի դրամ (նկ. 2, այժմ պահվում է անգլիական մի մասնավոր հավաքածուում), որի արամեատառ գրությունը առաջարկվեց ընթերցել 'Միհրդատ՞ արքա Տոսպի': Նույնատեսակ մի դրամ էլ պահվում է անգլիական մեկ այլ հավաքածուում, որը եւս գտնվել է Վանա լճի ավազանից: Ներկայումս համանման երեք դրամներ են պահվում Հայաստանի պատմության պետական թանգարանում, որոնցից երկուսը հայտնաբերվել են Արտաշատից, մեկի ծագումն անհայտ է: Դրանց գրությունների ընթերցման մասին դեռեւս հրապարակումներ չեն եղել:

1998-1999թթ. Արտաշատի պեղումներից հայտնաբերվեց անհայտ արքայի պղնձե մի դրամ՞ արամեատառ քառատող կամ հնգատող գրությամբ, որը դեռեւս վերծանված եւ հրատարակված չէ:

Հայաստանի պատմության պետական թանգարանում են պահվում նաև Արտաշեսյան արքաների արամեատառ գրություններ կրող հինգ դրամներ, որոնք հայտնաբերվել են վերջերս եւ հրատարակության են պատրաստվում թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ Ռուբեն Վարդանյանի կողմից: Փաստորեն այսօր մեզ հայտնի են արամեատառ գրություններով տասնմեկ դրամներ, որոնց հանգամանալի ուսումնասիրությունը մնում է ապագայի խնդիր:

Դիտարկումներ հետագա ուսումնասիրությունների համար: Վերոշարադրյալ նյութից ակնհայտ է, որ թեպետ ցայսօր Հայաստանից հայտնաբերվել են զգալի թվով արամեատառ արձանագրություններ, դրանց ընթերցումը չի կարելի լիովին ճշգրիտ համարել, եւ պետք է շարունակել ուսումնասիրությունները: Հարկ ենք համարում մի քանի դիտարկումներ հայտնել արծարծվող խնդրի վերաբերյալ:

1. Մահմանաքար՝ համարվող քարակոթողների վերծանության փորձերը կատարվել են նախապես որոշված կաղապարով, ինչն անընդունելի է գուտ գիտական տեսակետից: Ա. Դյուպոն-Մոմերը, Սեւանի ավազանից գտնվելու պատճառով, դրանք ընթերցեց՝ կապելով ձկան որսի հետ, իսկ Հ. Օրբելու կողմից կոթողների համեմատությունը Մովսես Խորենացու նկարագրած արտաշեսյան սահմանաքարերի հետ հիմք ընդունելով՝ Ի.Դյակոնովը եւ Կ.Ստարկովան (հետագայում՝ նաև ուրիշները) մեկնաբանել են որպես հողաբաժան սահմանաքարեր: Վերծանության երկու տարբերակներում էլ առկա է կանխակալ մոտեցումը...
2. Քիչ ուշադրության է դարձվել սահմանաքար համարված քարակոթողների՝ մեկ գծի վրա դասավորված լինելուն եւ դրանից դուրս հայտնի չլինելուն: Եթե դրանք հողային բարփոխման արտահայտիչներ են, ապա ինչով բացատրել, որ այդ բարեփոխումը տարածվել է Հայաստանի միայն հյուսիս-արեւելքում, այն էլ միայն մեկ գծով... Այդ գիծը հյուսիս-արեւմուտքում սկսում է Սպիտակի շրջանից, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտով հասնում Թեղուտ, այնտեղից Սեւանա լճի արեւմտյան եւ հարավային ափերով ձգվում հարավ՝ ամենահարավային կետում հասնելով մինչեւ Ջանգեզուրի Իշխանասար լեռը: այթակղիչ է նշված գծի համընկնումը հին քարավանային ճանապարհների հետ:

Ուստի եւ անիմաստ չէր լինի կրկին հնարավոր այլ մեկնաբանությունների եւս անդրադառնալը (ճանապարհացույց սյուներ, ի նշանավորումն որեւէ իրադարձության կանգնեցված կոթողներ եւ այլն):

3. Հայտնի է, որ արամեական այբուբենում R եւ D տառերն ունեն միեւնույն տեսքը: Ա. Բորիսովն առաջարկելով Ջարիաթր (Ջարեհ) անվան ընթերցումը՝ ինքն էլ մատնանշել էր դրա թեականությունը, քանի որ այն կարելի էր ընթերցել չորս տարբերակով՝ 1) ZDYTD, 2) ZDYTR, 3) ZRYTD եւ վերջապես 4) ZRYTR:

Վերջին տարբերակի ընտրությունը պայմանավորված էր միայն Ջարիադրես անվանը նման լինելով: Հետագայում, չգիտես ինչու, այդ պայմանականությունը մոռացվեց, եւ Արտաշես Ա-ին ամրագրվեց որեւէ տեղ չվկայված Ջարեհ հայրանունն ու արվեցին դրանից բխող եզրակացություններ...

4. Արտառոց է Արտաշես արքայի անվան գրության բազմազանությունը (երեք տարբերակ՝ 'RTHSS; 'RTSRKSS; 'RTRKSRKSS), ընդ որում, Թեղուտի արձանագրություններից մեկում արքայանունը հանդիպում է երկու տարբեր գրությամբ...
5. Կան նշաններ, որոնք բացակայում են արամեական այբուբենում (Միսիանի թասի առաջին, Սարուխանի կոթողի վերին ու ներքին նշանները)... Մա մեզ մղում է մտածելու, որ ներմուծելով արամեական այբուբենը՝ Հայկական լեռնաշխարհում այն կարող էին հարմարեցնել տեղի լեզվանյութին, ըստ այդմ ավելացնել նոր նշաններ կամ փոխել որոշ տառերի նախկին նշանակությունը:

Հաշվի առնելով ողջ ասվածը, կարծում ենք, ճիշտ կլիներ մի կողմ թողնելով բոլոր կանխակալ մոտեցումները՝ վերանայել Հայաստանից հայտնաբերված բոլոր արամեատառ արձանագրությունների վերծանության փորձերը, եթե անգամ դրանք այսօր համարվում են ընդունված...

ԱՍՈՐԵՐԵՆԻ ԵՎ ԱՍՈՐԱԿԱՆ ԲԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ասորերենը արեւելաարամեական բարբառներից է, որը Ք.ա. II դարից վերածվում է գրական լեզվի: Ասորական սկզբնական գիրը (էստրանգելա կամ էստրանգելն) արամեական այբուբենի ճյուղավորումներից է, որով մեզ հասած վաղագույն արձանագրությունները թվագրվում են Ք.հ. I դարով: Արամեական այբուբենի պէս այն բաղկացած է 22 բաղաձայնից (ձայնավորների կիրառությունը սկսվում է միայն VII դարից), որոնք ունեցել են նաեւ թվական արժեք (վաղ ասորական այբուբենը տե՞ս նկ.1): Տառանունները քիչ են տարբերվում արամեականներից (ալեֆ-ալաֆ, գիմել-գամալ, դալետ-դալատ/դ, լամել-լամադ, մեմ-միմ եւ այլն): րության ուղղությունը եղել է աջից ձախ: V դարում, կապված Հիսուս Քրիստոսի բնույթի հարցի քննարկման հետ, ասորական եկեղեցին կիսվեց, որի հետեւանքով առաջ եկան ասորական գրի երկու տարբերակներ՝ նեստորական (արեւելյան) եւ յակոբյան (արեւմտյան): Ասորերեն եւ ասորագիր գրականությունը, որն առավելապէս քրիստոնեական է, ծաղկման հասավ III-VII դարերում: Եղեսիան (ներկայիս Ուրֆան), որ Ք.ա. II դարից մինչեւ Ք.հ. III դարը ասորա-հայկական բնակչությամբ Օսրոյենե թագավորության (որի արքաները կրում էին Աբգար (հզոր) պատվանունը) մայրաքաղաքն էր, սկսած I դարից դառնում է քրիստոնեության կարեւորագույն համաշխարհային կենտրոններից մեկը, ասորական քրիստոնեության գլխավոր կենտրոնը: I-II դարերում ասորերեն են թարգմանվում մի շարք գրքեր (այդ թվում՝ Աստվածաշնչի, որի հին ասորական թարգմանությունը հայտնի է 'Պեշիտտա' անվամբ), ստեղծվում ինքնուրույն ստեղծագործություններ, գրի առնվում պարականոն եւ խրատաուսուցողական բնույթի ստեղծագործություններ (որոնցից էր Ախիկար

իմաստունի գրույցը, որը դեռևս Ք.ա. V դարում գրի էր առնվել հին արամեերենով, իսկ Ք.հ. V դարում ասորերենից թարգմանվել է հայերեն): III-IV դարերում ստեղծվում է հարուստ ասորական գրականություն, որի աչքի ընկնող գործիչներից էին Բար-Դայսանը (II-III դարեր, Խորենացու մոտ³ Բարդաճանը, որը Հայաստանում անհաջող քարոզչություն է կատարել, ապա Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոն Անիում ասորերենի եւ հունարենի է թարգմանել հայոց մեհենական պատմությունը), Եփրեմ Ասորիս (IV դ.) եւ ուրիշներ:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո արգելվեց հայկական մեհենագրությունը, որից հետո Տրդատ -ի հրամանով Մեծ Հայքի պետական գրագրության, հոգևոր քարոզչության եւ ուսուցման երկու լեզուները դարձան հունարենն ու ասորերենն³ իրենց գրային համակարգերով: Այս ժամանակաշրջանում ասորերենը լայն տարածում է ստանում Հայաստանում, ինչի մասին են վկայում թե՞ հայ մատենագիրները, թե՞ հայ-ասորական պատմամշակութային եւ գրական հարաբերությունների ուսումնասիրությունը, թե՞ ասորերենից հայերենին անցած բառապաշարը: Եղեսիան դառնում է նաեւ հայերի կարեւորագույն կրթօջախներից մեկը:

Մեզ հասած վաղագույն ասորերեն եւ ասորագիր բնագրերը գտնվել են Եղեսիայից ու նրա շրջակայքից (Աբգարների հարստության արքա Մանուի ընտանիքի անդամներից մեկի շիրմաքարը³ արձանագրված 73թ., արքայի դստեր պատվին կանգնեցված քարակոթողը, մոտավորապես նույն ժամանակներով թվագրվող Ամաշ-Շամշա թագուհու³ նույն դինաստիայի տիրակալ Շարդուի կնոջ շիրմաքարը, 243թ. թվագրվող մագաղաթագիր առեւտրական պայմանագիրը) եւ Սամոսատից (Մար Բար-Սերապիոնի նամակը, որն ասորական նախաքրիստոնեական գրականության կարեւոր հուշարձան է):

Չնայած մատենագրական տեղեկությունների առատությանը, պետք է նշել, որ ցայսօր նախամաշտոցյան շրջանի ասորերեն եւ ասորագիր բնագրեր են հայտնաբերվել միայն Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմտյան ծայրամասերից եւ հարակից տարածքներից (Սամոսատ, Եղեսիա եւ շրջակայք), որոնք տվյալ բնագրերի ստեղծման ժամանակաշրջաններում չեն կազմել հայկական որեւէ պետության մաս:

ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՅՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պարսկերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական խմբի հարավ-արեւմտյան ճյուղին: Այն անցել է զարգացման երեք շրջաններ, որոնցից յուրաքանչյուրում ունեցել է տարբեր գրային համակարգեր. ա) հին պարսկերեն (Ք.ա. VI-IV դդ.), որը գրի է առնվել աքեմենյան կամ հին պարսկական սեպագրով, բ) միջին պարսկերեն կամ պահլավերեն (Ք.ա. IV - Ք.հ. X դդ.), որի համար հարմարացվել էր արամեական այբուբենը (պահլավական գիրը, տե՞ս նկ. 1), գ) նոր պարսկերեն (X դարից), որով ստեղծված գրականությունն արաբատառ է:

Թեպետ հնարավոր է ենթադրել, որ Աքեմենյան աշխարհակալության ժամանակաշրջանում Հայաստանում կարող էր գործածվել աքեմենյան կամ հին պարսկական սեպագիրը (հատկապես պետական գրագրության ասպարեզում), սակայն

մեր նախնիների կողմից այդ գրահամակարգի կիրառության մասին որեւէ փաստ չունենք: Ո՞չ Աքեմենյան Քսերքսես արքայի եռալեզու արձանագրությունը, ո՞չ էլ Դիոդորոս Միկիլիսացու տեղեկությունը նման եզրահանգման հիմք չեն տալիս (դրանց կանդրադառնանք առաջիկա ակնարկներում):

Հայաստանում միջին պարսկերենի կամ պահլավերենի եւ պահլավական գրի կիրառության մասին նյութական վկայություններ չունենք: Հակառակ դրան, մատենագրական տեղեկությունները վկայում են IV-V դարերում (387թ. Հայաստանի բաժանումից հետո) պարսկերենի գործածության մասին: Մինչեւ 360-ական թվականները Հայաստանում պարսկերենի կիրառության մասին ո՞չ հնագիտական, ո՞չ էլ մատենագրական որեւէ վկայություն չկա: Մովսես Խորենացու տեղեկությունը Մերուժան Արծրունու կողմից հունարեն դպրության արգելման եւ պարսկերենի պարտադրման անհաջող փորձի մասին թույլ է տալիս եզրակացնելու, որ պարսկերենը Հայաստանում գործածվել է 387թ. բաժանումից հետո, այն էլ միայն արեւելյան հաստիքում, ուր հաստատվեց պարսկական գերիշխանությունը:

Արամեական այբուբենի հիմքով է առաջացել նաեւ մանիքեական գիրը (III դարում), որի^ա Հայաստանում գործածվելու վերաբերյալ ո՞չ մատենագրական, ո՞չ էլ հնագիտական որեւէ փաստարկ չունենք: Ուստի լիովին անհիմն է Հայաստանում մանիքեական գրի կիրառման մասին տեսակետը, առավել եւս այն որպէս Դանիելյան գրեր ներկայացնելն ու դրանցից մաշտոցյան որոշ տառաձեւեր մակարերելը:

* * *

Հայագիտության մեջ շատ է արծարծվել օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայերեն դպրության խնդիրը: Առանց խորամուխ լինելու հարցի մեջ եւ վկայակոչելու այդ մասին եղած տվյալներն ու հայտնված կարծիքները, այստեղ բավարարվենք միայն նշելով, որ թեպետ տեսականորեն լիովին հնարավոր է նախամաշտոցյան Հայաստանում օտարագիր հայերեն գրության գոյությունը, ներկայումս այդ մասին վկայող որեւէ նյութական վկայություն չունենք...

Ի մի բերելով օտար երկրներում ստեղծված եւ մեր նախնիների կողմից Հայաստանում կիրառված գրահամակարգերի մասին շարադրված ողջ նյութը^ա տեսնում ենք, որ նախամաշտոցյան Հայաստանում շուրջ երկու հազար տարվա ընթացքում (Ք.ա. XV դարից մինչեւ Ք.հ. V դարը) ներմուծվել եւ տեղական մեհենագրության կողքին գործածվել են յոթ օտար լեզուներ^ա իրենց գրային համակարգերով: Սա ավելի քան խոստն վկայությունն է մեր նախնիների^ա գրի ու գրականության նկատմամբ տաճած հարգանքի ու սիրո (որի պերճախոս ապացույցն է դպրության Տիր աստծո պաշտամունքը), ինչպէս նաեւ մաշտոցյան դպրության սկզբնավորման ժամանակ զարգացած գրային մտածողության առկայության բացատրություններից մեկը...

ՕՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑՆԱԽԱՄԱՇՏՈՑՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՂԱԾ ԸԱՎՈՐ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհում Ք. ա. III հազարամյակից սկսած հանդիպում են օտար գրերով եւ լեզուներով գրառված զանազան իրեր եւ հուշարձաններ, որոնց հեղինակները տեղացիները չեն: Սրանք, հասկանալիորեն, չեն կազմում հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասը, սակայն նախամաշտոցյան Հայաստանում առկա գրային հուշարձանների ողջ բազմազանությունը ներկայացնելու նպատակով այս աշխատանքում ներկայացնում ենք դրանք³ առանց մանրամասների եւ արժեւորման:

Նարամ-Սուենի կոթողը Դիարբեքիի շրջանում: Օտարների կողմից Հայկական լեռնաշխարհում թողած հնագույն արձանագրությունը վերաբերում է Հայաստանի Ք.ա. XXIII դարի պատմության կարեւոր մի իրադարձության⁴ Աքադի տիրակալ Նարամ-Սուենի (Նարամ-Սինի) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքներից մեկին: Միջագետքից եւ Փոքր Ասիայից հայտնաբերված մի շարք բնագրեր վկայում են Արման(ի/ում) երկրի դեմ նրա ձեռնարկած պատերազմի մասին: Դիարբեքիի մոտակա Փիր Հուսեին հնավայրից գտնված ու ներկայումս Ստամբուլի Հին Արեւելքի թանգարանում պահվող Նարամ-Սուենի արձանագրությամբ քարակոթողը (նկ. 2), միանգամայն իրավացիորեն, համարվում է այդ պատերազմների իրեղեն ապացույցը: Արձանագրության ոչ լիովին պահպանված չորս սյունակներում ընթերցվում է.

I. Աստված(ային) Նարամ Սուենը, Հզորը...

II. Էնկի (Հայա) աստվածը չորս կողմերում: Ով որ շրջի կուրծքը (առջելը) ...

III. տեղադրի եւ հիմքը ծածկի (ոչնչացնի), ով այս արձանագրությունը փոխի (եղծանի), Ինաննա (Իշթար) դիցուհին թո՞ղ...

IV. պատառոտի եւ նրա ընտանիքը վերացնի, նրա ժառանգները եւ անունները ...⁵

Տեղեկություններ Մեծ Մասիսի լանջին առկա պատկերագիր, շումերական եւ հին բաբելոնյան սեպագիր արձանագրությունների մասին: Ի տարբերություն շարադրված եւ շարադրվելիք ողջ նյութի, այս ենթաբաժնում ներկայացվելու են ոչ թե հենց արձանագրությունները, այլ դրանց մասին հաղորդումները: Խոսքը վերաբերում է Մեծ Մասիսի լանջի ժայռերից մեկի վրա (Փոքր Մասիսի կողմում) փորագրված պատկերագիր (պիկտոգրաֆիկ), շումերական եւ հին բաբելոնյան սեպագիր արձանագրություններին, որոնք 1915թ. ռազմական իրադարձությունների ընթացքում տեսել եւ արտագրել է ռուս գնդապետ Ալեքսանդր Կոռըր: Վերջինս առաջին աշխարհամարտից առաջ ստացել էր նաեւ լեզվաբանական պատրաստություն եւ քաջածանոթ էր հնագույն միջագետքյան քաղաքակրթություններին: Պատերազմից հետո, հալածվելով բոլշեւիկների կողմից, նա ի վերջո հանգրվանում է ԱՄՆ-ում: Իր գրառումները⁶ մեկնաբանություններով ու թարգմանություններով, նա հանձնում է

Մասովածաշնչյան ուսումնասիրությունների բյուրոյի՝ տնօրեն Ֆ.Քիննամանին, որն էլ հրատարակում է դրանք 1946 թվականին իր խմբագրած 'Bible Archaeological Digest' հանդեսում:

Հրապարակման մեջ, դժբախտաբար, չի բերվում արձանագրություններից որեւէ մեկի լուսանկարը կամ գծանկարը: Ֆ.Քիննամանի տպավորությամբ^ա դրանք ունեն նույն բովանդակությունը եւ սկզբնական պատկերագիրը նախ թարգմանվել է շումերերենի, ապա^ա հին բաբելոներենի: Շումերական եւ հին բաբելոնյան սեպագրության օգնությամբ ընթերցելով մի շարք բառեր եւ արտահայտություններ (ծագել՝ կամ՝ ջրերի (ջրհեղեղի) սերմ, 'Աստծո խոսք՝ կամ՝ Աստծո խոսքով,՝ հանգրվանել լեռների (գագաթների) վրա,՝ դեպի լցված երկիր,՝ ջրհեղեղը, գիշերը իջավ ... վրա)^ա Ալ. Կոորը առաջարկում է վերականգնել հետեւյալը. 'Նրանք լքված Աստծուց^ա ջրերի վրայով հանգրվանեցին լեռներին, երբ գիշերը եւ ջրերը (ջրհեղեղը) իջան երկրի վրա:՝ Նույն այդ գրառումները ավելի ուշ Վ.Քամինգսը առաջարկեց վերականգնել հետեւյալ կերպ. 'Աստված լցրեց խոսքի սերմերը ջրերի մեջ... ջրերը լցրեցին (ծածկեցին) երկիրը^ա թափվելով վերելից... նրա որդիները կանգ առան լեռան վրա (կամ գագաթին)' ... նդապետ Ալ. Կոորի կազմած քարտեզներով 1969թ. Է.Քամինգսը եւ Լ.Հյուիթը գտել են նրա նկարագրած հնավայրերից մեկը, որում առկա էին շինությունների մնացորդները^ա կլոր շենքեր^ա հարակից քառակուսի սենյակներով, որոնք շատ բնորոշ են վաղ բրոնզի դարին (Ք.ա. IV հազարամյակի երկրորդ կեսից մինչեւ Ք.ա. XXIV դար):

Մեզ մնում է հուսալ, որ ոչ հեռու ապագայում կլինեն այս արձանագրությունների վերաբերյալ ավելի ստույգ եւ վավերական տեղեկություններ, որոնք հնարավոր կդարձնեն դրանց հանգամանալի ուսումնասիրությունը: Դեռեւս 1945թ. նոյեմբերի 2-ին Չիկագոյի համալսարանի Արեւելքի ինստիտուտի տնօրեն Ջոն Ուիլյամսը Բենջամին Ֆրանկլին Ալլենին ուղղված նամակ-զեկուցագրում նշել է, որ իրենք ստացել են բազմաթիվ տեղեկություններ Արարատի լանջերին գտնված հնագույն արձանագրությունների մասին, որոնց ուսումնասիրության համար անհրաժեշտ է պատշաճ գիտական մակարդակ ապահովող արշավախումբ ստեղծել:

Հին ասուրերեն գրությամբ թուրք Դիարբեքիից: Դիարբեքիի շրջանից գտնվել է ներկայումս Եվրոպայի մասնավոր հավաքածուներից մեկում պահվում է 1,09 մետր երկարությամբ բրոնզե թուր (նկ. 1), որի կենտրոնում առկա է Ք.ա. XIX-XVIII դդ. թվագրվող հին ասուրերեն սեպագիր արձանագրություն (նկ.2). Խուբշալումի տիրակալին. նրա տեր Լուլուանումը^ա որդին Ազիզումի, իր կյանքի եւ իր որդու կյանքի համար 12 մինա (քաշով) թուր նվիրեց (բերեց):

12 մինան հավասար է 6 կիլոգրամի. դարերի ընթացքում քայքայման ենթարկվելով^ա այն ներկայումս կշռում է մոտ 5 կիլոգրամ: Ըստ հրատարակչի^ա Խուբշալումի տիրակալը (կամ Բելը) պետք է նույնացվի Աշուրբանապալի գրադարանից հայտնի Ներգալ-Խուբշալի հետ, որը համարվել է անդրաշխարհի աստվածություն:

Սեպագիր արձանագրությամբ այս բրոնզե թուրը, որն իր ժամանակաշրջանի հազվագյուտ գտածո է Հայկական լեռնաշխարհից, կարող է լույս սփռել մեր երկրի (հատկապես հարավ-արեւմտյան շրջանների) Ք.ա. XIX-XVIII դարերի պատմության որոշ անհայտ հարցերի վրա:

Սեպագիր արձանագրությամբ հին բաբելոնյան կնիքներ: Հրատարակելով 1981թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆներով սարդիոնե գլանաձեւ կնիքի արձանագրությունը՝ Բ.Պիոտրովսկին գիտական շրջանառության մեջ մտցրեց Նախիջեւանի շրջանից գտնված հին բաբելոնյան մի կնիք (Ք.ա. XVIII-XVII դդ.), որի լուսանկարը նրան է տրամադրել հայտնի հնագետ Ա.Իեսսենը (նկ.3): Կնիքին պատկերված է աստվածությանը ուլ գոհաբերող մարդ, որի կողքին առկա է խիստ վնասված սեպագիր արձանագրություն:

Սեպագիր արձանագրությամբ մեկ այլ կնիք է վերջերս գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքից, որը, դատելով բավականին լավ պահպանված նշաններից, պետք է թվագրել հին բաբելոնյան ժամանակաշրջանով: Այն ներկայումս հրատարակության է պատրաստում հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովը:

Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը: Ք.ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող հնագիտական իրերի մեջ առանձնապես հիշատակելի է Մեծամորից գտնված գորտ-կշռաքարը (լուսանկարը եւ գրության գծանկարը՝ նկ.1-2), որը կրում է Բաբելոնի քասիթական արքաների անունները: Այն պատրաստված է եղել ագաթից եւ սեպագրերով կրել է համառոտ արձանագրություն. '1 սիկդ. Ուլամ-Բուրիաշի՝ որդու Բուռնա-Բուրիաշի':

Քասիթական դինաստիան Բաբելոնում իշխել է Ք. ա. XVI-XII դարերում: Մինչ այդ՝ Ք.ա. XVIII դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմտյան շրջաններից քասիթները արշավանք էին ձեռնարկել դեպի Բաբելոն. մի շարք փաստեր վկայում են, որ քասիթների բնօրրանը եղել է Հայկական լեռնաշխարհի հարավը (կամ հարավ-արեւմուտքը), որտեղից էլ ծավալվել է նրանց տիրապետությունը: Թերեւս դրանով են պայմանավորված Հայկական լեռնաշխարհի եւ քասիթական Բաբելոնի ջերմ հարաբերությունները Ք. ա. XVI-XIII դարերում, որի առանձին դրսևորումներ գտնում ենք հնագիտական հուշարձաններում... Եգիպտական հիերոգլիֆներով իրերը: Հայաստանից գտնված օտարագիր առարկաների մեջ հետաքրքիր խումբ են կազմում եգիպտական մեհենագրերով իրերը: Մինչ օրս Հայաստանից հայտնաբերվել են եգիպտական հիերոգլիֆներ կրող հինգ կնիքներ եւ երկու ուլունքահատիկներ:

Դրանցից հնագույնը 1981թ. Մեծամորի պեղումներից հայտնաբերված եգիպտական հիերոգլիֆ արձանագրությամբ սարդիոնե գլանաձեւ կնիքն է (նկ.3): Այն կրում էր Ք.ա. XV դարում իշխած Բաբելոնի քասիթական հարստության տիրակալ Կուրիգալզու Ա-ի անունը: Բաբելոնը քասիթական ժամանակաշրջանում կրում էր նաեւ 'Մեծ Սանգար' անունը, որն էլ առկա է կնիքի գրության մեջ. 'Կուրիգալզու՝ Մեծ Սանգար երկրի առաջնորդ' (կնիքը հայտնաբերել է Է.Խանգադյանը, արձանագրությունը՝ Օ.Բերլեյի օգնությամբ, ընթերցել է Բ.Պիոտրովսկին):

Մյուս չորս կնիքները (գտնված Վանից, Անիից, Արմավիրից եւ Լոռի բերդից) բզեզատեսք են: Վանից եւ Արմավիրից հայտնաբերված բզեզատեսք կնիքները կրում են Եգիպտոսի XVIII հարստության փարավոն Թութմոս -ի (Ք.ա. XVI-XV դդ.) գահանունը՝ 'Մենհեպերրա': Այդ գահանունով կնիքները, որ, թերեւս, ունեցել են խորհրդանշական ինչ-որ իմաստ, լայն

տարածում են գտել եւ գործածվել մինչեւ XXV եւ XXVI դիմաստիաների իշխանության ժամանակաշրջանը (Ք.ա. VIII-VI դդ.): Ե՞վ բզեզատեսք երեք կնիքները (նկ. 4, բացի Լոռի բերդից հայտնաբերվածից), եւ՞ երկու ուլունքահատիկները (գտնված Կարմիր բլուրից), ըստ Բ.Պիտրովսկու, պետք է թվագրել Վանի թագավորության ժամանակաշրջանով:

Լոռի բերդից հայտնաբերված երեք բզեզատեսք կնիքներից մեկն, ըստ Մ.Դեւեջյանի հաղորդման, կրում է եգիպտական հիերոգլիֆ մեկ նշան (սակայն չի նշվում, թե ինչ հիերոգլիֆ է դա):

Ասորեստանի արքաների՞ Հայաստանից գտնված արձանագրությունները: Օտարների կողմից նախամաշտոցյան Հայաստանում թողնված բնագրերի շարքում նշանակալի տեղ են գրավում Ասորեստանի արքաների գրավոր հուշարձանները, որոնք կարելուք սկզբնաղբյուրներ են Հայկական լեռնաշխարհի Ք.ա. II հազարամյակի երկրորդ եւ I հազարամյակի առաջին կեսերի պատմության վերաբերյալ:

Խոջալուի դամբարաններից մեկում գտնված ազաթե մի ուլունքահատիկ կրում է ասուրերեն արձանագրություն՝ Պալատ Ադադ-Ներարիի՞ տիեզերքի արքայի՝ (ընդհանուր տեսքը եւ դաջվածքը՝ նկ.5): Ասորեստանն ունեցել է Ադադ-Ներարի անունով մի քանի արքաներ: Խոջալուի տվյալ դամբարանից գտնված նյութերը թվագրվում են Ք.ա. I հազարամյակի սկզբով, սակայն սեպագիր արձանագրության հնագրական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ այն Ք.ա. XIII դարի գործ է, ուստի պետք է վերագրել այդ դարում իշխած Ադադ-Ներարի Ա արքային:

Թե երբ եւ ինչպես է այն հասել Արցախ, հայտնի չէ. Ասորեստանի արքաներից ոչ մեկի արշավանքները չեն հասել Արցախի տարածք, հետեւաբար գրակիր առարկան այնտեղ պետք է հայտնված լինի այլ ուղիով: Դամբարանը, համենայն դեպս, թվագրվում է Ք.ա. I հազարամյակի սկզբով:

Ասորեստանի արքաների՞ Հայաստանից գտնված արձանագրությունները: Տիգրիսի վերին հոսանքի ձախակողմյան վտակ Սուբնատը (ներկայումս՞ Ջեբենե-սու) որոշակի մի տարածք հոսում է ժայռի ստորին մասով, որի՞ ժայռից արտահոսելու վայրը՞՝ Տիգրիսի թունելը՝ (XIX դարում արված գծանկարը՝ հրատարակված Կ.Լեհման-Հաուպտի կողմից, նկ.1), Միջագետքի հնաբնակները համարում էին Տիգրիս սրբազան գետի ակունքը, ուստի այնտեղ հասնելը միջագետքյան հերոսների համար պաշտամունքային նշանակություն ունեցող մեծագործություն էր: Տիգրիսի թունելի՞ ելքի ժայռին փորագրված են ասորեստանյան արքաներ Թիզլաթպալասար Ա-ի եւ Սալմանասար -ի հինգ արձանագրություններ:

Թիզլաթպալասար Ա-ի (Ք.ա.1115-1077թթ.)՞ Ասորեստանի տարածքից գտնված արձանագրությունները բազմիցս հիշատակում են նրա արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ: Դրանց մասին վկայություններ են պահպանվել նաեւ տեղում՞՝ Տիգրիսի թունելի՞ եւ Մանակլերտի շրջաններում: Տիգրիսի թունելի՞ արձանագրությունը (Էստամպաժը՝ նկ. 2) հետեւյալն է.

Մշտնի, Շամաշի եւ Ադադի³ մեծ աստվածների, իմ տիրակալների օգնությամբ ես⁴ Թուկուլթիապալ-Էշարրա արքան Ասորեստանի, որդին Ասորեստանի արքա Աշուրբեշիշի⁵ որդու Մութաքիլ-Նուսքուի⁶ արքայի Ասորեստանի, նվաճողն Արեւմուտքի Մեծ ծովից եւ ծովից Նաիրիի, երրորդ անգամ արշավեցի դեպի Նաիրի՝

Մանազկերտի մերձակայքում (Յունջալու) գտնվող արձանագրությունը եւս վերաբերում է նրա հյուսիսային արշավանքին. Թուկուլթիապալ-Էշարրա³ արքա հզոր, արքա տիեզերքի, արքա Ասորեստանի, արքա աշխարհի չորս կողմերի, նվաճողը Նաիրիի երկրների⁴ Թումմիից մինչեւ Դայանի, նվաճողը Խաբխի երկրի⁵ մինչեւ Վերին ծովը՝

Ասորեստանյան հաջորդ արքան, որի թողած գրավոր հիշատակությունը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, Աշուրնասիրապալ Բ-ն է (Ք.ա. 884/3-859թթ.):

Դիարբեքիից շուրջ 30 կմ (20 անգլիական մղոն) հարավ-արեւելք ընկած Քարիս (Քուրիս) կոչվող վայրից հայտնաբերված կոթողի վրա քանդակված են այդ արքայի եւ նրա հաջորդ Սալմանասար -ի (Ք.ա. 859-824թթ.) արձանագրությունները:

Արձանագրված քարը դեռեւս XIX դարում տեղափոխվել է Բրիտանական թանգարան (Լոնդոն): Աշուրնասիրապալ Բ-ն պատմում է Ք.ա. 879թ. դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւմտյան, իսկ Սալմանասար -ն իր իշխանության առաջին տարիներին դեպի լեռնաշխարհի հարավային շրջանները կատարած արշավանքների մասին:

Տիգրիսի թունելի՝ մյուս չորս արձանագրությունները փորագրվել են Սալմանասար -ի հրամանով (երկուսի գծանկարները՝ նկ.3, 4): Դրանցից երկու վատ պահպանվածներում ընթերցվում են միայն արքայի նկատմամբ աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերը, նրա տիտղոսաշարը, արեւելքից մինչեւ արեւմուտք կատարած նվաճումների մասին առանձին հատվածներ: Մյուս երկուսում (27 եւ 17 տողերից բաղկացած), աստվածների բարեհաճության մասին սկզբնամասերից եւ տիտղոսաշարերից բացի, ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրադրության մասին: Նկատի ունենալով դրանց կարեւորությունը³ ստորեւ բերում ենք բնագրերի⁴ Հայկական լեռնաշխարհին վերաբերող հատվածները.

...նվաճողը երկրների⁵ Նաիրիի ծովից մինչեւ Մեծ ծովն [Արեւ]մուտքի: Խեթերի երկիրը⁶ մինչեւ նրա բոլոր սահմանները, Մե[լիդու] երկիրը, Դայանի, Սուխմու երկիրները, Արգաշկուն քաղաքը⁷ արքայական քաղաքն Արամու ուրարտացու, իլգան եւ Խուբուշկիա երկրները⁸ Տիգրիս գետի ակունքից մինչեւ ակունքը Եփրատ գետի, Ներքին Չամուայի ծովից մինչեւ Քաղդեական ծովը եւ խոնարհեցրի [իմ ոտքեր]ին...: (Ներքին Չամուայի ծովն Ուրմիո լիճն է, Քաղդեական ծովը⁹ Պարսից ծոցը): ...նվաճողը երկրների⁵ Նաիրիի ծովից մինչեւ Մեծ ծովն [Արեւ] մուտքի: Խեթերի երկիրը⁶ անգամ մինչեւ նրա բոլոր սահմանները, եւ հնազանդեցրի եւ ...[...], Էն[զ]իտ[ե] երկրի լեռնանցքը [եւ մտա], երկրները Սուխմու, Դայանի եւ Ուրարտու, անգամ մինչեւ նրա (Ուրարտուի) սահմանները, եւ հնազանդեցրի: իլգան երկրի վրա եւ գնացի, գիլգանցիների հարկը եւ ստացա:

Երրորդ անգամ գնացի Նաիրիի վրա եւ Տիգրիսի ակունքի մոտ գրեցի անունն իմ՝

Հայկական լեռնաշխարհում Սալմանասար -ի եւս մեկ արձանագրություն է հայտնաբերվել Քենքից: Քենքը (Քենք Ջորջ կամ Քենք Բողագի) գտնվում է Եփրատի արեւմտյան ափին, Այնթապից (ազիանթապից) շուրջ 60կմ հյուսիս-արեւելք: Արքայի պատկերն ու արձանագրությունը (նկ.5) քանդակված են ժայռի վրա, գետի մակարդակից մոտ 50մ բարձրության վրա: Այն պատմում է ասորեստանյան արքայի^ա իր թագավորության երկրորդից չորրորդ տարիներին դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների մասին^ա պարունակելով տվյալներ, որոնք հայտնի չեն նույն արքայի այլ արձանագրություններից:

Ասորեստանի արքաների^ա Հայաստանից գտնված արձանագրությունները:

Նախամաշտոցյան Հայաստանում հիշատակություն թողած ասորեստանյան վերջին արքան Ք.ա. 705-681թթ. իշխած Սինախերիբն (Սենեքերիմ) է, որի արձանագրությունը գտնվում է Ջուդի լեռան վրա: Ջուդի լեռը գտնվում է Կորդվաց լեռների շրջանում, սեպագրերում հայտնի է Նիբուր անվամբ, եւ որոշ հին ավանդագրույցներում, որոնք տեղ են գտել նաեւ Ղուրանում (11, 38-46), այն համարվում է ջրհեղեղից հետո փրկության լեռ: Արձանագրությունը վերաբերում է արքայի գահակալության հինգերորդ տարուն (Ք.ա. 701թ.):

Հաղորդման համաձայն^ա Ասորեստանի արքան արշավում է Կուտմուխու (Կադմեա տուն) մարզի սահմանին գտնվող Թումուրրա, Շարիմ, Խալբուդա, Կիպշա, Էզամա, Կուա եւ Կանա բնակավայրերը, որոնք արծվաբնի նման տեղադրված են Նիբուր լեռան բարձունքներում՝ եւ հնում^ա նրա նախնի արքաների օրոք, հզոր էին ու հպարտ, չէին ճանաչում սարսափը տիրապետության: Դժվարին արշավից հետո (որն, ըստ արձանագրության, ավարտվել է ասորեստանցիների հաղթանակով) արքայի գորքն ուղղություն է վերցնում դեպի հարեւան Դայաե երկրի Ուկկու բնակավայրը, գրավում այն շրջակա 33 այլ բնակավայրերի հետ միասին, հրդեհում, ավերածությունների եւ թալանի ենթարկում դրանք: Այնուհետեւ նշվում է արքայի կողմից տվյալ արձանագրությունը կանգնեցնելու մասին, որն ավարտվում է այն ոչնչացնողներին ուղղված անեծքի բանաձեւով:

Ասորեստանյան արձանագրություններ Մանայի թագավորության տարածքից (Ուրմիո լճի ավազանի հարավից): Այս խմբի յոթ արձանագրություններից վեցը հայտնաբերվել են Ուրմիո լճից հարավ-արեւմուտք ընկած Հասանլու հնավայրից:

Դրանցից մեկը 1964թ. գտնված քարե սկավառակաձեւ աման է (սկիհ կամ սկուտեղ, տե՞ս նկ.1), որը պարունակում է ասուրերեն գրված արձանագրություն:

Վերջինիս տառադարձման ու թարգմանության հարցերում մասնագետների կարծիքները տարամիտվում են: Առաջարկվել են հետեւյալ ընթերցումները.

Քաուրիի պալատը Իդի երկրի, Շամաշ-ուշիշի(±),

Քաուրիի^ա Իդի երկրի արքայի պալատը^ա ձոնված արեւի աստված Ուշիշիին, Պալատը Բահուրիի, Ուշի-շիի լեռնային օթեւանի՝

['Պատկանում է] Քատրիի² Իդի երկրի արքայի պալատին, ձոնված արեւի աստծուն:

Արձանագրությունը, բոլոր դեպքերում, թվագրվում է միջին ասորեստանյան դարաշրջանի սկզբից մինչ Բ.ա. 800թ. ընկած ժամանակահատվածով: Ուշագրավ է, որ Բ.ա. 855 թ.

Սալմանասար -ն Չամուա երկրի դեմ կատարված արշավանքի առնչությամբ հիշատակում է Իդի անունով երկիր եւ քաղաք, որի առնչությունն այս արձանագրության հետ դժվար է որոշել:

Հաջորդ երկու արձանագրությունները պահպանվել են քարե սկահակի եւ քարե մականի կամ գուրգի վրա, որոնցից առաջինը պարունակում է Քասիթական Բաբելոնի թագավոր Կադաշմեին-Էնլիլի (I-ի² Բ.ա. 14-րդ դար, կամ II-ի² Բ.ա. XIII դարի առաջին կես) անունը, իսկ երկրորդում առկա է 'Աշշուր-Ուբալլիթի պալատը՝ արտահայտությունը: Խոսքն, ամենայն հավանականությամբ, վերաբերել է Ասորեստանի նույնանուն արքային, որը կառավարել է Բ.ա. 1365/3-1330/1328 թվականներին:

Նույն հնավայրից հայտնաբերված իրերի մեկ այլ խմբում 15 քարե գայիսոններից (կամ մականներից) երեքը արձանագրված են: Առաջին երկուսը կրում են էլամական տիրակալ Թան-րուխուրաթերի (իշխել է Բ.ա. 2036-1850թթ. ընթացքում) անունը, երրորդի վրա պահպանվել է միայն անվան սկզբնամասը՝ Sin...:

Մերձուրմյան ավազանից հայտնաբերված եւ, ենթադրաբար, Ասորեստանի Արբաիլ քաղաքից ծագող յոթերորդ արձանագրությունը փորագրված է բրոնզե արձանիկի վրա: Տասներկու տողանոց արձանագրությունը բարեմաղթանք է² ձոնված Արբաիլի Իշտար աստվածուհուն² հանուն ասորեստանյան Աշշուր-դան I (Բ.ա. XIII դ.) արքայի. բնագրի հեղինակը Արբաիլ քաղաքի դպիր Շամշի-Բելն է² Ներգալ-նադին-ախխեի որդին:

Ինչ վերաբերում է արձանագրված այս իրերի ծագմանը, ապա դրանք, ամենայն հավանականությամբ, ներմուծվել են դրսից, ինչը կարող է վկայել Էլամի, Ասորեստանի եւ Բաբելոնի հետ տարածաշրջանի ունեցած ակտիվ փոխհարաբերությունների մասին:

Արմավիրից գտնված սեպագիր երեք սալիկները: Օտարագիր արձանագրություններից են նաեւ 1980-ական թթ. սկզբին Արմավիրից գտնված սեպագիր սալիկների երեք բեկորները (նկ.2): Դրանք կավե սալիկների մասեր էին, որոնցից ամենամեծը եւ լավ պահպանվածը երկու երեսին ուներ ընդամենը 28, երկրորդը՝ 16 (նույնպես երկու երեսին), իսկ երրորդի մի կողմում պահպանվել է 9 տող: Առաջինը Ի.Դյակոնովը եւ Ն.Յանկովսկայան վերծանեցին որպես 'իլգամեշ՝ էպոսի թատերականացված մի հատված² գրված էլամերեն լեզվով, փորձելով նույն համատեքստում դիտարկել մյուս երկու բեկորներից ընթերցված առանձին բառերը (ենթադրաբար, դրանք կարող էին պատկանել թատերախմբի անդամներին): Բնագրերը թվագրվեցին Բ.ա. VIII դարով, իսկ 'իլգամեշ՝ էպոսի մի հատվածի սցենարի առկայությունը Արգիշտիխինիլի-Արմավիրում ենթադրաբար կապվեց էլամա-ուրարտական հակասորեստանյան դաշինքի հետ, որը կարող էր ամրապնդված լինել Սարգուրի Բ-ի (Բ.ա. 764-735թթ.) եւ Էլամի արքայադստեր ամուսնությամբ, ինչն էլ գուգադիպած լինել արքայի

գահակալման հանդեսին, որի ժամանակ էլ հնարավոր է, որ տեղի ունեցած լինել էլամական թատերախմբի բեմականացումը:

Կարճ ժամանակ անց նրանց վերծանությունը կասկածի ենթարկվեց, վերանայվեց, եւ առաջարկվեց արմավիքյան երեք բնագրերն ընթերցել էլամերեն, սակայն մեկնաբանել որպես տնտեսական բովանդակության նամակների հատվածներ, որոնք պետք է թվագրվեն Ք.ա. VI դարի երկրորդ կամ Ք.ա. V դարի առաջին կեսով... Եթե վերջնականապես հաստատվի սալիկների էլամերեն ընթերցումը, նախամաշտոցյան Հայաստանում (Քսերքսեսի արձանագրության էլամերեն բաժնի հետ միասին) կունենանք էլամերեն չորս արձանագրություն:

Քսերքսեսի եռալեզու արձանագրությունը Վանում: Աքեմենյան Դարեհ Ա-ի որդի եւ հաջորդ Քսերքսես արքան հայտնի դարձավ Ահուրամազդայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեփոխումով: Իր գործունեությանը նվիրված բազմաթիվ արձանագրություններից մեկը (նկ.1) նա թողել է Վանի ժայռի հարավային կողմում (գետնից շուրջ 18մ բարձրության վրա)² գրված երեք լեզուներով (պարսկերեն, բաբելոներեն եւ էլամերեն): Երեք բաժինների միջեւ էական տարբերություններ չկան. տարբերվում են հատուկ անունների գրությունները:

Պարսկերեն, բաբելոներեն եւ էլամերեն բաժիններում, համապատասխանաբար, Ահուրամազդան կոչվում է Աուրամազդա, Ախուրամազդա, Օրամազդա, Քսերքսեսը³ Խշայարշա, Խիշի'արշա, Իկսերիսաս, Դարեհը³ Դարայավաուշ, Դարի'ամուշ, Դարիյավաու: Բերում ենք գլխավոր³ պարսկերեն բաժնի թարգմանությունը (գիտության մեջ տարածված անվանաձեւերով).

Մեծ աստված է Ահուրամազդան³ մեծագույնն աստվածներից, որ արարեց այս աշխարհը, որ արարեց այն երկինքը, որ ստեղծեց մարդուն, որ մարդկանց համար հաճույքներ ստեղծեց, որ Քսերքսեսին դարձրեց թագավոր³ միակ թագավոր բոլորին, միակ հրամանատար բոլորին:

Ես Քսերքսեսն եմ³ արքա մեծ, արքա արքաների, արքա բազում ժողովուրդների երկրների, արքա այս մեծ աշխարհի եւ որդին Դարեհ արքայի, Աքեմենյան:

Քսերքսես արքան ասում է.- Դարեհ արքան, որն իմ հայրն էր, շնորհիվ Ահուրամազդայի բազում վայելչություններ կատարեց եւ այստեղ հրամայեց քանդակել, սակայն արձանագրություն գրել չտվեց. ապա ես հրամայեցի այս արձանագրությունը գրել:

Թո՞ղ Ահուրամազդան (մյուս) աստվածների հետ պաշտպանի ինձ եւ թագավորությունն իմ եւ ինչ հիմնել եմ ես:

Արձանագրությունը կարելուք վկայագիր է Հայաստանի Ք.ա. VI-V դարերի պատմության վերաբերյալ. այն անուղղակիորեն կարող է վկայել Ահուրամազդայի պաշտամունքին նվիրված կրոնական բարեփոխման ոլորտում նաեւ Հայաստանի ընդգրկվելու մասին: Պատմական նշանակությունից զատ³ նշենք, որ սա նախամաշտոցյան Հայաստանից հայտնաբերված միակ եռալեզու արձանագրությունն է:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները: Հայաստանի մինչամաշտոցյան ժամանակաշրջանի գրավոր հուշարձանների շարքում կարելուր տեղ գրավող լատիներեն արձանագրությունները վերաբերում են հռոմեական բանակների^ա Հայաստան կատարած արշավանքներին եւ կանգնեցված են բացառապես օտարների կողմից: Ուստի պետք է հրաժարվել հայագիտության մեջ տարածում գտած այն մոտեցումից, ըստ որի լատինական գիրը, հունականի ու արամեականի կողքին, համարվում է նախամաշտոցյան Հայաստանում կիրառված այբուբեններից մեկը:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները կապվում են Հռոմեական կայսրության արեւելյան քաղաքականության հետ եւ հայտնաբերվել են հայկական երեք թագավորությունների (Մեծ Հայք, Փոքր Հայք եւ Կոմմագենե) տարածքներից:

Մեծ Հայքի լատիներեն արձանագրությունները հայտնաբերվել են երեք^ա Վաղարշապատի (Էջմիածնի), Արտաշատի եւ Խարբերդի շրջաններից: Դրանցից առաջինը 1863թ.

հայտնաբերված Վաղարշապատի (Էջմիածնի) լատիներեն արձանագրությունն է (նկ.2), որը կանգնեցվել է 185 թվականին^ա Կոմոդոս կայսեր օրոք, հռոմեական XV Ապոլինարիս (Ապոլոնյան) լեգեոնի հրամանատարների կողմից: Արձանագրությունից ջնջվել է Կոմոդոսի անունը: Դա, ըստ երեւույթին, կապվում է 193 թվականին հռոմեական սենատի կողմից նրա, որպես անարժան կայսեր, անունը մոռացության մատնելու որոշման հետ, որի ընդունումից հետո հիշատակարաններից սկսեցին հանել, ոչնչացնել Կոմոդոսի անունը: Իսկ դա նշանակում է, որ հռոմեական լեգեոնները մինչեւ այդ թվականը գտնվել են Հայաստանում:

Վաղարշապատից (Էջմիածնից) գտնված մյուս լատիներեն արձանագրությունը, որը հայտնի դարձավ 1907 թվականին, վերաբերում է Մարկոս Ավրելիոս կայսեր իշխանության ժամանակաշրջանին (նկ.3): Դատելով արձանագրության մեջ կայսեր տիտղոսաշարից^ա այն պետք է կանգնեցված լինի 173-176 թվականների միջեւ, երբ Հայաստանում Հռոմի շահերն էին պաշտպանում հռոմեական զորաբանակներից երկուսը^ա XV Ապոլինարիս (Ապոլոնյան) եւ XII Ֆուլվիանոս լեգեոնները:

1967թ. Վաղարշապատի (Էջմիածնի) պեղումների ընթացքում բացված դամբարաններից մեկում կարասային թաղման կավե կափարիչի վրա գտնվեց լեգեոն չորրորդ սկյութական լատիներեն մակագրությունը: Դա կապվում է նույն թվականին Արտաշատից գտնված Տրայանոս կայսեր արձանագրության հետ (տե՞ս հաջորդ ակնարկում). երկու արձանագրություններն էլ վերաբերում են 114-116թթ. պատմական իրադարձություններին:

Նախամաշտոցյան Հայաստանի լատիներեն արձանագրությունները: Խարբերդի շրջանից լատիներեն երեք արձանագրություններ են գտնվել 1879 եւ 1883 թվականներին. երեքն էլ^ա նույն բովանդակության (սակայն բառացի չկրկնելով մեկմեկու), երեքն էլ^ա հայկական գյուղերի եկեղեցական շինությունների շարվածքում (դրանցից մեկի էստամպածն^ա արված Կ.Լեհման-Հաուպտի կողմից, տե՞ս նկ.1): Առաջին երկուսը (գտնված 1879թ.) հայտնաբերվել են Խարբերդից 2-3կմ հարավ-արեւելք ընկած Կեզրիկ գյուղից եւ պահպանվել են բավականին լավ: Երրորդը գտնվել է 1883թ. Կովանք գյուղից (Կեզրիկից դեպի հարավ-արեւելք). հետագա

դարերում այս արձանագրության վրա փորագրվել է մեծ խաչ, որի հետեւանքով լատիներեն բնագիրը մեծապես տուժել է, սակայն պահպանված հատվածները ցույց են տալիս, որ այն նախորդ երկուսի կրկնօրինակներից է:

Բնագրերի համընկնող թարգմանությունը հետեւյալն է. Ներոն Կլավդիոս, Կեսար, Օգոստոս, երմանիկոս, Իմպերատոր, երագույն քուրմ, իր տրիբունական իշխանության տասնմեկերորդ տարին, իր չորրորդ կոնսուլությանը, իններորդ անգամ [հռչակված] իմպերատոր, հայրենիքի հայր: նեոս Դոմիտիոս Կորբուլոնի² Օգոստոսի լեգատի, պրոպրետորի, եւ Տիտոս Ավրելիոս Ֆուլվոսի³ Օգոստոսի լեգատի օրոք, III ալլիական լեգեոն:

Արձանագրությունները կանգնեցվել են 64 թվականին: Դրանք վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ Մեծ Հայքի գահի համար 52 թվականից սկսված ռազմական գործողություններն ավարտվեցին հռոմեական զորքերի² հայ-պարթևական ուժերից Հռանդեայում կրած խայտառակ պարտությամբ (62թ.), որից հետո նույն վայրում 64 թվականին կնքվեց հաշտություն, որով Արշակունյաց արքայատոհմը հաստատվեց Մեծ Հայքում:

Քարե սալերի վրա արձանագրություններն առնված են քառակուսի շրջանակների մեջ. դրանք, հավանաբար, դրվել են այն շինության (կամուրջ կամ ամրոց) պատի մեջ, որը կառուցվել է բանակցություններում Հռոմը ներկայացնող, Արեւելքի զորքերի հրամանատար նշանակված նեոս Դոմիտիոս Կորբուլոնի կողմից:

Արտաշատի շրջանից եւս հայտնի են երեք լատիներեն արձանագրություններ³ գտնված Ալեթլու եւ Փոքր Վեդի գյուղերից: Ալեթլուից հայտնաբերվել է սպիտակ քարից պատրաստված սյան բեկոր (նկ.2), որի վրա ընթերցվում են միայն իմպերատոր, կեսար, աստվածային բառերը (հապավումներով): Ալեթլուն գտնվում է Հին Արտաշատի (ներկայիս Խոր Վիրապի) դիմաց, Արաքսի հանդիպակաց ափին, ուստի եւ արձանագրության բեկորը պետք է համարել Հռոմի կայսրերից մեկի³ հայոց մայրաքաղաքի հետ կապված ինչ-որ ձեռնարկի իրեղեն վկայություն:

1967թ. պատմական Արտաշատ մայրաքաղաքի հյուսիս-արեւելյան սահմաններում գտնվող ներկայիս Փոքր Վեդի գյուղի հարավ-արեւելյան եզրին կատարված շինարարական աշխատանքների ժամանակ 1,4մ խորության վրա հայտնաբերվեցին երկու լատիներեն արձանագրություններ: Դրանցից առաջինը (նկ.3) եռատող է, ունի շատ խոշոր չափեր (8,5մ երկարություն եւ 0,8մ բարձրություն, առաջին տողի տառերի բարձրությունը 20սմ է, երկրորդինն ու երրորդինը³ 16սմ) եւ կրում է Հռոմի Տրայանոս կայսեր անունը, իսկ երկրորդը³ համեմատաբար մանր տառերով գրված, զինվորականի տապանաքար է:

Բնագրերը վերաբերում են 116 թվականի երկրորդ կեսին Տրայանոս կայսեր³ դեպի Հայաստան կատարած արշավանքին: Խոշոր արձանագրության վնասված մասերը հաջողվում է վերականգնել եւ ընթերցել. Իմպերատոր Կեսար աստվածային, Ներվայի որդի Ներվա Տրայանոս, Օպտիմոս (լավագույն), Օգոստոս (վեհափառ), երմանիկոս (երմանական), Դակիկոս (Դակիական), Պարթեիկոս (Պարթեական), երագույն քուրմ, Մաքսիմոս

(մեծագույն), տրիբունի իշխանությամբ (օժտված) 20 անգամ, կայսր (հռչակված) 13 անգամ, հյուպատոս 6 անգամ, [հայրենիքի հայր ?]. սկյութական լեգեոնը կատարեց (կանգնեցրեց):

Տապանաքարի տասը տողերից պահպանվել են առաջին չորսը, իսկ մյուսներից՝ միայն առանձին տառեր: բությունը հետեւյալն է. Մտորերկրյա աստվածներին (մաներին). Կայուս Վալ(երիուս) Կրե , զինվոր իտալիկների | լեգեոնի գորաջոկատի, ծառայեց . . . հուշարձանը (?) դրվեց:

Ի մի բերելով՝ նշենք, որ Մեծ Հայքից հայտնաբերված լատիներեն ինը արձանագրությունները Հայաստանի I-II դարերի պատմության երեք շրջանների (60-ական թվեր, երբ Արշակունյաց արքայատոհմը հաստատվում էր Մեծ Հայքի գահին, 114-116 եւ 160-190-ական թթ.) կարելուք սկզբնաղբյուրներ են եւ լրացնում են դարաշրջանի մասին մատենագրական հաղորդումներից մեր ստացած զիտելիքները:

Ինչպես Մեծ Հայքից, այնպես էլ Փոքր Հայքից եւ Կոմագենեից հայտնաբերված լատիներեն արձանագրությունները հիմնականում վերաբերում են հռոմեական բանակների արեւելյան արշավանքներին: Դրանցում հստակ առանձնանում է երկու խումբ՝ հռոմեական զորամասերի տեղակայման մասին վկայող արձանագրություններ, որոնցում տեղեկություններ են հաղորդվում հռոմեական կայսրերի ու զորավարների վերաբերյալ, եւ զինվորների տապանագրեր:

Օտարների թողած հունարեն արձանագրությունները: Հունագիր հուշարձանները Հայկական լեռնաշխարհում բաժանվում են երկու խմբի՝ տեղացիների հեղինակած եւ օտարների թողած: Առաջիններին արդեն անդրադարձել ենք համապատասխան բաժնում, իսկ երկրորդ խմբի բնագրերը (ինչպես լատիներեն արձանագրությունները) կապվում են Հռոմի արեւելյան քաղաքականության հետ:

Հռոմեական զորականների կողմից Հայաստանում թողած արձանագրությունների մեջ կան նաեւ հունարեն տապանագրեր: Դրանցից մեկը (նկ.1) հայտնաբերվել է 1914թ.

Վաղարշապատից: Դամբանական արձանագրությունը կանգնեցվել է II դարի երկրորդ կեսին: Հեղինակը զինվորական տրիբունն էր XV Ապոլոնյան լեգեոնի, որի մասին արդեն գիտենք Վաղարշապատում 173-176 եւ 185 թվականների լատիներեն արձանագրություններից: Տապանագիրը հետեւյալն է. Ի հիշատակ Էլիի Մաքսիմի՝ ամուսնու, որն ապրեց 35 տարի, եւ Էլիի Վալենտինի՝ դրս-տեր, որն ապրեց 13 տարի, Էլիի Վալենտը՝ XV Ապոլոնյան լեգեոնի զինվորական տրիբունը, նրանց ամուսինն ու հայրը, նվիրեց (աստվածներին):

Մի քանի հունարեն տապանագրեր են հայտնաբերվել Քենքից (Եփրատի արեւմտյան ափին, Այնթապից (ազիանթեպից) շուրջ 60կմ հյուսիս-արեւելք), Սալմանասար -ի վերոհիշյալ արձանագրությունից ոչ հեռու:

1978թ. Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի մոտ կատարված ճանապարհաշինական աշխատանքների ժամանակ հայտնաբերվեց ոչ մեծ քարե մի գոհասեղան՝ Էմիլիոս Վալես. Մայր Երկրին՝ Օլյուպրի աստվածուհի տիրուհուն՝ արձանագրությամբ:

Արձանագրության առանձնահատկությունների եւ ժամանակաշրջանի պատմաքաղաքական իրադարձությունների քննությունը թույլ է տալիս այն թվագրելու 163-164 թվականներով:

Նշենք, որ սրանցով չեն սահմանափակվում օտարների^ա նախամաշտոցյան Հայաստանում թողած հունարեն արձանագրությունները. մենք տեղյակ ենք մի քանի արձանագրությունների մասին (հատկապես Փոքր Հայքի եւ Կոմմագենեի տարածքներում), որոնց այստեղ չենք անդրադառնում^ա չունենալով ձեռքի տակ համապատասխան գրականություն:

Հայաստանից հայտնաբերված օտար ծագումով դրամները: Հավատարիմ մեր սկզբունքին^ա արձանագրություններից հետո այստեղ կներկայացնենք նույն ծագումն ունեցող գրակիր դրամները: Թեպետ ո՞չ առաջինները, ո՞չ էլ վերջինները չեն կարող դիտարկվել իբրև հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասեր, մենք ժամանակագրական հերթականությամբ այստեղ կհիշատակենք Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագումով դրամների խմբերը:

Հայաստանից հայտնաբերված վաղագույն դրամները (Ք.ա. VI-Vդդ.) գրակիր չեն. դրանք, այսպես կոչված, միլեթյան տեսակի արծաթե դրամներն են, որոնց մի երեսին առյուծի գլուխ է պատկերված, մյուսին^ա բուսական նախշ (կամ ոճավորված հավասարաթեւ խաչ): Երկու այդպիսի դրամներ գտնվել են Էրեբունիի պալատական տաճարի ներսում, նվիրատվության սեղանի մոտ: Խ.Մուշեղյանը կարծիք է հայտնում, որ դրանք կարող են լինել ոչ թե Միլեթում հատված դրամներ, այլ տեղական դրամագործության արգասիք, ինչպես Բոսֆորում մ.թ.ա. V դարում միլեթյան դրամների ընդօրինակությամբ թողարկվում էին տեղական կերտվածքի դրամներ: Ք.ա. VI-V դարերով են թվագրվում նաև Հայաստանից գտնված արթնական եւ արթնանյան դրամները:

Ք.ա. IV դարում Հայաստանում տարածում են գտնում մակեդոնական (Ալեքսանդր Մեծի, նրա որդի Ֆիլիպ III-ի անուններով մակագրված) դրամները, նույն դարավերջի հռոդոսյան դրամ է գտնվել Արմավիրից:

Ք.ա. III-ի դարերում օտար դրամական միավորներից Հայաստանում լայնորեն կիրառվում են սելևկյան, փյունիկյան, պարթևական (Ք.ա. II-ի դարեր), կապադովկիական, պոնտական (Ք.ա. II-ի դդ.), փոքրասիական Պերգամոն եւ Եփեսոս քաղաքների հունագիր դրամները:

Ք.ա. I-ից Ք.հ. III դարի կեսերին հայաստանյան դրամաշրջանառության մեջ մեծ տարածում են ստանում հռոմեական լատինագիր դրամները, որոնց կիրառությունը հետագայում նվազում է:

Ք.հ. III դարի կեսերից մինչև V դարի սկիզբը հայաստանյան առևտրում գերակշռում են սասանյան պահլավագիր դրամները:

Ահա այսպիսին է նախամաշտոցյան Հայաստանի դրամաշրջանառության ընդհանուր պատկերը. տարածված դրամների հիմնական խմբերը կրում են հունարեն, լատիներեն եւ պահլավերեն գրություններ: Հասկանալիորեն, օտար ծագումով դրամները չի կարելի կապել տեղական դպրության հետ, սակայն այդ դրամների լայն կիրառությունը երկրում կարող է ցույց տալ ժողովրդի որոշակի խավերի (թեկուզեւ մասնակի) ծանոթությունը դրանց

մակագրությունների գրերին եւ լեզուներին: Բացի այդ, Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված օտար ծագումով դրամների խմբերը մեկ անգամ եւս ընդգծում են Հայաստանի խաղացած կարեւոր դերը Հին Աշխարհի քաղաքակրթության խաչմերուկներում:

Ամփոփելով^ա մեկ անգամ եւս նշենք, որ օտարների թողած գրային հուշարձանները թեպետ չեն կազմում հայաստանյան դպրության բաղկացուցիչ մասը, սակայն նախամաշտոցյան Հայաստանի պատմության կարեւոր եւ անգնահատելի սկզբնաղբյուրներ են, մանավանդ այն դեպքերում, երբ չունենք տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ տեղացիների թողած վկայագրեր...

Առեղծվածային Ծառումով Եվ Անհայտ Նշանակությամբ Գրային Հուշարձաններ

Հայկական լեռնաշխարհի առեղծվածային ծագումով եւ անհայտ նշանակությամբ գրային հուշարձանները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը բազմաթիվ օրինակներով հայտնի եւ որեւէ համակարգ կազմող նշանագրային հուշարձաններն են: Այս խմբին է պատկանում Հայաստանի երկրորդ սեպագիրը, որը, դատելով նշանների թվից, հավանաբար, եղել է այբուբեն: Մեկ համակարգ են կազմում նաեւ առեղծվածային հսկայանշանները, որոնք հայտնի են Հայկական լեռնաշխարհի շուրջ երկու տասնյակ վայրերից:

Երկրորդ խմբի մեջ կարելի է մտցնել եզակի նշանագրմամբ հուշարձանները, որոնք գուգահեռներ չունեն, թեպետ չի բացատվում, որ հետագա ուսումնասիրությունները պարզեն որեւէ համակարգի դրանց պատկանելը:

Հայաստանի Երկրորդ Սեպաիր Համակարգը (Նոր Սեպաիր Այբուբեն):

Հայաստանը, կազմելով համաշխարհային քաղաքակրթության գլխավոր բնօրրաններից մեկի^ա Առաջավոր Ասիայի մասը, արդեն մատուցել եւ դեռեւս կարող է մատուցել բազմաթիվ անակնկալներ^ա կապված հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրության հետ: Այդպիսի մի իրադարձություն կարող է դառնալ Հայաստանից հայտնաբերված առեղծվածային սեպագիր նոր համակարգի վերծանությունը, որն իր հետ կրերի փոփոխություններ Հին աշխարհի պատմությանը վերաբերող մեր գիտելիքներում:

Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրությունը: Երեւանից Եղվարդ տանող ճանապարհին, Ջովուսի գյուղի հարեւանությամբ, Հրազդան գետի աջ ափին պահպանվել են կիկլոսյան ամրոցի մնացորդներ^ա մի քանի հարյուր դամբարաններից բաղկացած դամբարանադաշտով, որից ներքեւ, Հրազդանի կիրճին հակված հրվանդանի վրա պահպանվել է վաղ միջնադարյան կիսավեր ամրոց, ինչը ցույց է տալիս, որ հնավայրում կյանքը հարատեւել է նաեւ այդ ժամանակաշրջանում: Հնավայրի ուսումնասիրությամբ զբաղվել են Պ.Չարկովսկին, Մ.Չաքարյանը, Է.Ռյոսլերը, Բ.Պիոտրովսկին, Հ.Մարտիրոսյանը, Ս.Եսայանը, Կ.Քուշնարյովան եւ ուրիշներ: Հնավայրի մի քանի հարյուր դամբարաններից

հայտնաբերված նյութերը (խեցեղեն, մետաղյա զենքեր, պերճանքի առարկաներ եւ այլն) թվագրվում են միջին, ուշ բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջաններով (Ք.ա. XXIV-IX/VIII դարեր): Կիկլոպյան ամրոցը թվագրվում է վաղ երկաթի դարով (Ք.ա. XII-IX/VIII դդ.):

Ամրոցի պատմական անունը, ցավոք, չի պահպանվել: Ժողովրդի մեջ այն հայտնի է 'Կարմիր բերդ' անվամբ: Հնագիտական գրականության մեջ դամբարանադաշտը հայտնի է նաեւ մոտակա Թագաքենո գյուղի անունով, որը եւս որեւէ կապ չունի ամրոցի պատմական անվան հետ:

Հնավայրում առկա առեղծվածային սեպագիր արձանագրության մասին գիտական գրականության մեջ առաջին հրապարակումը եղել է 1976 թվականին Պատմա-բանասիրական հանդեսում: Երկրաբան Հայկ Ազիզյանը, ներկայացնելով համառոտ մի հաղորդում, համապատասխան մասնագետների ուշադրությունը հրավիրեց սեպագիր հուշարձանին^ա որոշելու արձանագրության լեզուն եւ ժամանակագրությունը^ա հատուկ նշելով, որ այն կրող քարը դրված է ոչ թե վաղ միջնադարում կառուցված կրաշաղախով պատի, այլ ավելի հին^ա կիկլոպյան անշաղախ պատի շարվածքում:

Դժբախտաբար, հետագա տարիներին այս արձանագրությունը ուշադրության չարժանացավ: Առանց որեւէ հիմնավորման^ա այն բանավոր գրույցներում պիտակվում էր կեղծ, թերեւս, միայն այն պատճառով, որ սեպագրի նման տեսակ աշխարհի ոչ մի տեղում հայտնի չէր: Թե որքան անհիմն ու չարդարացված է նման մոտեցումը, կարծում ենք, կարիք էլ չկա հանգամանորեն բացատրելու. այդպիսի տրամաբանությամբ կեղծ՝ պետք է համարվեին աշխարհի բոլոր գրային համակարգերի նորահայտ առաջին հուշարձանները:

Արձանագրությունն ուսումնասիրելու նպատակով եղանք հնավայրում: Ինչպես նկարագրված էր Հ. Ազիզյանի 1976 թվի հաղորդման մեջ, արձանագրված քարը (լուսանկարը եւ գծանկարը տե՞ս նկ.1) գտնվում է կիկլոպյան ամրոցի մուտքի շարվածքում^ա ոչնչով չտարբերվելով մյուս քարերից (բացի արձանագրված լինելուց):

Արձանագրությունը փորագրված է գորշ տուֆե քարի վրա, որն ունի 155սմ լայնություն, 79սմ բարձրություն, իսկ հաստությունը տատանվում է 75-88սմ միջեւ: Բաղկացած է երեք հորիզոնական տողերից, որոնցից առաջին երկուսը գրված են քարի գրեթե ողջ լայնությամբ: Երրորդ կարճ տողը (10 սեպանիշ) մեկ երկար հորիզոնական սեպագծով անջատված է վերին երկուսից՝ զբաղեցնելով քարի միայն կենտրոնական շրջանը: Առաջին տողի երկարությունը 122սմ է, երկրորդը՝ 131սմ, երրորդը՝ 30սմ: Երեք տողերի ընդհանուր բարձրությունը 37սմ է:

Սեպանշանները չափերով շատ ավելի մեծ են Հայաստանում լայն տարածում ունեցող բիայնական (ուրարտական) սեպագիր նշաններից: Երակշռում են ուղղահայաց, դեպի վար ուղղված սեպանշանները: Ընդ որում, արտաքին տեսքով դրանք նման են ոչ թե միջագետքյան մեխանման նշաններին, այլ բիայնական սուրանկյուն-եռանկյունու տեսք ունեցող սեպագրերին, որպիսիք առաջին անգամ հայտնի են Վանի թագավորությունում, իսկ վերջինիս անկումից հետո^ա Աքեմենյան աշխարհակալությունում:

Քարին փորագրված է ընդհանուր առմամբ 90 մեծ ու փոքր սեպանիշ:

Արձանագրության ուշադիր զննումը եւ նշանացանկի կազմումը ցույց են տալիս, որ արձանագրված են շուրջ երկու տասնյակ նշաններ, որոնցից մի քանիսը կրկնվում են մինչեւ վեց անգամ (նշանացանկը տե՞ս աղ.1): Ստույգ չենք նշում նշանների թիվը, քանի որ կան նշանների հնարավոր համակցություններ, որոնք կրկնվում են մի քանի անգամ, եւ դժվար է ասել՝ գործ ունենք մեկ բաղադրյալ նշանի, թե մի քանի պարզ նշանների հետ (տե՞ս նշանացանկի երկրորդ մասը):

Նշանների կազմության սկզբունքը բավականին պարզ է. այդ տրամաբանությամբ էլ կազմել ենք ներկայացվող նշանացանկը: Ամենաբարդ նշանը քառաբաղադրիչ է:

Արձանագրությունը փորագրելուց առաջ նախօրոք տողագծում չի կատարվել, փոքր նշանները զետեղված են տողի ինչպես վերին, այնպես էլ միջին ու ստորին մասերում, իսկ որոշ նշաններ^ա տողից վեր: րության ուղղությունը, դատելով հորիզոնական դիրք ունեցող երկար սեպանշանների դիրքից, ուղղված է եղել ձախից աջ, այսինքն՝ ունեցել է նույն ուղղությունը, ինչ սեպագրի բոլոր հայտնի տեսակները (այդ թվում^ա Հայկական լեռնաշխարհում կիրառված ասուրա-բաբելոնյան եւ բիայնական (ուրարտական) սեպագրերը): Արձանագրության գրաբանական վերլուծությունը (գրության ուղղության, նշանների կրկնության հաճախականության, դրանց մոտավոր թվի, դիրքի, կազմության սկզբունքի եւ այլնի պարզաբանումը) ցույց է տալիս, որ այն լիովին համապատասխանում է գրային մտածողության համընդհանուր, այդ թվում^ա Հին աշխարհի սեպագիր համակարգերում ընդունված օրինաչափություններին: Այսինքն^ա չկա որեւէ հիմք արձանագրությունը կեղծ՝ որակելու համար:

Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրությունը: Եռատող արձանագրության մեջ շուրջ երկու տասնյակ նշանների կիրառությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գործ ունենք սեպագիր այբուբենի հետ: Մինչ օրս հայտնի են երկու սեպագիր այբուբեններ, որոնք ստացվել են բառա-վանկային սեպագրության պարզեցման շնորհիվ^ա ուգարիթյանը (Ք.ա. XIV-XIII դդ.) եւ աքեմենյանը (Ք.ա. VI-IV դդ.): Վանի թագավորության սեպագիր համակարգը եւս ստացվել է միջագետքյան սեպագրության (շուրջ 600 նշանից բաղկացած բառա-վանկային համակարգի) պարզեցման արդյունքում, սակայն չի հանգել այբուբենի^ա մնալով բառա-վանկային համակարգ: Թե ինչու Հայաստանում հայտնաբերված սեպագիր այբուբենը չի ստացել լայն կիրառություն, դժվար է ասել:

Ութր ժամանակաշրջանով կարելի է թվագրել արձանագրությունը:

Ինչպես նշվեց, դեռ մեզանից առաջ ուշադրության էր արժանացել արձանագրության^ա կիկլոպյան ամբողջ շարվածքում գտնվելը, ինչը կողմնորոշում է մեզ դեպի Ք.ա. XII-IX/VIII դարերը: Վաղ միջնադարով թվագրումը քիչ հավանական է, քանի որ Հայաստանում սեպագիրը դադարում է կիրառվելուց Ք.ա. VII դարից, իսկ Ք.ա. III դարից գործածվում են հունական ու արամեական, Ք.հ. V դ. սկզբից^ա հայկական այբուբենները: Սեպագիր այբուբենի

ստեղծման ժամանակաշրջանի առավել հավանական թեկնածուն կիկլոպյան ամրոցի թվագրումն է: Չօգուտ այդ կարծիքի կարող է խոսել արձանագրության³ ամրոցի մուտքի պատի մեջ դրված լինելը, ինչից կարելի է ենթադրել նաև վերջինիս³ ամրոցի հիմնադրման վկայագիր լինելը: Այդ դեպքում քննվող սեպագիր այբուբենը ժամանակագրորեն կընկնի ուգարիթյանի եւ աքեմենյանի միջեւ:

Եթե հաստատվի մեր եզրակացությունը³ կապված ամրոցի հիմնադրման հետ, կարելի կլինի անել դրանից բխող այլ ենթադրություններ, որոնք հետագայում կարող են թե՞ հաստատվել, թե՞ մերժվել: Երկու տողերը երրորդից առանձնացված են մի երկար սեպագծով, որի տակ առկա է համառոտ մի գրություն: Կարելի է ենթադրել, որ առանձնացվածն ամրոցի անունն է: Ցավոք, մեզ հասած սկզբնաղբյուրներում (որքան մեզ հայտնի է) չի պահպանվել Կարմիր բերդի պատմական անվանումը, ինչը օգտակար կլիներ վերծանության ընթացքում: Նշենք ուշագրավ մի պահ, որը գուցե ոգնի հետագայում բացահայտումներ կատարելու:

Նշանացանկի վերջում բերված հնարավոր համակցությունը կրկնվում է եւ՞ առաջին, եւ՞ երրորդ տողերում: Եթե ենթադրենք, որ վերջինս ամրոցի անունն է, որը կարող էր կազմվել իր հիմնադիր արքայի անունով, ապա առաջին եւ երրորդ տողերում կրկնվողը կարող է լինել հենց նրա անունը:

Հրազդանի եւ Նախիջեւանի նույնատեսակ արձանագրությունները: Կարմիր բերդի արձանագրության կեղծ լինելու ենթադրյալ միտքն իր ուժն ավելի կորցրեց, երբ սեպագրագետ Հովհաննես Կարազյոզյանից տեղեկացանք, որ ներկայումս Հրազդան քաղաքի սահմաններում գտնվող Մաքրավանքի հուշարձանախմբի տարածքից գտնվել է նույնատեսակ սեպագիր արձանագրության մի բեկոր (նկ.1), որը ժամանակին հայտնաբերել էր հանգուցյալ արձակագիր Սուրեն Շտիկյանը:

Հ. Կարազյոզյանը մեզ տրամադրեց արձանագրության նույն չափերով պատճենը (արված Սուրեն Շտիկյանի ձեռքով), որն ուղղակիորեն հիշեցնում էր Կարմիր բերդի արձանագրությունը (հատկապես նշանների չափերի ու տեսքի առումով):

Առայժմ մեզ հայտնի նույնատեսակ երրորդ սեպագիր արձանագրությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության սահմանին մոտ գտնվող Ֆերհաթ Էվի (Ուրախության տուն) կոչվող վայրում:

Այն փորագրված է գետնից վեր խոյացող ժայռի վրա, որի մեկ այլ կողմից բացվում է ուրարտական ժամանակաշրջանին բնորոշ ժայռափոր դամբարան: Այս արձանագրությունը եւս իր չափերով եւ նշանների տեսքով լիովին տարբերվում է բիայնականներից: Եռատող արձանագրության երկարությունը 3,4 մետր է, բարձրությունը³ 60 սանտիմետր: Տողերի լայնությունը 15սմ է, միջտողային հեռավորությունը³ 5սմ: Նշանների երկարությունը 11-11,5սմ է: Դատելով նկարից³ այստեղ եւս գերակշռում են երկար ուղղահայացները: Արձանագրության ջնջված մասերում կան ուշ շրջանի փորագրումներ սլավոնական (կիրիլիցա) այբուբենի տառերով, որոնց իմաստը եւս պարզ չէ:

Հասկանալի պատճառով առայժմ հնարավորություն չունենք ուսումնասիրելու այդ խիստ ուշագրավ հուշարձանը (մեր ձեռքի տակ եղած լուսանկարները, ցավոք, նման հնարավորություն չեն տալիս), ինչը, կարծում ենք, առաջիկայում լուծելիք խնդիր է:

Այսքանով առայժմ սահմանափակվում են մեր նախնական դիտարկումները, որոնք ի մի բերելով կարելի է անել հետևյալ եզրահանգումները. ա) Հայաստանում առկա է նոր սեպագիր համակարգ, որը լիովին տարբերվում է մինչ օրս աշխարհում հայտնի սեպագիր մյուս համակարգերից: Կասկածից վեր է, որ այս սեպանշանային համակարգի նշանները չեն կրկնում միջագետքյան սեպագրերին: Նշենք, որ Կարմիր բերդից հայտնաբերված հնագիտական նյութերում առատորեն հանդիպում են սեպաձեւ գարդանախշեր (նկ.2), եւ սեպերով գրանշաններ ստեղծելը կարող էր լինել ոչ միայն Միջագետքի ազդեցության արդյունք, այլեւ տեղական մտահղացում; բ) այն, ամենայն հավանականությամբ, եղել է սեպագիր այբուբեն; գ) դատելով փաստերից՝ գրային համակարգը կարող էր ստեղծվել Ք.ա. 12-9/8-րդ դարերում, թեեւ չի բացառվում թվագրման հնարավոր այլ տարբերակ; դ) Կարմիր բերդի արձանագրությունը կարող է վերաբերել ամբողջ հիմնադրմանը, իսկ առաջին եւ երրորդ տողերում կրկնվող նշանախումբը լինել հիմնադիր-արքայի անունը:

Բավական մեծ հեռավորության վրա նույնատեսակ երեք արձանագրությունների առկայությունը մղում է մտածելու նոր գրային համակարգի գոյության կամ գոնե նման մի համակարգ ստեղծելու փորձի մասին: Հետագա ուսումնասիրությունները կարող են հանգեցնել գրահամակարգի վերձանությանը, ինչը մեծ արժեք կունենա ոչ միայն հայագիտության, այլեւ գրաբանության համար ընդհանրապես, վեր հանելով գրատեսակներից ամենակատարյալին՝ այբուբենին անցման առաջին փորձերից մեկն աշխարհում, որը կատարվել է Հայաստանում:

Առեղծվածային Ծառումով Եվ Անհայտ Նշանակությամբ Րային Հուշարձաններ Առեղծվածային Հսկայանշաններ

Ի տարբերություն ողջ շարադրանքի ընթացքում վկայակոչած հուշարձանների, որոնց գրային նշանակությունը կասկածից վեր է, այս բաժնում ներկայացվելիք նշանների նպատակադրումն անգամ շատ հարցերում մնում է անհայտ ու անհասկանալի:

Դեռեւս XIX դարավերջին եւ XX դարասկզբին ուշադրություն էր դարձվել ժայռերի մեջ փորված խոշոր չափեր ունեցող նշաններին: Իտական գրականության մեջ առաջինը հիշատակվեցին Արտամետի (թուրքերեն աղավաղմամբ՝ Էդրեմիտ) եւ Հոռոմի ժայռափոր նշանները: XX դարում կատարված ուսումնասիրությունների արդյունքում համանման ժայռափոր նշաններ հայտնաբերվեցին Հայկական լեռնաշխարհի մեկ ու կես տասնյակ հնավայրերից՝ Աթաբինդի գյուղի մոտակայքից (նկ.1), Անձավից (թուրքերեն աղավաղմամբ՝ Անզաֆ, նկ.2), Արտամետից, Արփաչայից, Բագառիճից (թուրքերեն աղավաղմամբ՝ Փեկեռիչ), Բահչեջիքից, Բաստամից (բիայն. Ռուսայի փոքր քաղաք), Դելիչայից, Խարբերդից (թուրքերեն աղավաղմամբ՝ Հարփուր), Քուհ-է Չամբիլից, Հայկաբերդից (բիայն. Մարդուրիխինիլի, ներկայումս՝ Չավուշ

թեփե հնավայր), Հոռոմից (նկ. 3), Մաղարա թեփեից, Չելեբիբաղիից, Վանա բերդից (բիայն. Տուշպա) եւ Մեծամորից:

Հսկայանշաններով մինչ օրս հայտնի ամենահարուստ (30-ից ավելի նշաններ)

Աթաբինդի հուշարձանը գտնվում է Արածանիի ակունքների շրջանում:

Ժայռափոր հսկայանշանների հավաքման եւ ուսումնասիրության ասպարեզում ամենամեծ աշխատանքը կատարել է Օ. Բելլին, որը, հավաքելով տասներեք հնավայրերի նյութերը (բացի Հոռոմից, Մեծամորից եւ Արփաչայից), 93 նշանները բաժանում է ութ խմբի^ա շրջանակներ (28 հատ), առվակներ կամ ակոսներ (7 հատ), մանգաղի (4 հատ), ձեռնափայտի (3 հատ), Վ-ի (16 հատ), Ս-ի (11 հատ), հայելաձեւ շրջված Շ-ի (3 հատ) եւ անորոշ (21 հատ) տեսքով նշաններ: Տպավորիչ են նշանների չափերը: Դրանք քարերի մեջ փորված են 4-30սմ խորությամբ, ունեն 6-30սմ լայնություն, իսկ նշանների երկարությունը տատանվում է 0,7-ից մինչեւ 3 մետր (տե՞ս, օրինակ, նկ.4):

Օ. Բելլին դրանք թվագրում է Վանի թագավորության ժամանակաշրջանով^ա ենթադրելով այդ հուշարձանների կապը ջրի, հնարավոր է նաեւ^ա անդրշիրիմյան աշխարհի պաշտամունքի հետ:

Մեծ հավանականությամբ ընդունելով հսկայանշանների պաշտամունքային նշանակության մասին կարծիքը նշենք, որ չի կարելի դեռեւս լուծված համարել դրանց թվագրման հարցը^ա ելնելով միայն բիայնական ամրոցների մոտիկությունից: Բացի այդ, նշանների ուսումնասիրության եւ դրանց իմաստի ըմբռնման համար անհրաժեշտ է (առանձնացումից ու խմբավորումից բացի) դրանց խմբային տեսարանների ուսումնասիրությունը^ա որոշակի հեռավորությունից եւ բարձրությունից կատարված դիտարկումներով, ինչպիսիք, որքան մեզ հայտնի է, դեռեւս չեն կատարվել:

Ավելացնենք, որ նման ժայռագիր հսկայանշանները բնորոշ են միմիայն Հայկական լեռնաշխարհին, եւ դրանց հետագա ուսումնասիրությունն, անշուշտ, կարող է բերել մեր նախնիների աշխարհընկալումների նորանոր էջերի բացահայտման... ԵԶԱԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՂ ՀՈՒՇԱԲԱՆՆԵՐ Առեղծվածային ծագումով եւ անհայտ նշանակությամբ հուշարձանների երկրորդ (եզակի օրինակներով հանդիպող) խմբին են պատկանում ցլի պաշտամունքի տեսարան ներկայացնող քանդակապատկերը (որի ներքին մասում առկա է երկտող արձանագրություն, սակայն սկզբնաղբյուրի տպագրական անբավարար որակի պատճառով հնարավոր չէ ստույգ պատկերացում կազմել գրանշանների մասին, նկ. 5), Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղից հայտնաբերված նշանագրված քարակոթողը (նկ. 6), Սյունիքի Բաղաբերդ ամրոցի պեղումներից գտնված եւ III-IV դարերով թվագրվող նշանագրված քարը (նկ. 7) եւ այլն:

Առանձին արձանագրություններին անդրադառնալը չի մտնում ներկա ակնարկաշարի խնդիրների մեջ, ուստի այստեղ կանգ չենք առնի դրանց վրա: Թեպետ մեր այսօրվա ունեցած գիտելիքների շրջանակում այս արձանագրությունները զուգահեռներ չունեն, չի բացառվում,

որ հետագա ուսումնասիրությունները ցույց տան դրանց՝ որեւէ (զուցեւեւ մասամբ հայտնի) համակարգին պատկանելը:

Հստակ Չթվարվող Հուշարձաններ

Նշանագրեր վիշապաքարերի վրա: Վիշապաքարերը սովորաբար թվագրվում են նախաբխայնական դարաշրջանով՝ Ք.ա. III-II հազարամյակներով, ուստի հստակորեն չի կարելի ասել՝ դրանց նշանները պետք է դասվեն վաղբրոնզեդարյան նշանագրությաւն, թե՛ գծային գրերի մեջ:

Մեզ հասած վիշապաքարերի մեծամասնության վրա առկա են միայն պատկերաքանդակներ: Սակայն կան նաեւ նշանագրված վիշապ-կոթողներ: Դրանցից հատուկ հիշատակելի են Ջավախքում գտնվող անձայի (նկ.1ա) եւ եղամա լեռներից Երեւան տեղափոխված ու ներկայումս Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի բակում գտնվող (նկ.1բ) վիշապաքարերը: Վերջինս որեւէ տեղ հրատարակված չէ: Եղամա լեռներից փոխադրված լինելու մասին տեղեկացանք Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն Ճարտարապետ Աշոտ Բիգորյանից:

Վիշապաքարերի, Ք.ա. III-II հազարամյակների հնագիտական իրերի նշանների եւ միջնադարյան մատյաններում պահպանված նշանների ընդհանրությանը ուշադրություն է դարձրել Հ.Մարտիրոսյանն իր աշխատություններում:

Վիշապաքարերի պատկերների եւ նշանագրերի լիակատար ցանկ, ինչը մեծապես կնպաստեր եւ՞ մեր խնդրին, եւ՞ այդ կոթողների իմաստաբանության լիակատար ըմբռնմանը, դեռեւս չի հրատարակվել: Ներկայումս Հայաստանի վիշապ-կոթողների մասին ամբողջական ժողովածու-ուսումնասիրություն է պատրաստում հրատարակության Էմմա Խանգաղյանը, ինչը կարելու է նպաստ կլինի վերոնշյալ խնդիրների լուծման ճանապարհին:

Օձապատկեր գերեզմանաքարեր: Առանձնահատուկ ուշադրության արժանի այս հուշարձանների հայտնաբերման պատիվը պատկանում է Ճարտարապետ Աշոտ Բիգորյանին: 1990թ. նա հրատարակեց Աբովյանի ենթաշրջանի Բալահովիտ գյուղում հայտնաբերված երկու նշանակիչ շիրմաքարերը (նկ.2), իսկ վերջերս մեզ տեղեկացրեց, որ Ավանի գերեզմանոցում, Երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի հարեւանությամբ կան համանման գերեզմանաքարեր՝ տրամադրելով մի լուսանկար (նկ.3): Ժայռապատկերաբան Կ.Թոխաթյանի ընկերակցությամբ լինելով նշված տեղում՝ գտանք յոթ օձապատկեր գերեզմանաքարեր: Այսպիսով մեզ հայտնի դարձան ինը նման հուշարձաններ:

Այս հուշարձանների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ միջնադարյան հուշարձաններ լինելով՝ դրանք պատկերագրության մտածողությամբ ակնհայտ նախաքրիստոնեական բնույթի են: Անգնե աչքով էլ նկատելի է այս քարակոթողների պատկերների եւ նշանների ընդհանրությունը Մեծամորի, Կաքավաձորի, Կարմիր բերդի նախաբխայնական ժայռափոր հուշարձանների հետ:

Ուժւմ են պատկանել այս շիրմաքարերը. նախաքրիստոնէական քրմական տների շառավիղներին, միջնադարյան աղանդավորներին, թե՛ բոլորովին անհայտ այլոց: Դժբախտաբար, գերեզմանաքարերից շատերը տեղաշարժվել են մոտակայքում շինարարական աշխատանքներ կատարելու արդյունքում, այլապես դրանց պեղումները կարող էին մի շարք լուսաբանումներ բերել մեզ անհայտ մի շարք հարցերում:

* * *

Այսքանով չի ավարտվում հստակ թվագրություն չունեցող հուշարձանների ցանկը:

Այդ շարքում կարելի է հիշատակել, օրինակ, Քասախի կիրճում՝ Կարմիր քարանձավից՝ դեպի եղամավան բարձրացող ճանապարհին մեծ քարաբեկորի վրա պատկերված մենանշանը (նկ.4), որը մեր ուշադրությանն է հրավիրել հնագետ Բորիս ասպարյանը: Որոշակիություն չունենք նաեւ Ագարակի ժայռափորագիր նշանների (նկ.5) թվագրության հարցում: Բացի այդ, թեպետ մենք գծային գրով արված արձանագրությունների շարքում հիշատակել ենք նաեւ Մեծամորի, Կաքավաձորի եւ Կարմիր բերդի բացօդյա ժայռաբեկորների փորագրությունները, որոշ անհստակություն ունենք դրանց նշանների թվագրության հարցում:

Հայկական մեհենագրության հետագա համակողմանի ուսումնասիրությունը, կարծում ենք, այլ հարցերի թվում վերջնական լուծում կտա նաեւ ժամանակագրության խնդիրներին:

Հայկական Մեհենաբերի Որձաձությունը

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՌՉԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Քրիստոնեության ընդունումը աղետաբեր եղավ հայկական մեհենագրության համար, որն ընկալվում էր իբրեւ նախաքրիստոնէական պաշտամունքի հիմնական կրողը, ուստի պատահական չէ, որ, ըստ Ագաթանգեղոսի, քրիստոնյաների կողմից կործանվածներից առաջինը եղավ դպրության Տիր աստծո տաճարը: Դրանով, սակայն, մեհենագրերն իսպառ դուրս չեկան գործաձուլումից:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո սկսվում է մեհենագրության պատմության նոր³ գաղտնի փուլը, որը տարբեր դրսեւորումներով շարունակվում է մինչեւ մեր օրերը: Այդ դրսեւորումներից առանձնապես հիշատակելի են հետեւյալները. ա) Հմայագրեր: Հանդիպում են ժապավենաձեւ եւ գրքային հմայիլներում, որոնք բովանդակում են կախարդական եւ մոգական նշանակությամբ աղոթքներ, հմայանքի, թովչանքի բանաձեւեր եւ նշանագրեր (Մատենադարանում պահվող հմայիլներից երեքի նշանագրերի հատվածները տե՞ս նկ.1): Սրանք գալիս են նախաքրիստոնէական ժամանակներից, եւ պատահական չէ, որ հայ եկեղեցին իր գոյության ողջ ընթացքում եռանդագին պայքարել է հմայիլների եւ հմայագրության կիրառման դեմ, սակայն այդ երեւոյթն առկա է նաեւ մեր օրերում (թեպետ այդ նշանների իմաստը օգտագործողներից եւ ոչ մեկը չէր հասկանում): Հմայագրերը համապարփակ ուսումնասիրության դեռեւս չեն ենթարկվել, սակայն Լ. Խաչիկյանի կողմից հրատարակված հմայական նշանագրերի ցանկի (որը կազմել է ընդամենը ութ ձեռագրերից

քաղելով, իսկ դրանց թիվն անհամեմատ մեծ է) ուսումնասիրությունն իսկ ցույց է տալիս դրանց կապը հայկական մեհենագրության հետ (հմայագրերի համադրումը հայկական մեհենագրության մյուս փուլերի նշանների հետ տե՞ս աղ.1): Հմայագրերը վերծանված չեն, սակայն դրանց մեկնաբանմանն օգնում են մեսրոպատառ հայերենով գուգահեռ գրված աղոթքներն ու բացատրագրերը, որոնցից իմացվում է տվյալ հմայիլի բովանդակությունը: Ըստ այդմ, հմայագրերի իմաստային մեկնաբանման փորձ, որքան մեզ հայտնի է, դեռևս չի կատարվել: Բ)՝ Նշանագիրք իմաստոնց: Քրիստոնեական դարաշրջանում հայկական մեհենագրության դրսևորման կարևոր արտահայտություններից մեկը միջնադարյան հայկական մատյաններում նշանագրերի ցանկերի առկայությունն է, որոնցում ամեն նշանի դիմաց տրվում է նրա բացատրությունը (տե՞ս, օրինակ, նկ.2): Նշանագրերի ամենամեծ ժողովածուն առայսօր կազմել է Հր.Աճառյանը, դրանց ուսումնասիրության գործում կարևոր ներդրում է ունեցել նաև Ա.Աբրահամյանը: Նշանացանկերը կարելի է օգտագործել հայկական մեհենագրության վերծանության ընթացքում որպես օժանդակ աղբյուր, սակայն հարկավոր է դրանց նկատմամբ ունենալ խիստ զգուշավոր մոտեցում՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Նախ, դրանց մեջ մեծ թիվ են կազմում մաշտոցյան այբուբենի հիմամբ ստեղծված պարզ ու փակագիր համառոտագրություն-նշանները, որոնք ոչինչ չեն տալիս մեհենագրության վերծանությանը:

Հր.Աճառյանն իր հավաքած 509 նշանագրերից 332-ը համարում է մաշտոցյան տառաձևերից առաջացած: Ա.Աբրահամյանի կատարած քննությունը ցույց է տալիս, որ նշանագրերի ցուցակներ ունեցող ձեռագրերը հստակորեն բաժանվում են երկու խմբի, որոնք նա պայմանականորեն կոչում է կիլիկյան՝ եւ Երզնկայի՝

Առաջին խմբի նշանագրերի հիմնական մասը ստեղծված է մաշտոցյան տառերից, մինչդեռ երկրորդի գերակշիռ մասը (ավելի քան 180 գաղափարագիր) կապ չունի հայկական այբուբենի հետ եւ բազմաթիվ գուգահեռներ ունի հին աշխարհի մի շարք գրային համակարգերում (հմայագրերի եւ գաղափարագրերի համադրումն ըստ Ա. Աբրահամյանի՝ աղ.2): Երկրորդ՝ պետք է հաշվի առնել, որ դրանց իմաստները կարող էին փոփոխություն կրել՝ հարմարվելով նոր, քրիստոնեական միջավայրի մտածողությանը: Երրորդ՝ պահպանելով իմաստը՝ նշանը կարող էր կոչվել նոր, օտար լեզվից փոխառյալ բառով, իսկ հնում գործածված տերմինը՝ մոռացվել: Այս հանգամանքը կարևոր է հատկապես վանկագրության (հնչյունագրության) բացահայտման տեսանկյունից, քանի որ սկզբնահնչյունության (ակրոֆոնիայի) կանոնի համաձայն՝ որեւէ բառ արտահայտող նշանը վանկային գրության մեջ ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (մասը), ուստի կարևոր է իմանալ ամեն մի բառ-գաղափարագրի ճշգրիտ հնչողությունը: Եվ, վերջապես, դարեր շարունակ արտագրվելու հետեւանքով նշանների տեսքը կարող էր զգալի փոփոխության ենթարկվել: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելու պարագայում միայն նշանագրերի ցանկերը կարելի է օգտագործել իբրև վերծանության օժանդակ աղբյուր: գ) Արհեստագործ վարպետների նշաններ:

Պատկերագրության զարգացած փուլի՝ գաղափարագրության դրսևորումներից մեկը դրոշմների կամ տոհմական նշանների ի հայտ գալն էր: Դրանք ներկվում, խազվում կամ

փորագրվում էին տների պատերին, իսկ այդ նշանների առկայությունը որեւէ իրի, ապրանքի վրա ցույց էր տալիս վերջինիս պատկանելությունը տվյալ տան կամ տոհմի անդամին: Այդպես ծագեցին արհեստագործ վարպետների նշանները, որոնք դարեր շարունակ անփոփոխ կրում էին նույն տոհմի ներկայացուցիչները (հին եւ միջին դարերում արհեստները եւս ժառանգական էին): Միջնադարի հայկական շինությունների պատերին պահպանվել են մեծ թվով վարպետանշաններ (նկ.3), որոնց մի մասը նույնությամբ առկա է նաեւ Վանի թագավորության ժամանակաշրջանում (աղ.1): դ) Նշանագրեր քրիստոնեական տաճարների պատերին: Քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի ճակատագրում նկատվում է ուշագրավ մի երեւոյթ եւս: Այդ նշանագրերը հայտնվում են քրիստոնեական տաճարների պատերին: Ընդ որում, պարզվել է, որ եկեղեցիների կառուցման ընթացքում ոչ թե օգտագործվել են նախապես նշանագրեր կրող քարեր, այլ նշանագրերը քանդակվել են կառուցումից հետո: Այսինքն² մենք գործ ունենք քրիստոնեական դարաշրջանում նախաքրիստոնեական նշանագրերի կիրառության փաստերի հետ:

Մեր ոչ վերջնական տվյալներով, միայն Հայաստանի Հանրապետության տարածքում այդ երեւոյթը նկատվում է Երեւոյքի (Մդ.), Պտղնավանքի (Մդ.), Սբ. Հռիփսիմե (Մդ.), Սբ. այանե (Մդ.), Արուճի (Մդ.), Բջնիի Սբ. Աստվածածին (Մդ.) տաճարների, Սելիմի քարավանատան եւ Դիլիջանի եկեղեցիներից մեկի պատերին:

Այս երեւոյթն, անհասկանալիորեն, անուշադրության է մատնվել: Այն կարող էր չգրավել նաեւ մեր ուշադրությունը, եթե տարբեր եկեղեցիների պատերին հանդիպող նշանները չկրկնվեին եւ նախապես ծանոթ չլինեին նախաքրիստոնեական ժամանակաշրջանից:

Երեւոյքի, Պտղնավանքի եւ Բջնիի տաճարների կապակցությամբ անդրադառնալով ժայռապատկերներ հիշեցնող նշաններին³ ժայռապատկերաբան Կարեն Թոխաթյանը կարծիք է հայտնում, որ 'սրանք հին, դասական ժայռապատկերներ չեն, սակայն վկայություն են վաղ միջնադարում ժայռապատկերման ավանդույթների հարատեւման':

Մենք հատուկ ուսումնասիրության նյութ դարձրեցինք Պտղնիի, Սբ. Հռիփսիմե, Սբ. այանե, Արուճի տաճարների նշանները: Պտղնավանքում, որը մեզ հայտնի ամենամեծաթիվ նշաններ ունեցող տաճարն է, նշաններով է պատված հյուսիսային պատի արտաքին կողմը (նկ.1 ա եւ բ): Առանձին նշաններ կան հարավային պատի երկու կողմերում (նկ.1 գ):

Սբ. Հռիփսիմե տաճարի բոլոր նշանները պահպանվել են ներսի կողմում (դրսի պատերին պահպանված չլինելը գուցե վերանորոգումների ընթացքում ոչնչանալու հետեւանք է): Ուշադիր գնման արդյունքում մեզ հաջողվեց գտնել տասնմեկ նշան (հատակագիծը՝ պատկերների նշմամբ:

Ինչպես վերոնշյալ երկու տաճարների, այնպես էլ Սբ. այանեի նշանները պահպանվել են ամենահին քարերի վրա: Վերջինիս հյուսիսային պատի դրսի կողմի աջ մասում պահպանված քարերի նշանները հիերոգլիֆ արձանագրության տպավորություն են թողնում (նկ.3 ա): Բացի դրանից, առանձին նշաններ կան նույն պատի կենտրոնում եւ ձախ մասում, ինչպես նաեւ

արեւելյան պատի դրսի երեսին (նկ.3 բ եւ գ): Ակնհայտ է, որ նշանների զգալի մասը չի պահպանվել:

Չորս պատկերանշան է պահպանվել Արուճի տաճարի (նկ.4 ա-դ) եւ մեկ նշան (խոյ)^ա տաճարից ոչ հեռու գտնվող պալատի պատին (նկ.4 ե): Պտղնիի, Սբ.Հովսիմե, Սբ.այանե, Արուճի տաճարների նշանների դասակարգումը եւ համադրումը ցույց են տալիս, որ ամենից շատ գործածվել են 'արեւանշանները' (ընդ որում^ա մի քանի տարբերակով), այժապատկերները եւ դեպի վեր ուղղված նետաղեղ հիշեցնող նշանը: Այս նշանների նախաքրիստոնեական բնույթը, ինչպես նաեւ դրանց քանդակման 'ժայռապատկերային' եղանակը կասկած չեն թողնում, որ դրանց հեղինակները նախաքրիստոնեական ժամանակներից շարունակվող աշխարհայացքի կրողներ են եղել:

Ինչո՞ւ կարող է բացատրվել այս երեւույթը:

Հայտնի է, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուն մեծ դիմադրություն ցույց տվեցին նախաքրիստոնեական հավատքի կրողները, եւ տեղի ունեցած քաղաքացիական պատերազմում զոհվեց 'հույժ քաջամարտիկ Արձան քրմապետը': Քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո էլ նախկին հավատքի կողմնակիցները ժամանակ առ ժամանակ գլուխ էին բարձրացնում. այդ մասին բազմաթիվ վկայություններ կան մեր մատենագրության մեջ: Նախկին կրոնի զգալի տարածում ունեցող գաղափարախոսական հիմնադրույթներն արտահայտվում էին նաեւ աղանդավորական շարժումների տեսքով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է արեւորդիների եւ թոնդրակյան շարժումներին: Հատկանշական է, որ թոնդրակյաններին բնորոշելիս րիգոր Մագիստրոս Պահլավունին գրում է. 'Եւ ահա յայտնի է, զի որոշեալք են եւ անեպիսկոպոսունս եւ անքահանայս շրջին եւ ասեն բանիք, եթե մեք Արամեան գնդէն եմք եւ հաւատով համեմատ նոցա': Եվ չի բացառվում, որ այս նշանների քանդակողները լինեին հենց նրանք կամ հայոց նախաքրիստոնեական հավատքի այլ կրողներ: Ե) Նշաններ դրամների վրա: Մաշտոցի գյուտից առաջ Հայաստանում սեփական գրի ու դպրության մասին տեղեկություններից մեկը պատկանում է Վարդան Արեւելցուն (XII-XIIIդդ.), ըստ որի Լեւոն Մեծ արքայի օրոք (1187-1219թթ.) Կիլիկյան Հայաստանում գտնվել է դրամ^ա հեթանոս հայ արքաների հայերեն գրությամբ: Միքայել Չամչանցը, քննելով Վարդան Արեւելցու այս տեղեկությունը, ենթադրում է, որ այդ գրերը կարող էին լինել բառ ցույց տվող նշանագրեր, որոնք կային հին ձեռագրերում եւ գործածական էին նաեւ իր ժամանակ^ա XVIII դարում: Կիլիկյան դրամների ուսումնասիրությամբ պարզվում է ուշագրավ մի երեւույթ. հենց Լեւոն Մեծի ժամանակներից սկսած կիլիկահայ դրամների վրա հայտնվում են նշաններ, որոնք կապ չունեն ոչ^օ հայկական, ոչ^օ եվրոպական, ոչ^օ Առաջավոր Ասիայում այդ ժամանակաշրջանում գործածված այբուբենների հետ: Մենք հավաքեցինք մինչ օրս հայտնի դրամների նշանները (որոնց թիվը հասնում է չորս տասնյակի) եւ համադրեցինք հայկական մեհենագրության բոլոր փուլերի ու դրսեւորումների գրային միավորների հետ:

Համադրության արդյունքը (աղ. 1) բավական համոզիչ կերպով ցույց է տալիս հայկական մեհենագրության եւ Կիլիկյան Հայաստանի դրամների ժառանգական կապը, որի բացատրման համար խիստ կարեւորվում է Վարդան Արեւելցու վերոհիշյալ հաղորդումը: Նախաքրիստոնէական շրջանից դրամները կամ դրամանման իրերը (երկկողմ կնիքներ, մեդալիոններ եւ այլն) մինչեւ XII-XIII դարերը կարող էին հասնել Հայաստանում պահպանված նախաքրիստոնէական հավատքին ու ավանդույթներին հավատարիմ մնացած համայնքների միջոցով, իսկ նրանց նշանները պետք է որ տեղափոխված լինեն կիլիկյան դրամների վրա^ա առաջին հայ արքաների (կռապաշտ հայկազանց) եւ Կիլիկիո հայ տիրակալների ժառանգական կապն ընդգծելու միտումով: Նման հնարավորության ապացույցի լավագույն օրինակ է Ներսես Շնորհալու կաթողիկոսության շրջանում Հայաստանի հարավ-արեւմտյան Սամոսատ քաղաքում պահպանված արեւորդիների համայնքը, որում կենսունակ էին մնացել նախաքրիստոնէական հավատանքն ու ավանդույթները: գ) Մարմնին դաջված մոզական նշաններ: Ըստ բնահավաք-ազգագրագետ արեգին Սրվանձտյանցի^ա մինչեւ XIX դարի վերջերը Հայաստանի հարավ-արեւմուտքում պահպանվել էր մարմնի տարբեր մասերին մոզական համարվող նշանների դաջումը (նկ. 1): Ակնհայտ է սրանց կապը մեհենագրության հետ: Մեհենական նշանների^ա մինչեւ մեր ժամանակները հասնող կիրառության այս ասպարեզը կարելի է համարել հմայական գրչության դրսևորման մի ձև: է) Նախաքրիստոնէական նշանագրության հարատեւումը հայոց զարդարվեստում:

Զարդանախշերը, սկզբնավորվելով վաղնջական ժամանակներում, գեղագիտականից բացի ունենին նաեւ իմաստային, գաղափարաբանական նշանակություն: Հին ու միջին դարերում արհեստները, որպես օրինաչափություն, փոխանցվում էին ժառանգաբար. նույնպիսի ճանապարհով գոյատեւում էին նաեւ իմաստակիր-զարդանախշերը: Եվ պատահական չէ, որ մի շարք խորհրդանշաններ, որոնք կիրառվել են մեհենագրության մեջ, գոյատեւում են հայոց զարդարվեստում: Տ Հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դառնա իմաստակիր-զարդանախշերի եւ հայկական մեհենագրերի կապը: Այս ուղղությամբ կատարվել են միայն նախնական քայլեր:

Վերջին տարիներին ուշադրություն դարձվեց հայկական գորգարվեստում կիրառված իմաստակիր-զարդանախշերին, ինչի արդյունքում ակնհայտ դարձավ դրանց ծագումնաբանական կապը Հայաստանի ժայռապատկերների, պեղված հնագիտական իրերի (որոնցից հնագույնները թվագրվում են Ք.ա. IV հազարամյակով) եւ միջնադարյան կիրառական արվեստի հուշարձանների նշանների հետ (նկ. 2):

Անդրադարձ է եղել նաեւ գուլպաների ու սոնապանների զարդանախշերին, որում ընդգծվել է դրանց ընդհանրությունը Ք.ա. III հազարամյակի խեցեղենի նշանների հետ:

Անշուշտ, նշվածներով չի սահմանափակվում հայոց կիրառական արվեստում իմաստակիր-զարդանախշերի եւ հայկական մեհենագրերի կապը, ինչը, կարծում ենք, առաջիկայում կդառնա լուրջ ուսումնասիրության առարկա:

Այսքանով առայժմ սահմանափակվում են հայկական մեհենագրության քրիստոնեական դարաշրջանում ունեցած մեզ հայտնի դրսևորումները, սակայն չի բացառվում, որ առաջիկայում հայտնի դառնան նորերը: 1987թ. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանից գտնվել էին երկաթե սրեր ու դաշույններ, որոնցից երեքի վրա կային բազմաթիվ նշաններ: Իրերը գտնողը պետք է դրանք հանձնէր Հայաստանի պատմության պետական թանգարան: Ներկայումս մեզ հայտնի չէ դրանց գտնվելու վայրը: Նման գտածոներ կարող են հայտնի դառնալ հետագայում եւս:

ՆԱԽԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ

ՄԱՍԻՆ

(ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԲԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԻՋՈՑ)

Նախաքրիստոնեական Հայաստանում ստեղծված հայալեզու եւ այլալեզու գրավոր հուշարձանները բնույթով շատ բազմազան են: Ըստ բովանդակության կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

- 1) արքայական արձանագրություններ^ա նվիրված աստվածների պաշտամունքին, 2) ռազմական արշավանքների նկարագրություններ, 3) թագավորական նախնիներին ձոնված գրակիր կոթողներ, 4) թագավորական իշխանության եւ արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ, 5) արքայական հիշատակարաններ քաղաքների ու շինությունների (հատկապես^ա սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին, 6) նոր օրենքներ ու կարգեր սահմանող բնագրեր, 7) արքայական նվիրատվական արձանագրություններ, 8) թագավորական դրամների մակագրություններ, 9) արքայական նամակագրության արձանագրումներ, 10) հոգևոր-պաշտամունքային բազմաբնույթ բնագրեր, 11) ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ, 12) ընծայագրեր, 13) բարոյախրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությաւն) հատվածներ, 14) պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգությաւն) հատվածներ, 15) տապանագրեր (այդ թվում^ա չափածո եղերերգեր), 16) մենանշաններ, 17) դեռեւս անհայտ բովանդակությամբ հուշարձաններ:

Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ խմբերից մի քանիսը ներկայացված են մեկ-երկու բնագրերով միայն: Չնայած թեմատիկ խմբերի բազմազանությանը^ա պետք է ասել, որ դրանցում պակասում են մի քանի տեսակի ստեղծագործություններ, որոնք սպասելի էին սեփական գիր եւ դպրություն ունեցող ժողովուրդների գրականության մեջ: Մասնավորապես, գրեթե բացակայում են գրական ստեղծագործությունները: Սա այն դեպքում, երբ 'Հայկ եւ Բել', 'Արամ եւ Բարշամ', 'Արամ եւ Նյուքար Մադեւ', 'Արամ եւ Պայապիս Քաադեւ', 'Արա եղեցիկ եւ Շամիրամ', 'Տիգրան եւ Աժդահակ', 'Երվանդ եւ Արտաշես', 'Արտաշես եւ Սաթենիկ', 'Արտաշես եւ

Արտավազը՝ եւ այլ վիպասքերը կենսունակ էին մնում նաեւ Մովսէս Խորենացու եւ րիգոր Մագիստրոս Պահլավունու ժամանակներում:

Ուրն է այս երեւոյթի բացատրությունը:

Առանց հարցադրմանը վերջնական պատասխան տալու հավակնության^ա փորձենք տալ երկու հնարավոր պատասխան: Նախ, կար գրով հիշատակության արժանի լինելու

հասկացությունը: Որպէս ասվածի լավագոյն վկայություն կարելի է մտաբերել Պատմահոր թեւավոր խոսք դարձած հայտնի արտահայտությունը. թեպէտ եւ մենք փոքր ածու ենք եւ թվով շատ սահմանափակ եւ շատ անգամ օտար թագավորությունների տակ նվաճված, սակայն մեր աշխարհում էլ քաջության բազում գործեր կան գործված^ա արժանի գրով հիշատակության:

Այսինքն^ա ամեն բան չէր կարելի գրի առնել, քանի որ գիրը սրբազան հասկացություն էր:

Սրանից կարելի է հետեւություն անել, որ կենցաղային կիրառություն ունեցող ստեղծագործությունները (հարսանեկան, ռազմի, աշխատանքային, սգո երգեր եւ այլն) գրի չեն առնվել գրով հիշատակության արժանի չլինելու պատճառով:

Սակայն այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու չեն գրի առնվել դիցապատմական բնույթի ստեղծագործությունները, որոնց մի մասը ողթան վիպասացներից լսել եւ իր կոթողային աշխատանքում գրանցել է Պատմահայրը:

Կարելի էր ենթադրել, որ դրանք գրառվել, բայց ոչնչացվել են քրիստոնեությունը պետական կրոն հռչակելիս, ինչը, սակայն, քիչ հավանական է: Հակառակ դեպքում դրանք տեղ չէին գտնի մեր մատենագիրների երկերում:

Վիպասանական Ավանդույթը Որպէս Բին Փոխարինող Միջոց

Տեւական ընդմիջումից հետո հրապարակում ենք Արտակ Մովսիսյանի հոդվածներից եւս մի քանիսը, որոնցից առաջինը նվիրված է նախաքրիստոնեական Հայաստանում գրային մտածողության մի առանձնահատկությանը:

Բանասերների ուշադրությունն անշուշտ գրված կլինի այն հանգամանքը, որ հինգերորդ դարից մինչեւ արեգին Սրվանձտյանցը որեւէ հայ հեղինակ գրի չառավ՝ Մասնա ծռեր՝ դյուցազնավեպը կամ գոնէ հատվածներ այդ հսկայածավալ ստեղծագործությունից, որում արտացոլված են եւ՞ նախապատմական ժամանակներից ծագող դիցաբանական պատկերացումները, եւ՞ մինչեւ հին ու միջին դարերում տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Չէ՞ որ կարելի էր դրանք գրի առնել մաշտոցյան այբուբենով:

Վիպասացների մասին պահպանված տեղեկությունների համաձայն^ա ժամանակին էպոսը եղել է շատ ավելի մեծածավալ: Հատկանշական է այն, որ հաճախ, երբ մեր բանասացները դիմել են սովորական գյուղացիների^ա էպոսից դրվագներ պատմելու խնդրանքով, վերջիններս հրաժարվել են^ա մատնացույց անելով հատուկ վիպասացներին: Այսինքն, մեր ժողովրդի մեջ առանձնացված էր հատուկ մի դաս^ա վիպասացները, որոնց մենաշնորհն ու

պարտականությունն էր վիպական ավանդույթների պահպանումն ու հաջորդ սերունդներին փոխանցելը:

Դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում վիպասանական ավանդույթի գոյությունը փաստվում է մի շարք տեղեկություններով: Դրանցից հատուկ ուշադրության է արժանի Փավստոս Բուզանդի հաղորդումը Տիրան Արշակունու օրոք (338-350թթ.)

նախաքրիստոնեական հավատքի ու բարքերի վերականգնման մասին. Նրանք սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց հանդեպ փութեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատեւում: Այսինքն՝ վիպասացները պատմում էին ոչ թե սովորական, այլ սրբազան պատմություններ իրենց աստվածների ու նախնիների մասին, որոնց հավատում էին, նրանց մեջ հարատեւում: Դրանում կասկած չի մնում, երբ ծանոթանում ենք Պատմահոր շնորհիվ պահպանված պատառիկներին:

Վերադառնալով գրի սահմանմանը, վերջինիս ծագումը բացատրելով որպես հիշողության եւ կայուն հաղորդակցության միջոց՝ տեսնում ենք, որ նախաքրիստոնեական Հայաստանում վիպասանական ավանդույթը ծառայել է որպես գրին փոխարինող միջոց: Ընդ որում, այդ միջոցով փոխանցվել են սրբազան պատմությունները:

Ինչո՞ւ են մեր նախնիները նախընտրել այդ պատմությունները փոխանցել բանավոր, ոչ թե արձանագրել: Քանի որ այդ մասին չունենք ստույգ բացատրություններ հին եւ միջնադարյան աղբյուրներում, մենք ձեռնպահ ենք մնում ենթադրություններ անելուց: